Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Utöplåp
67-71

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ

ԴԱՍԱՌԱԿԱՆ

1(01)
գ-90
Կ.

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ

ԴԱՍԱՌԱԿԱՆ

թարգմանաբար յօրինեալ

Ի Հ. ԱԻՔՍԵՆՏԻՈՍԷ Վ. ԳՈՒՐԳԵՆԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ.

Հատոր Ե.

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

—

1869

9273

Гос. Публ. Библиотека
С 2082-СОРА
им. А. Герцена
и. Новосибирск

4336
41

L.f 70.

71-2061

Ստեփանոս Զաղոսեան
Սերիերմակ

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՆ ՀԱՄԱՌՕՏ

ԴԱՍԱՌԱԿԱՆ

Ա. Յաղագս առարկայի իմաստասիրուրեան, և այլոց գիտուրեանց հետ ունեցած յարաբերուրեանցն, և իր բաժանմանն։

Առարկայ իմաստասիրուրեան. — *Իմաստասիրուրիւնն է սէր կամ ուսումն իմաստուրեան։ Իմաստուրիւնն է գիտուրիւն գերագոյն պատճառաց, կամ գիտուրիւն սկզբանց։ — Ապա իր առարկայն է պատճառն իրաց։ Հոս գիտուրիւն ըսելով կը հասկընանք իրարու հետ կապուած և կարգաւորած ճշմարտուրեանց կամ ճանաչողուրեանց բովանդակուրիւնն։*

Յարաբերուրիւնքն ընդ այլոց գիտուրեանց. — *Այլ ամէն գիտուրիւնք կրնան չորսի վերածուիլ. այսինքն չափաբերականք, բնաբանականք, պատմականք և աստուածաբանականք։*

Ա. *Չափաբերական գիտուրիւնք նկատեն զնիւթեղէն մարմինս ըստ այնմ տեսուրեան՝ որով հաշուոյ և չափոյ տակ ան-*

կանին։ Իրենց առարկայն է քանակն։ — Իմաստասիրութիւնն ուսուցանէ չափաբերին լաւ բանաւորելու 'ի ձեռն շարաբանութեան, և կը վարժեցնէ զանիկայ վերացումն ընելու։

Բ. Բնաբանական գիտութիւնք նկատեն զնիւթեղէն մարմինս և անոնց կերպաւորութիւններն ու յարաբերութիւնքն ըստ այնմ՝ որով զգայարանաց տակ անկանին։ Իմաստասիրութիւնն հաստատէ զհիմունս բնաբանական գիտութեանց, ցուցանելով զստուգութիւնն արտաքին զգացութեանց և զգոյութիւն մարմնոց։ Ուսուցանէ բնագիտին աղէկ բանավարելու՝ փորձառութեամբ և զննողութեամբ ունեցած ներածութեամբն։ Ցուցանէ նմա զնախկին պատճառ և զվերջնական վախճան նիւթական աշխարհիս և օրինաց որ զեկավարեն զնա։ Վերջապէս բարոյականով ալ ուսուցանէ նմա'ի լաւն վարել զզգալի իրս։

Գ. Պատմական գիտութիւնք բովանդակեն զիրս, մարդկային վկայութեամբ փոխանցեալս առ մեզ։ — Իմաստասիրութիւնն հաստատէ զհիմն պատմութեան ցուցանելով զստուգութիւն վկայութեան մարդկան. ուսուցանէ պատմագրին զճըշմարիտն որոշել 'ի ստոյ, բաղդատութեամբ զանաղան վկայութեանց. օգնէ նմա որոնել զպատճառս անցից՝ աստուածային նախախնամութեամբ և մարդկային ազատութեամբ. ուղղէ զնա առ'ի կշռել զբա-

թոյականութիւն գործոց, և 'ի գործնական հետևանան՝ զորս կուզէ հանել։

Դ. Աստուածաբանական գիտութիւնք նկատեն զճշմարտութիւնս յայտնեալս և զհետևութիւնս նոցին։ — Իմաստասիրութիւնն տայ զպատճառս հաւատալիութեան։ Բանախօսութեամբ հաստատէ զարժէս մարդկային վկայութեանց՝ որք փոխանցեն մեզ զիրս յայտնութեան և զվարդապետութիւնն յայտնեալ. և ուսուցանէ աստուածաբանին յառաջ ածել զեզրակացութիւնսն՝ որք բովանդակին 'ի յայտնեալ ճշմարտութիւնսն. և բնազանցութեամբ ցուցանէ զկարելութիւն ոքանչելեաց՝ որոնց վրայ հիմնեալ է յայտնութիւնն։

Բաժանումն. — Իմաստասիրութիւնն կըրնայ իրեք մասն բաժնուիլ. Բանախօսութիւն, Բնազանցութիւն և Բարոյախօսութիւն։

Ա. Բանախօսութիւնն է արուեստ բարւոք բանավարելոյ. կամ թէ գիտութիւն սկզբանց և կանոնաց ստուգութեան. որ է արուեստ որոշելոյ զճշմարիտն 'ի ստոյ։

Բ. Բնազանցութիւնն է գիտութիւն իմացական էակաց։ Բնազանցութիւնն կամ հանրական է կամ մասնական։

Ա. Հանրական բնազանցութիւնն կամ Էակաբանութիւնն՝ է գիտութիւն էակի ընդհանրապէս, և նախկին սկզբանց։

Բ. Մասնական բնազանցութիւնն նկատէ զզանազան էակս առանձինն առեալ։

Բանին ներքոյ ընկած էակներն են մարմինք, հոգիք և Աստուած. որով մասնական բնազանցութիւնն ալ երեք մասունք կունենայ. ա. Աշխարհախօսութիւն, ուսումն նիւթեղէն աշխարհի։ բ. Հոգեխօսութիւն, ուսումն մարդկային հոգւոյ։ գ. Աստուածախօսութիւն, ուսումն Աստուծոյ ըստ որում՝ պարզ բանիւ մտաց կրնայ ճանչցուիլ։

Գ. Բարոյախօսութիւնն է գիտութիւն բարուց կամ արուեստ բարւոք կեցոյ։

Այս դրած բաժանման կը հետևէին ընդհանրապէս նախնիք։ Իսկ սարդէպասկի յայտագիրն աւելի նոր բաժանմամբ Իմաստասիրութիւնն կը բաժանէ 'ի չորս մասունս որ են Հոգեխօսութիւն, Բանախօսութիւն, Աստուածախօսութիւն և Բարոյախօսութիւն. որուն հետևինք պիտի և մենք։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀՈԳԵԽՕՍՈՒԹԻՒՆ

Բ. Յաղագս հոգեխօսական իրաց, և գիտակցութեան.

Հոգեխօսական իրք կըսուին՝ ինչ որ 'ի հոգւոջ կըլլան. իր զանազան գործողութիւններն, և այլևայլ վիճակներն. օրինակի համար խորհուրդք և կամք գործողութիւնքն են. իսկ ուրախութիւն, տըրտմութիւն, հաճոյք և վիշտք՝ իր վիճակներն։

Իսկ գիտակցութիւն կըսուի այն ներքին զգացութիւնն՝ զոր ունիմք հոգւոյն մէջ անցածներուն վրայ։

Հոգւոյն գործողութիւններէն և վիճակներէն կրնանք ճանչնալ անոր կարողութիւններն. վասն զի զօրութիւն մի իր գործերէն կը յայտնի։

Գ. Յաղագս կարողութեանց հոգւոյ. զգացողութեան, իմացողական կարողութեանց և գործնականութեան։

Հոգին է որ 'ի մարդումս ճանաչէ, կամի և զգայ. և մարդկային ամէն գործողութեանց կենացն սկիզբն է։

Կարողութիւնն է զօրութիւն գործելոյ՝ զոր ըստ կամի գործածեմք, և զոր ուզածնուս պէս իր սեպհական առարկային կը մօտեցնեմք կամ յետս կը դարձնեմք։ — Երկու տեսակ կարողութիւն ունիմք. ոմանք վերաբերին առ հոգին՝ միացեալ ընդ մարմնոյ, իսկ միւսներն մինակ հոգւոյ յատուկ են։ — Առաջնոց արմատն 'ի հոգւոջ է, բայց առանց մարմնոյ չեն գործեր. ասոնք զգացողութեան կը վերաբերին և են ըմբռնողական կամ ախորժական. ըստ որում անոնցմով պարզապէս կընդունիմք զգայարանաց վրայ ինչած տպաւորութիւնքն, և այս կերպով զգացուած առարկայներէն կը հեռանամք կամ կը ձգուինք։ — Ըմբռնողական զգալի կարողութիւնք ընդհանուր անուամբ զգացողիւնք կըսուին։ Իսկ ախորժական զգալի կարողութիւնք ալ կրնան բնազդմունք ըսուիլ։

Միայն հոգւոյ յատուկ կարողութիւնքն իմացողութեան կը վերաբերին, և վերիններուն պէս կամ ըմբռնողականք են կամ ախորժականք, ըստ որում անոնցմով կամ պարզապէս ըմբռնեմք զառարկայս ճշմարիտս կամ իմացականս, և կամ կը ջանամք միացնել զնոսին ընդ մեզ որպէս բարիս, և կամ հեռացնել որպէս չար։ — Այս իմացական ըմբռնողական կարողութիւնքս ընդհանուր անուամբ իմացողութիւն կը կոչուին։ — Իսկ հնոց մտաւորական ախորժակ ըսածին կըսեմք կամեցո-

ղուրիւն։ Այս երկու կարողութեամբքս է որ հոգին է գործնական։

Գործնականութիւնն այն զօրութիւնն է՝ զոր ոմանք յէակաց ունին իրենք իրենց որոշում մի ընելու 'ի ձեռն ներքին ուժոյ մի որ իրենց յատուկ է։ — Ասիկայ ներհակ է կրաւորութեան, որ է գործողութիւն մի կամ շարժում մի ընդունիլ յայլոյ։

Զգացողութիւնն թէ՛ որպէս ըմբռնողութիւն նկատեալ և թէ որպէս ախորժակ՝ պարզապէս կրական է. և հոգին յայնժամ ընդունի զտպաւորութիւնս նիւթական առարկայից 'ի վերայ գործարանաց զգայութեան։

Իմացողութիւնն է միանգամայն կրական և գործնական. կրական այս մտքով, որ ըմբռնելու համար պէտք ունի առարկայի մի, կամ իրօք ներկայ և կամ արգասեօք. իսկ գործնական այս մտքով, որ ինքն է որ զառարկայն ըմբռնէ և ուզածին պէս իրեն ներկայացնէ։

Կամեցողութիւնն ալ նոյնպէս միանգամայն կրական է և գործնական. կրական այս մտքով, որ եթէ հասկացողութիւնն զառարկայն չներկայացնէ՝ չենք կրնար կամել. ըստ առածին. Ոչ ինչ է կամելի թէ ոչ նախագիտեալ։ Այսպէս կամեցողութիւնն 'ի հասկացողութենէ առնու զիւր առարկայն։ Բայց գործնականապէս կընդունի զանիկայ. վասն զի ինքն իրեն և իւր յատուկ զօրութեամբն կորոշէ կամելու զառար-

կայն՝ զոր ներկայացնէ նմա հասկացողութիւնն ։

Հոգւոյն այս այլևայլ կարողութիւններս իրարմէ կը զանազանին նաև իրենց առարկայովն ։ — Զգացողական կարողութեանց առարկայն՝ է էական իմացական, որ եթէ ճշմարիտ է՝ առարկայ է հասկացողութեան, իսկ եթէ բարի՝ առարկայ է կամեցողութեան ։

Դ. Յաղագս զգացողութեան, զգայարանաց, զգայութեանց և զգացմանց.

Զգացողութիւն. — է այն կարողութիւնն զոր ունիմք ընդունելոյ զապաւորութիւնս ներգործեալս 'ի նիւթեղէն առարկայից 'ի վերայ զգայարանաց մերոց ։ — Իրաւ է որ երբ առարկայն ներկայ է՝ չենք կարող չզգալ, չտեսնել, չլսել և այլն. դարձեալ եթէ մեր գործարանքն այսպէս կամ այնպէս զգածեալ են՝ չենք կրնար ուզածնուս պէս զգալ՝ ցաւն կամ հաճոյքն իրարու տեղ փոխանակելով. ուստի զգացողութիւնն աղատ չէ ։ Սակայն որովհետև շատ անգամ կրնանք մեր զգայարանքն իրենց առարկային ուղղել կամ ետ դարձնել՝ ապա կրնամք և պարտիմք ըսել թէ զգացողութիւնն կարողութիւն մի է ։

Զգացողութիւն խառն կարողութիւն մի

է, 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ յառաջ եկեալ։ Իրաւ հիմն 'ի հոգւոջ է՝ բայց չկարէ գործել առանց մարմնոյ. և նմանի երաժշտի որ իր գործին զարնել գիտէ՝ բայց իր հանճարն չկրնար գործածել՝ երբ գործիք չկայ իր ձեռքն։ — Մարմինն՝ հոգւոյն հետ կցորդութեամբն՝ մասնակից է զգացողութեան. որով և կըլլայ զգայուն և ընդունակ տեսանելոյ, լսելոյ, շարժելոյ, վըշտանալոյ, ուրախանալոյ. և այսպէս կը մնայ քանի որ հոգւոյ հետ միացեալ է և անկէց հոգևորեալ։

Զգայարանք. — Զգացողութիւնն հինգ մասնաւոր պաշտամունք ունի՝ որ հինգ որոշ գործարանքով կը գործեն. և սոնք կըսուին հինգ զգայարանք։ — Այս զանազանութիւնս իւրաքանչիւր գործարանի յատուկ եղած առարկայէն կառնուի. որք են

Զգացողութիւն	Պաշտամունք	Գործարան	Առարկայ
Տեսողութիւն	Տեսանել	Աչք	Գոյնք
Լսողութիւն	Լսել	Ականջք	Ձայնք
Հոտառութի	Հոտոտել	Ռնգունք	Հոտք
Համառութի	Ճաշակել	Բիմք	Համք
Շօշափողութի	Շօշափել	Մարմին բովանդակ	Ձևք

Սակայն ամէն զգացութիւնք և պաշտամունք կրնան վերածուիլ 'ի շօշափողութիւն. այսպէս թէպէտ և աչքն ոչ շօշա-

փեն զառարկայն զոր տեսանեն 'ի հեռուստ, սակայն նոյն առարկայէն ցոլայեալ լուսաւոր ճառագայթից զարնելովն կը տեսանեն. նոյնպէս և ականջք մարմնոյ մի բաղխմամբն օդոյ թրթռմանէն ձայնն կը լսեն։

Զև կամ ձևակերպութիւն մարմնոյ ըսելով կը հասկընամք նոյն իսկ ներքին մասանց յարադրութիւնն. և այս յարադրութեամբս է որ մարմին մի խիստ կամ կակուղ, չոր կամ խոնաւ, ցուրտ կամ տաք է. և ճիշդ այս որակներն են՝ զորս շօշափողութիւնն կը բռնէ։

Զգայութիւնք՝ են կերպաւորութիւնքն ներգործեալք 'ի մարմինն և 'ի հոգին միացեալ ընդ միմեանս՝ կամ մեր մարմնէն դուրս օտար մարմնոյ մի տպաւորութեամբ, կամ մեր մարմնոյն մէկ մասին միւս մասին տպաւորութեամբ. զոր օրինակ ձեռք ձեռքի վրայ դնելով կամ աչաց առջև բռնելով և այլն։

Ա. Հոգին զգայութիւն չիմանար առանց մարմնոյ. ուստի աչք չունեցողն չտեսներ։

Բ. Մարմինն ալ առանց հոգւոյ զգայութիւն չիմանար. ուստի դիակ մի ոչ կը տեսնէ, ոչ կը լսէ, ոչ կը ցաւի, վերջապէս բան մի չզգար։

Զգացմունք ըսելով կը հասկցուին այն ներքին շարժմունքն որ անցանեն 'ի մեզ զգայութիւն մի ունեցած ժամանակ. այսպէս օձ մի տեսած ժամանակ՝ սարսափի

զգացում մի կունենամ. գեղեցիկ ներ-դաշնակութիւն մի հաճութեան զգացում մի կուտայ ինձի։

Ի զգացմանց յառաջ կուգան կիրք, որ են զգալի շարժմունք որով մղիմք դէպ 'ի բարին, կամ հեռանամք 'ի չարէ։ Այս բարին և չարն կրնան ըլլալ իրական կամ պատկերողական։

Երկու ախորժակք կամ զգալի միտումնք գոն 'ի մեզ, որք կը կոչուին ցանկական և զայրացական. ըստ որում բարին կամ չարն դիւրին կամ դժուարին է ստանալ կամ մերժել։

Ցանկական ախորժակն վեց կիրք կը բովանդակէ. Սէր իրական կամ կեղծ՝ բարւոյ. Ատելութիւն կամ հաճոյք՝ որ զայն կը վայելէ. Ատելութիւն՝ որ խորշի յիրական կամ 'ի կեղծ չարէ. Ներհակութիւն՝ որ անկէ կը հեռանայ. Ցաւ կամ վիշտ՝ որ զայն կը կրէ։

Զայրացական ախորժակ հինգ կիրք կը պարունակեն. Յոյս՝ որ բերի առ բարին դժուարին՝ բայց կարելի. Անյուսութիւն՝ որ հեռանայ յանհնարին համարեալ բարւոյ. Երկիւղ՝ պատճառեալ 'ի վերահաս չարէ. Յանդգնութիւն՝ յառաջ եկեալ 'ի տես չարի՝ զոր յուսայ որ մերժել. Բարկութիւն՝ որ եղած չարն դարմանելու կը վազէ։

Ե. Յաղագս իմացողական կարողութեանց. Ըմբռնողութեան, Գիտակցութեան, Յիշողութեան, Պատկերողութեան, Դատողութեան և. բանի.

Իմացողական կարողութիւնք ասելով կիմացուի այն զօրութիւնն զոր ունիմք ճանաչելոյ զճշմարտութիւն։ — Ճիշդ խօսելով իմացողական կարողութիւնն մի է. վասն զի ճանաչողութեան առարկայն ալ մի է։ Եւ յիրաւի որչափ ալ էակք բազում և զանազան ըլլան, և անոնց իմացական յարաբերութիւնքն շատ, մենք զանոնք մէկ կարողութեամբ կըմբռնեմք, և միայն իրենց ճշմարիտ ըլլալովն՝ հասկացողութեան առարկայ են։ Այս մինակ ճշմարտութիւնն է իմացողութեան առարկայն. ինչպէս որ մարմնական տեսողութեան միակ առարկայն ալ լոյսն է՝ թէ և տեսանելի իրք և գոյնք անքաւ են։

Սակայն իմացողական կարողութիւնն կամ հասկացողութիւնն իր զանազան գործողութեանց համեմատ այլևայլ անուններ կունենայ. ինչպէս ըմբռնողութիւն, գիտակցութիւն, յիշողութիւն, պատկերողութիւն, դատողութիւն, բան։

Ա. Ըմբռնողութիւնն աւելի հասկացողութեան գործողութիւն մի է՝ քան թէ զատ

կարողութիւն, որով հոգին ինքն իր առջև բան մի կը ներկայացնէ։ — Եթէ այս ներկայացումս պարզ մտաւորական է՝ գաղափար կըսուի։ Իսկ եթէ զգալի ձևով մի ներկայանայ՝ կըլլայ պատկեր։

Բ. Գիտակցութիւնն է կարողութիւն զոր ունիմք մեր գործողութեանց վրայ անդրադառնալու, և 'ի մեզ անցած բաներուն այսինքն խորհածնուս, կամեցածնուս, զգացածնուս, տեսածնուս և կրածնուս պատճառն մենք մեզ տալու։

Գ. Յիշողութիւնն է կարողութիւն պահելոյ և վերակոչելոյ զիրս. զոր օրինակ ատենօք կամ ուրիշ անգամ ունեցած գաղափարներն, խորհուրդներն, պատկերներն, զգացմունքն և տպաւորութիւնքն. կամ պարզապէս յիշողութիւնն է կարողութիւն պահելոյ և վերակոչելոյ զանցեալն։

Դ. Պատկերողութիւնն երկու մտքով կառնուի. մէյմի կարողութիւն զգալի ձևով մի ներկայացնելոյ յանձին զիրս թէ՛ նիւթեղէն և թէ հոգեղէն, ինչպէս զԱստուած և զհոգի, զծառ. կամ պարզապէս վերացեալս որպէս զբոլորշիութիւն, զառաքինութիւն և այլն։ Եւ երկրորդ՝ կարողութիւն 'ի մի կցորդելոյ զգաղափարս և զպատկերս բազում իրական իրայ և ձևացուցանելոյ նորանորս որք չկան և կամ զորս մենք բնաւ չենք տեսած. օրինակի համար լեռ ոսկեղէն, ձի թևաւոր և այլն։

Ե. Դատողութիւնն կրնայ առնուիլ կարո-

Հայոց Գրքերի Պետական Գրադարան

զութեան կամ գործողութեան մի պէս՝ որով կը հաստատեմք կամ մերժեմք զյարմարութիւն երկուց գաղափարաց։

Զ. Բանն է կարողութիւն հանելոյ հետևութիւնս 'ի սկզբանց, ելանելոյ յարգասեաց 'ի պատճառն, և հանելոյ զանծանօթն 'ի ծանօթէն։

Այնպէս իմն թուի թերևս թէ հասկացողութիւնն և ընդհանրապէս ինչ որ իմացողութեան վերաբերի՝ բուն կարողութիւն մի չըլլայ. որովհետև միտքն չկրնար ուզածին պէս մերժել բացայայտ ճշմարտութիւն մի, և ոչ ընդունիլ զատութիւնն յայտնի, և ոչ ալ հաստատել տարակուսական երևցածն. սակայն որովհետև կարող եմք մեր իմացողութիւնն այս այն առարկայից վրայ տանիլ կամ ետ դարձնել, ապա ճըշմարտիւ կրնամք ըսել թէ հասկացողութիւնն զօրութիւն մի է՝ զոր ուզածնուս պէս կրնամք գործածել, և հետևապէս կարողութիւն մի է։

Զ. Յաղագս գաղափարաց ընդհանրապէս. Ծագումն և կնիք նոցին. Նախկին ժանօթութիւնք և ձշմարտութիւնք.

Գաղափարն ընդհանրապէս է պարզապէս մտաւոր ձև կամ տիպ իրաց։

Ծագումն գաղափարաց. — Այս խնդիրս

երկու մտքով կը հասկցուի . Ա. թէ ո՞րն է ծագումն գաղափարաց յինքեանս մտածեալք , այսինքն յառաջ քան զգոյութիւն իրաց և անոնցմէ դուրս , և թէ ո՞ւր են գաղափարք և տիպք նոյն իրաց . օրինակի համար այս գրասեղանէս դուրս և քանի որ գրասեղան մի չկար՝ ո՞ւր էր անոր գաղափարն և ուսկի՞ց եկած է այս գաղափարն ։

Պատասխանն դիւրին է . ամենայն գաղափարաց ծագումն յԱստուած է և յանսահման յիմացականութեան նորա . Աստուած 'ի յաւիտենից ունի զգաղափար ամենայնի որ կարէ լինել ։

Բ . Երկրորդ միտքն այս է , թէ ո՞րն է ծագումն գաղափարաց 'ի մեզ , այսինքն թէ ուստի՞ գան մեզ գաղափարք իրաց , և թէ զիարդ և ուստի՞ սկսանի 'ի մեզ ճանաչողութիւնն ։

Ասար ալ պատասխանեմ թէ գաղափարք յառաջ գան 'ի մեզ 'ի կրկին սկզբանց միանգամայն . մին ենթակական՝ որ է նոյն ինքն ենթակայն , իմացողական սկիզբն մտաւորական , այսինքն հասկացողութիւն կամ բան իւրաքանչիւր ուրուք 'ի մէնջ . և միւսն առարկական՝ որ է առարկայն իմանալի , իրն նկարեալ 'ի գաղափարէ ։

Եւ յիրաւի անկարելի է ճանաչել կամ ունել գաղափար ինչ՝ եթէ ոչ գոյ ենթակայ որ կարող յըմբռնել և յիմանալ ։ Եւ իմա-

ցողական ենթական կամ սկիզբն ալ ըլ-
լալով՝ անկարելի է ճանաչել՝ եթէ չիք ինչ
ճանաչելի։ Եթէ տեսնելու կարողութիւն
չունենամ՝ աշխարհքս առջևս ալ ըլլայ և
լոյսն բոլորս շողայ՝ ոչ լոյսն կրնամ տես-
նել և ոչ զաշխարհս։ — Եւ եթէ կարի
սուր աչք ալ ունենամ՝ թէ որ առջևս ա-
ռարկայ մի չըլլայ կամ թէ լոյս չըլլայ՝ բան
մի չեմ կրնար տեսնել, ամենևին չեմ
տեսներ։

Բովանդակ առարկայք զորս կրնամք
ճանչնալ են ա. Մեք, բ. Մարմինք, գ.
Հոգիք, և դ. Աստուած։ — Մէն մարդ
ինքզինքն կը ճանչնայ ներքին զգայու-
թեամբ։ — Մարմիններն կը ճանչնամք
արտաքին զգայութեամբք։ — Իսկ հոգի-
ներուն ոչ գոյացութիւնն և ոչ էութիւնն
գիտեմք. բայց յարգասեաց ինչ՝ որ անոնց
գործն կը յայտնեն, կը հաստատեմք անոնց
գոյութիւնն և անոնց բնութեան քանի մի
ստորոգելիքն. այսպէս ճանաչեմք զնոսա
'ի ձեռն բանի։ Զ Աստուած ալ նոյն եղա-
նակաւ կը ճանչնամք. իր էութիւնն, իա-
կութիւնն ու գոյացութիւնն չեմք տեսներ.
սակայն իր գործերն տեսնելով՝ իր գոյու-
թիւնն և իր էութեան գլխաւոր ստորոգե-
լիքն կը հետևցնեմք. ապա ուրեմն և Զ Ա-
ստուած ճանաչեմք 'ի ձեռն բանի։

Դաղափարաց ծագման վրայ իմաստա-
սիրաց մէջ եղած վէճն՝ խնդրոյն երկու
կերպարանաց վրայ է, այսինքն մեր ճա-

նաչողութեանց ենթական սկզբան և առարկական սկզբան վրայ։

Ա. Սկիզբն ենթակական. որն է 'ի մարդումս սկիզբն կամ զօրութիւնն յորմէ յառաջ գայ ամենայն ճանաչողութիւն։ — Ոմանք կըսեն զգացութիւնք. և այլք իմացողութիւն։

Զգացութիւնն չէ. ա. Ոչ արտաքինն՝ որ ըմբռնէ միայն զնիւթեղէնն, զզգալին, զներկայն և զմասնաւորն. իսկ արդ մենք կըմբռնենք նաև զհոգեղէնն, զանզգալին, զբացակայն, զվերացեալն և զհանրականն։ բ. Եւ ոչ ներքինն՝ որ հոգւոյն ներքին և ներկայ վիճակն միայն ծանուցանէ մեզ. բայց բան մի չյայտներ՝ ոչ մեր խորհրդոց ճշմարտութեանն և ոչ խորհրդոյ առարկային վրայ։ Ապա ուրեմն թէ ներքին և թէ արտաքին զգայութիւնն միջոց մի է ճանաչողութեան և ոչ թէ սկիզբն գաղափարի։

Մնայ ապա իմացողութիւնն կամ բանն մարդոյ. և արդարև միայն իմացողութեամբ և 'ի ձեռն բանին ունիմք զգաղափար իրաց զորս ճանաչեմք և դատիմք։ Ապա ենթական սկիզբն գաղափարաց մերոց իմացողութիւնն է։

Բ. Սկիզբն առարկական. որն է առաջին առարկայն ծանուցեալ. կամ որն է նախկին գաղափարն յորմէ բղխեն այլք ամենայն։

Ոմանք կըսեն՝ մարմիններն և նիւթեղէն

էակք։ Բայց ինչպէս կրնանք նիւթեղէն էակէն կամ նիւթեղէն էակի գաղափարէն արտածել այն՝ որ չկայ անոր մէջ կամ որ չկրնար ըլլալ, ինչպէս է հոգեղէն էակի գաղափարն ու անհուն էակի գաղափարն. որովհետև մեծագոյնն ոչ բովանդակի 'ի փոքրագունին։

Այլք կըսեն՝ նոյն ինքն հոգին, ներքին և հոգեղէն եան է նախկին առարկայն ծանուցեալ։ Հաւանիմ որ եսէն առաջ բան մի ծանուցեալ չըլլայ. Բայց ըսել չըլլար՝ որ միայն եան է առարկայ՝ զոր ամէնէն առաջ կը ճանչնամ. և թէ եսի գաղափարէն կը հեռացնեմ միւս ամէն գաղափարներն։ Որովհետև ես հնաւոր եմ, ապա ինչպէս անհունն հնաւորի մէջ կը բովանդակի. ուրեմն ես ունիմ զգաղափար անհնոյ. և եսի գաղափարն զանիկայ ինծի տուած չկրնար ըլլալ. ապա ուրեմն եան նախկին և միակ առարկայ չէ՝ որուն գաղափարէն առաջ եկած ըլլան այլ ամենայն գաղափարք։

Իսկ այլք ևս կըսեն՝ թէ նախկին առարկայն ըմբռնեալ անհունն է, էակն աստուածային և Աստուած։ Բայց անհնոյ գաղափարէն ինչպէս կրնամ արտածել հնաւորի գաղափարն. որովհետև անհնոյ մէջ հնաւորի բան մի չկայ և ոչ սահման մի. ապա ուրեմն ոչ անհունն կըմբռնեմ և ոչ ալ անոր մէջ չեղած բան մի կրնամ արտածել։ — Ապա ուրեմն աւելի ընդհա-

նուր առարկայ մի պէտք է որոնել՝ որ ամէն կարելի էակ իր մէջն բովանդակէ. այս առարկայն է էութիւնն։

Այս ամէն ճշմարիտ իմաստասիրաց հետ ասելու ենք՝ որ առաջին առարկայն ծանուցեալ՝ է էութիւնն. վասն զի ճանչցած բաներուս մէջ ամէնէն առաջ ճանչցածս իրենց էութիւնն է, և էութիւնն կը յարմարի ամենայն իրաց որք գոն կամ կարելի են։

Բայց դժուարութիւնն հոս նորէն կը սկսի. ուրն է այն էակն զոր յամենայնի և ամենէն առաջ կըմբռնեմ։ — Ոմանք կըսեն թէ այս էակն է Աստուած։ — Բայց սիկայ անկարելի է. վասն զի այն ատեն ամէն բան զոր կըմբռնեմ՝ պիտի ըլլար էակն աստուածային և Աստուած. ուստի ասելով թէ այս սեղանս է, այս մարդս է՝ նոյն իսկ Աստուծոյ էութիւնն ընծայած պիտի ըլլայի անոնց, որով ամէն բան Աստուած պիտի ըլլար, և Աստուծմէ զատ ուրիշ էակ պիտի չըլլար։ — Այս ուրեմն մեր էութիւն ըսածն՝ որուն գաղափարն ունիմք յամենայնի և յառաջ քան զամենայն, պէտք է հասկընամք որպէս պարզ յատկութիւն յընդհանուրս նկատեալ և վերացուցեալ յամենայն թանձրացեալ էակէ թէ հնաւոր ըլլայ և թէ անհուն։

Այս կարծեացս գլխաւոր առարկութիւն այն կըլլայ՝ որ էութիւնն այսպէս յընդհանուրս նկատեալ ոչինչ է, որով և գա-

զափարն միայ առանց իրական առարկայի։ — Ասար պատասխան կուտանք՝ որ յիրաւի էութիւնն նկատեալ յընդհանուրս՝ ինքն իրեն ոչինչ է, բայց իրական ինչ է ա. յԱստուած լիովին և բովանդակապէս, որովհետև Աստուած է էակն անհուն. բ. յէակս ստեղծեալս՝ որք հաղորդք են էութեան։ Ապա ուրեմն երբ ունիմ զգաղափար էակի ընդհանրապէս՝ այս ըմբռնած էակս ցնորական բան մի չէ, ինչպէս որ չէ բոլորշիութիւնն ընդհանուր. վասն զի այս էութեանս հետ կայ դոյացական իրականութիւն մի։

Կնիք գաղափարաց. — Կնիքն է այն յայտարար նշանն՝ որ առարկայ մի ճանչնալու և զանիկայ ուրիշ ամէն բանէ որոշելու կը ծառայէ։ Կնիք կը զանազանին յիւակական և 'ի տեսակարարս։

Ա. Իսկական կըսուին կնիքն առանց որոց գաղափարն չկրնար ըլլալ։ — Ա. յս կնիքս են ճշմարտութիւն և պայծառութիւն։

Ամէն գաղափար ճշմարիտ պէտք է ըլլայ, այսինքն համեմատ իր առարկային, և զանիկայ ինչպէս որ է պէտք է ներկայացնէ։ Ապա սուտ գաղափարն՝ որ զառարկայն ինչպէս որ է չներկայացներ՝ գաղափար չէ։ Օրինակի համար եթէ բոլորակն քառակուսոյ պէս ես ինձ ներկայացնեմ, կամ հոգին որպէս նիւթեղէն, չունիմ զգաղափար ոչ բոլորակի և ոչ հոգւոյ։

Ամէն գաղափար պայծառ պէտք է ըլլայ, այսինքն զառարկայն այն կերպով ներկայացնէ՝ որ միտքն գիտնայ թէ ինչ է այն առարկայն։ Սակայն մթին գաղափարն ոչ է գաղափար առարկային. ինչպէս որ իրի մի մթին տեսողութիւնն ալ՝ նոյն առարկային տեսողութիւնն չէ։ — Պայծառ գաղափարն որոշ կըլլայ՝ երբ առարկային զանազան յատկութիւններն և մասունքն այնպէս կը ներկայացնէ՝ որ միտքն դիւրաւ զանոնք կորոշէ։

Գաղափարն կատարեալ ըլլալու համար հաւասարաչափ ըլլալու է, այսինքն, բացարձակապէս ներկայացնէ առարկայի մի ամէն յատկութիւններն և ամէն կարելի յարաբերութիւններն։

Բ. Տեսակարար կըսուին կնիքն՝ որ մասնաւոր դասուց գաղափարաց յատուկ են, սակայն առանց անոնց՝ գաղափարն կըրնայ ըլլալ։ Այս տեսակարար կնքոց համեմատ՝ գաղափարներն զանազան տեսակք կրնան բաժնուիլ, որոնց սովորականներն հոս դնենք։

Գաղափարք կրնան նկատուիլ ա. ըստ եղանակին՝ որով միտք յղանան զիրա. գ. ըստ զանազան բնութեան առակայից գաղափարի։

Ա. Ըստ եղանակին որով միտք յղանան զիրա՝ գաղափարն կըլլայ ուղղակի և խորհրդածեալ, խելամտական և ծաւալական, թանձրացեալ և վերացեալ։

ա. Ուղղակի գաղափարն այն է զոր կունենամք առանց անոր վրայ խորհելոյ. օրինակի համար ունիմ զգաղափար բոլորակի, ձիոյ, հոգւոյ՝ թէ և չխորհիմ անոնց վրայ. վասն զի թէ և ներկայապէս չխորհիմ անոնց վրայ, սակայն անկէց չհետեւիր թէ գաղափարնին կորանցուցած ըլլամ. այնպէս որ բառ մի միայն կամ նշան մի բաւական է զայն ինձի յիշեցնելու։ Գաղափարն խորհրդածեալ կըլլայ՝ երբ անոր վրայ կը խորհիմ։

բ. Գաղափարն խելամտական է՝ երբ առարկային ամենայն յատկութիւններն կը ներկայացնէ. իսկ ծաւալական՝ երբ կը ներկայացնէ զամենայն առարկայս՝ որոնց յատկութիւն մի կը վերաբերի. օրինակի համար մարդու գաղափարն խելամտութեամբ կը ներկայացնէ ինձի մարդկային բնութեան ամենայն ինձի ծանօթ յատկութիւններն, իսկ ծաւալականութեամբ զամենայն անհատս՝ որոնց կը յարմարի մարդկային բնութիւնն։

գ. Գաղափարն թանձրացեալ է՝ երբ ոգին կը նկատէ առարկայի մի ձևն ու յատկութիւններն 'ի նոյն իսկ առարկայի. իսկ վերացեալ՝ երբ ձևն ու յատկութիւնք անջատ յառարկայէ կը նկատուին. օրինակի համար գաղափարն որով այս ինչ մարդն կամ բոլորակն նկատեմ՝ է թանձրացեալ. իսկ գաղափարն որով նկատեմ՝ զմարդն ընդհանուր կամ զմարդկութիւն, այսինքն,

գյատկութիւնս սահմանիչս մարդկային էութեան՝ առանց որոշ մարդու մի վրայ առնելու զանոնք, կըսուի վերացեալ. նոյնպէս եթէ առանց մասնաւոր բոլորակի մի վրայ մտածելու՝ բոլորակի էութիւնն նկատեմ, կամ բոլորշիութիւնն առանց բոլորակի՝ գաղափարս կըլլայ վերացեալ։

Բ. Ըստ զանազան բնութեան առարկայից՝ գաղափարն կըլլայ

ա. Պարզ կամ բաղադրեալ՝ ըստ որում անոր ներկայացուցած առարկայն ալ պարզ կամ բաղադրեալ է։ Բաղադրեալ գաղափարք շաղկապիչք են կամ բաժանիչք՝ ըստ որում ոգին նկատէ զմասունս ամբողջութեան իրիք իրենց բովանդակութեան մէջ, կամ ըստ որում անջատք յիրերաց։

բ. Յարաբերական կամ բացարձակ՝ ըստ որում առարկայն յղացեալ ուրիշ մի ալ կը յիշեցնէ կամ չյիշեցներ. մարդու գաղափարն բացարձակ է՝ որովհետև կրնամ 'ի միտ առնուլ զմարդ առանց ուրիշ բանի մի վրայ խորհելու. իսկ գաղափարք հօր, տիրոջ, պատճառի և այլն, յարաբերականք են. որովհետև հայր ըսելով որդին ալ միտքս կուգայ, տէր ըսելով ծառայն, և պատճառ ըսելով արդասիքն։

գ. Եղական, մասնական կամ հանրական՝ ըստ որում գաղափարին ներկայացուցածն է անհատն, մասնական ինչ կամ հանրական։ Անհատն այն է որ չկրնար հատանիլ 'ի բազում մասունս նմանս բո-

լորին. օրինակի համար այս ինչ մարդ անհատ է. եթէ բաժանես զայն՝ կունենաս զբաղում մասունս նոյն մարդոյ, բայց ոչ զբաղում մարդիկ։ — Մասնականն է որ դաս մի անհատից անորոշ մէկ մասն կը բովանդակէ. օրինակի համար մարդ մի կամ մարդիկ կամ ոմանք 'ի մարդկանէ։ — Իսկ հանրականն բովանդակէ զամենայն անհատս մէկ տեսակի կամ ցեղի. օրինակի համար մարդ, մարդիկ։

Ըստ Պորփիւրի հանրականք հինգ են. ա. տեսակ կամ որ յարմարի բազում անհատից միանգամայն. օրինակի համար մարդ. զի էութիւն մարդկային բազում անհատից պատկանի. բ. սեռ կամ որ յարմարի բազում տեսակաց. օրինակի համար կենդանի. զի էութիւնն կենդանւոյ կը յարմարի տեսակի մարդկան և տեսակի անասնոց. գ. զանազանութիւն կամ այն՝ որով էակ մի ուրիշէ կը տարբերի. այսպէս իմացողութիւնն կամ բանականութիւն զանազանութիւն է 'ի մէջ մարդոյ և անասնոյ. դ. սեպհականութիւն կամ այն՝ որ իսկութենէ առաջ կուգայ. օրինակի համար մարդուս խօսելոյ կարողութիւնն որ յիմացողութենէ առաջ կուգայ. և. պատահար կամ դէպք առանց որոյ իրն կրնայ ըլլալ. այսպէս ցուրտն և ջերմութիւն պատահար են։

Արդեօք կրնայ ըսուիլ թէ պատահական գաղափարք կրնան ըլլալ։ Ոչ. նոյն իսկ

պատահական առարկայից գաղափարներն հարկաւոր և յաւիտենական են, որպէս նոյն իսկ իսկութիւն և կարելութիւն նոյն առարկայից. օրինակի համար արեգակն պատահական է և կրնար չըլլալ, բայց արեգական գաղափարն հարկաւոր և յաւիտենական է. և՝ ի յաւիտենից և հարկաւորապէս ճշմարիտ է՝ թէ արեգակն կարելի է. ապա արեգական գաղափարն՝ ի յաւիտենից կայ յիմացականութեանն Աստուծոյ։ — Իսկ թէ գաղափար ըսելով պարզ գործողութիւն մի կամ ոգւոյ գործ մի հասկընամք՝ մարդուս ամէն գաղափարներն պատահականք են, առարկայն թէ՛ պատահական ըլլայ թէ հարկաւոր։ Վասն զի մարդըս ալ կրնար չըլլալ, և ենթադրեալ թէ գոյ՝ իւրաքանչիւր գաղափարին համար ալ կրնանք ըսել թէ կրնար չունենալ։

Նախկին ծանօթութիւնք եւ ճշմարտութիւնք. — Ծանօթութիւնն ճշմարտութենէ ասուկը զանազանի՝ որ ծանօթութիւնն ենթակական է, և կրնայ համարուիլ գործ՝ որուն ճանաչեմք զճշմարտութիւն. իսկ ճշմարտութիւնն՝ առարկական, և կիմացուի իրն ծանուցեալ։ — Ապա նախկին ծանօթութիւնք՝ են մեր առաջին ճանաչողութիւններն։ — Իսկ նախկին ճշմարտութիւնք՝ առաջին իրք զորս ճանաչեմք։

Համառօտ ըսելով նախկին ծանօթութիւնք և ճշմարտութիւնք կըսուին անոնք, զորս ամէն մարդ քիչ մի խելքն բանեցնե-

լով կը ճանչնայ. օրինակի համար անձին և աշխարհի գոյութիւնն, և կամ նախկին սկզբունք զորս ապացուցանելոյ կարօտութիւն չկայ. ինչպէս են, Ձիք արգասիք առանց պատճառի. մի և նոյն իր չկարէ լինել և չլինել 'ի նոյն ժամանակի. մի առներ այլում զայն ինչ՝ զոր չկամիս թէ այլք արասցեն քեզ, և այլն։

Է. Յաղագս գործնականութեան և զանազան կնքոց նորա. Գործնականութիւն կամաւոր և ազատ. Ապացոյցք ազատութեան.

Գործնականութիւն եւ կնիք նորին. Գործնականութիւն կամաւոր եւ ազատ. — Գործնականութիւն ասելով կիմացուի էակի մի այն զօրութիւնն՝ որով կարողութիւն ունի ինքնիրեն որոշում մի ընելու։ Ուստի ես խորհիմ և կամիմ՝ այնու իսկ գործնական եմ։ Օրինակի համար բոլորակի մի վրայ կը մտածեմ թէ 2 + 2 = 4. այս որոշողութիւնն ինծմէ դուրս ուրիշ էակով մի չեմ ըներ. ապա ես եմ որոշողն, ես եմ ճանչցողն և խորհողն՝ իմ յատուկ ուժովս, և այն զօրութեամբ որ հասկացողութիւն կըսուի։ Դարձեալ բան մի կամիմ. այս որոշումս ալ ինծմէ է յառաջ եկած այն զօրութենէն որ ինծի յատուկ է և կըսուի կամեցողութիւն։

Կամեցողութեան գործնականութիւնն կրկին կնիք ունի, այսինքն կրնայ ըլլալ

կամ պարզապէս կամաւոր և կամ ազատ։ Օրինակի համար. Կամիմ երջանիկ ըլլալ. այս շարժումս և դէպ 'ի երջանկութիւն ուղղեցած հակումս հարկաւոր է. վասն զի չեմք կարողք չկամել երջանկութիւնս. ապա ուրեմն կամաւոր չէ։ Դարձեալ կուզեմ քայլել կամ նստիլ, այս հաճոյքս կամ այն նեղութիւնն կուզեմ. այս որոշումս ալ կամաւոր է, բայց միանգամայն և ազատ։

Ապացոյցք ազատութեան. — Ազատութիւնն է կարողութիւն ընտրելոյ զիմն 'ի մէջ բազում առարկայից. կարողութիւն կամելոյ և չկամելոյ։ Արդ 'ի բաց առեալ ընդհանուր բարին զոր միշտ և յամենայնի հարկաւորապէս կամիմք, զայլ ամենայն առարկայս և որոշեալ բարիս կրնանք ընտրել և մերժել. և այն ամենայն որ ինձի բարւոյ մի պէս կը յանդիմանի, կրնամ կամիլ, և ինչ որ չար կերևնայ՝ մերժել. արդէակ մի չկայ՝ զոր չկարենամ որպէս բարի նկատել, և դարձեալ էակ մի չկայ՝ զոր չկարենամ չար համարիլ. զոր այսպէս կըրնամք ապացուցանել. Ամենայն գոյութիւն հնաւոր է կամ անհուն։

Ա. Հնաւորն կրնամ կամիլ, որովհետև կրնամ զանիկայ նկատել որպէս էակ՝ ունող կատարելութեան, և այս նկատմամբ բարի է ինձի համար։ — Կրնամ չկամիլ, որովհետև կրնամ նկատել զանիկայ անկատարութեանն կողմանէ, կամ որպէս արգելք

այս կամ այն բարեաց՝ որոնց հետ անիկայ չկրնար միանալ. այս նկատմամբ չար է ինձի համար, որով և մերժելի։

Բ. Անհունն կրնամ կամիլ, որովհետև ունի զամենայն կատարելութիւն և բովանդակէ զամենայն բարութիւն, ես ալ այսպէս կրնամ նկատել զանիկայ։ — Կրնամ նաև մերժել զանհունն՝ որ վերացեալ ինչ մի չէ, այլ էական և գոյացական էակ, որ է Աստուած. արդ Աստուած այժմ իսկ ինքզինքն ինձի չտալուն, նաև արգիլելով ինձի հնաւոր բարեաց վայելքն, կըրնամ զինքն նկատել որպէս արգիլող՝ վայելելոյ զինքն և զբարիս հնաւորս. և այս նկատմամբ կրնամ զինքն նկատել որպէս ոչ բարի և մերժել զնա, և նախադաս համարիլ զհնաւոր բարիս։

Եթէ յերկինս եղած արքոց պէս զանհուն բարին կամ զԱստուած վայելէի՝ դարձեալ ազատ կըլլայի ոչ դէպ առ Աստուած, որովհետև անհուն բարին վայելողն չկըրնար ընտրութիւն ընել անհունին և հնաւորին, այլ հարկաւորապէս նախադասէ զանհունն. այլ կրնայի դարձեալ ընտրութիւն ընել հնաւոր բարեաց մէջ. և այս ազատութիւնս միայն ունին երանելիք։

Ազատութիւնն կապացուցուի նաև 'ի ներքին զգացութենէ՝ որ վկայէ ինձ թէ բայց 'ի ընդհանուր բարւոյ կամ երջանկութեան կամեցողութենէն, միւս կամացս որոշողութիւններն այնպէս են՝ զորս կըր-

նայի ուրիշ կերպով կամիլ։ Այս ճշմարտութիւնս կը հաստատուի նաև 'ի տիեզերական համաձայնութենէ ազգի մարդկան։ Վասն զի եթէ մարդս ազատ չէ՝ ինչու են այս օրէնքս, կարգերս, արգելքներս, գովեստներս, պարսաւներս, վարձքերս, ու պատիժներս. որովհետև ծաղրական և անօգուտ բան է օրէնք պատուէր և արգելք դնել էակի մի վրայ որ իր բնութեան օրինաց համեմատ հարկաւորապէս պիտի գործէ. անօգուտ ու ծաղրական է գովել կամ պարսաւել, վարձատրել կամ պատժել այն մարդն՝ որ ըրածէն տարբեր չէր կրնար ընել. խոստմունքն ու սպառնալիքքն անօգուտ են ու ազդեցութիւն մի չունին այն մարդուն վրայ որ ազատ չէ։ — Իսկ արդ ամէն մարդ կընդունի օրինաց հարկաւորութիւնն, գովութեանց ու պարսաւանաց օգտակարութիւնն, վարձուց և պատժոց արդարութիւնն, ապա ուրեմն մարդս ազատ է մէկուն կամ մէկալին համեմատ գործելու, և իր ազատ որոշողութեամբն անոնց արժանաւորելու։

Ազատութեան դէմ եղած առարկութիւններն կառնուին ոմանք յառարկայէ ազատութեան, և այլք 'ի բնութենէ կամեցողութեան, և ուրիշներն ալ 'ի նախադիտութենէ և 'ի գործակցութենէ Աստուծոյ։

Առարկ Ա. Հարկաւորապէս ընտրեմք զլաւագոյնն։

Պիս. Ոչ բնաւ, բայց եթէ լաւագոյն ընտ-
լով հասկնաս անհուն բարին անմիջապէս
վայելեալ. իսկ անկէ զատ ամէն առար-
կայ, և նոյն իսկ դեռ չստացեալ անհուն
բարին՝ ինծի համար հարկաւորապէս կա-
մեցեալ գերագոյն բարի չկրնար սեպուիլ։

Առարկ Բ. Կամեցողութիւնն անտար-
բեր է առ ամենայն ինչ որ չէ գերագոյն
բարի, ապա պէտք է որ իր որոշողութիւնն
արտաքին զօրութենէ կամ պատճառէ մի
յառաջ գայ, իսկ արդ ուրիշէ մի շարժեալն
ազատ չէ։

Պիս. Կամեցողութեան անտարբերու-
թիւնն բոլորովին կրական չէ, այլ և գործ-
նական՝ այս մտքով որ երբ կամիմ՝ իմ կա-
մեցողութեամբս որոշմունք կընեմ, և ին-
քընիրենս կընտրեմ կամ մերժեմ զբա-
րին ընդ առաջ ելեալ։

Առարկ Գ. Գործ ինչ կանխատեսեալ
յԱստուծոյ չկրնար չկատարուիլ, ապա թէ
ոչ՝ Աստուած խաբուած կըլլայ. իսկ արդ
չկատարուիլ չկրցող գործ մի՝ հարկաւոր է
և ոչ ազատ։

Պիս. Գործն ոչ թէ անոր համար կը կա-
տարուի՝ վասն զի Աստուած զանիկայ ա-
ռաջուց ճանչցեր է, այլ որովհետև պիտի
կատարուի՝ Աստուած զանիկայ առաջուց
կը տեսնէ։

Առարկ Դ. Եթէ Աստուած է զամենայն
ինչ 'ի մեզ ընողն և գործակից է մեզ, ա-
պա ոչ միայն ազատ չեմք, այլ և բան մի
չեմք ըներ։

Պիս. Աստուած է 'ի մեզ գործողն, բայց որպէս նախկին պատճառ, թողլով երկրորդական պատճառին իր բնական գործունէութիւնն. այս գործունէութիւնն հարկաւոր է այն էակաց համար՝ որ տըւեալ մղմամբ մի կը գործեն, իսկ աղատ է այն էակաց համար՝ որ իրենք իրենց որոշողութիւն մի ունին։ — Աստուած իր գործակցութեամբն կը պահէ 'ի մեզ նաև զազատութիւն մեր որպէս և զկամս և զգոյութիւն։

Ը. Յաղագս Անձնաշարժական, Անիւրակալական հոգւոյ. Զանազանական հոգւոյ և մարմնոյ և յարաբերական նոցին.

Անձնաւորութիւն. — Անձն ըսելով կը հասկցուի էակ մի՝ որ է սկիզբն և իշխան գործոց իւրոց, և որ գործէ և ինքնիրեն որոշումն կընէ։ Մարդս անձն մի է, վասն զի ինքն իրեն կը գործէ, և յինքեան ունի զսկիզբն թէ՛ իմացողական թէ կամեցողական և թէ զգայողական գործողութեանց իւրոց։

Անձնաւորութիւնն մարդկային բովանդակէ զմարմին և զհոգի. կամ թէ ըսենք, 'ի մեզ անձնաւորութիւնն ձևացնողն ոչ մարմինն է միայն և ոչ հոգին առանձինն։ Բացայայտ է որ միայն մարմինն բաւական չէ անձն կազմելու համար. վասն զի մի-

նակ մարմինն անկարող է գործելու, որով ոչ սկիզբն և ոչ իշխան է գործոց իւրոց։ Այնպէս հոգին միայն ոչ կազմէ զանձն. իրաւ է որ առանձինն կարող է ճանաչել և կամել, որով և միակ սկիզբն և իշխան է ինչ ինչ գործողութեանց կարևորագունից և էականաց։ Բայց իմացողութենէ և կամեցողութենէ զատ ուրիշ կարողութիւն մի ալ ունի՝ զոր առանց մարմնոյ չկրնար վարել 'ի գործ, որ է զգայողութիւնն։ Ապա ուրեմն առանց մարմնոյ՝ հոգին չէ բացարձակ սկիզբն գործոց իւրոց։ Եւ այսպէս անձն մարդկային կը բաղկանայ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ միացելոյ 'ի միասին։

Ա. Ցցիւթականութիւն հոգւոյ. — Հոգին է որ ճանաչէ յիս և կամի և զգայուն գործէ զմարմինն իմ, հոգևորէ զնա և կենդանի առնէ, և սկիզբն է կենաց իմոց։ — Հոգեղէն ասելով կը հասկցուի էակ մի անկախ 'ի նիւթոյ, որով և կըսուի աննիւթական։ Իսկ արդ այն որ յիս ճանաչէ և կամի՝ անկախ է 'ի նիւթոյ. որովհետև ճանաչեմ և կամիմ առարկայս բացակայս, հոգեղէնս և վերացեալս. և այս բանիս համար նիւթոյ կարօտութիւն չկայ. ապա ուրեմն կարեմ ճանաչել և կամիլ առանց նիւթական էակաց։

Ուրիշ ապացոյց. Նիւթն անկարող է 'ի խորհել 'ի կամել և 'ի զգալ, որպէս 'ի տեսանել, իմանալ, վշտանալ, ուրախանալ և 'ի շարժիլ. իսկ արդ այս ամէն բան կընեմ՝

և կիմանամ. ապա գոյ յիս սկիզբն ինչ անանութական։ — Այս նախադասութեանս մեծագոյնն ցուցանի այսպէս. Մարմին ըստուած նիւթն բաղադրեալ ինչ է. և իր տարերքն պարզ ալ համարելով՝ տարակոյս չկայ որ գոնէ դանդաղ է. իսկ արդ ոչ բաղադրեալն և ոչ դանդաղն չեն կարող խորհել կամիլ և զգալ և շարժիլ. ապա և այլն։ — Բաղադրեալն չկրնար խորհիլ և ոչ կամել։ — Բաղադրեալն խորհել կամ կամել կարենալու համար՝ այս յետագայ երեք ենթադրութեանցս մէկն ընդունելու է։

Առաջին ենթադրութիւն. Մի մասն խորհի և միւսն կամի։ — Բայց որովհետև կամելն ուրիշ բան չէ՝ բայց հակում մի և յարում ունենալ առ բարին առաջի ընծայեալ յիմացողութենէ, եթէ մասն այն որ կամի՝ անկարող ելլայ յըմբռնել զբարին՝ զոր առաջի առնէ նմա մասն այն որ ճանաչէ, ապա և կամիլ իսկ ոչ կարէ. իսկ եթէ կարող ելլայ ըմբռնելու՝ ապա ուրեմն և ճանաչէ և կամի։

Բայց թերևս ասէ մէկն՝ թէ մասն որ ճանաչէ՝ շարժումն ինչ և հակումն կը տպաւորէ այն մասին՝ որ ոչ ճանաչէ, և այսպէս տայ նմա կամիլ։ Եթէ այսպէս է՝ ապա պէտք է ասել՝ թէ մասն այն որ ճանաչէ՝ ոչ միայն ճանաչէ, այլ և բերի առ աառարկայն զոր ճանաչէ, որովհետև շարժէ զմիւս մասն առ 'ի յառաջ մղել զնա առ

առարկայն. ապա դարձեալ նոյն է որ ճանաչէ և կամի։

Երկրորդ ևնթադրութիւն. Իրաքանչիւր 'ի մասանց խորհի և կամի։ Եթէ այսպէս ըլլայ, հոգին այնչափ խորհուրդս և կամս պէտք է ունենայ՝ որչափ որ մասունք ունի։ Իսկ արդ ներքին զգացութիւնն յայտնէ թէ մեք 'ի նմին ժամանակի մէկ խորհուրդ և մի կամք միայն ունիմք։

Թերևս ըսես թէ մենք երկու աչք և երկու ականջք ունենալով՝ թէ և երկու պատկեր միանգամայն կը տպաւորուին աչացս մէջ՝ սակայն մի միայն պատկեր կը տեսնեմք. նմանապէս ականջացս երկու թրթռմունք կը հասնին յաջմէ և 'ի ձախմէ, սակայն ձայն մի միայն կը լսեմք. ապա և 'ի հոգին բաղադրեալ։ — Պատասխանեմ թէ այդ օրինակդ իմ ըսածս կը հաստատէ. որովհետև մի պատկեր տեսնելուս և մի ձայն լսելուս պատճառն այն է՝ որ իրաքանչիւր գործարանաց վրայ եղած կրկին տպաւորութիւնքն կերթան կը միանան 'ի մի կէտ հաստատակ և միակ։

Երրորդ ևնթադրութիւն. Խորհուրդն բաժանեալ է 'ի մէջ զանազան մասանց բաղադրելոյն. նոյնպէս է նաև կամքն։ — Սակայն խորհուրդն քննենք։ Թէ որ ապացուցանեմ թէ խորհուրդ ըսածդ՝ պարզ էակի մի մէջ միայն կրնայ գտնուիլ, որովհետև խորհել կրցողն միայն կրնայ կամիլ, ապա ասով կը ցուցուի նաև թէ այն միայն

կրնայ կամիլ՝ որ պարզ է։ Արդ խորհուրդն չկրնար բաժնուիլ 'ի մէջ զանազան մասանց բաղկացեալ իրի մի. և պատճառն այս է՝ որ խորհուրդ ըսածնիս պարզ, անմասն և անտարած ինչ է։ — Յիրաւի խորհրդոյ առարկայն կրնայ ըլլալ պարզ կամ բաղադրեալ։ — Եթէ պարզ է՝ ապա և անոր խորհուրդն և գաղափարն պէտք է որ պարզ ըլլայ, ապա թէ ոչ զառարկայն ինչպէս որ է չներկայացներ։ — Իսկ եթէ առարկայն բաղադրեալ է՝ հարկ է դարձեալ որ խոհուն սկիզբն պարզ ըլլայ։ Ենթադրենք առ վայր մի, որ էակն ներկայացեալ մեզ՝ բաղադրեալ առարկայ մի ըլլայ, օրինակի համար տուն մի։ Սակայ ալ ուրիշ կերպով չբացատրուիր՝ բայց եթէ նորէն երկու ենթադրութեամբք՝ որ հաւասարապէս անընդունելիք են։ ա. Օրինակի համար տան այս ինչ մասն կամ թէ ըսենք դուռն՝ ներկայացնենք հոգւոյն այս ինչ մասին մէջ, և պատուհանն ուրիշ մասին մէջ։ Ապա կը հարցնեմ թէ ինչպէս գիտես որ այս պատուհանն ու դուռն մէկ ամբողջի մի կը վերաբերին։ Ապա ուրեմն չես կրնար բաղադրեալի մի գաղափարն ունենալ, թէ որ չըլլայ 'ի քեզ սկիզբն ինչ միակ և պարզ որ բաղադրելոյ մի ամբողջ մասունքն միանգամայն ըմբռնէ՝ անոնց յարաբերութիւններն և զանազանութիւնն ունենալու համար։ բ. Կամ թէ տունն բուսանգակ ըմբռնուի հոգւոյն իւրաքան-

չիւր մասանցմէ, այն ատեն ալ պէտք է այնչափ տներ ըմբռնեմ՝ որչափ որ մասունք կան 'ի հոգւոջ. այս ալ փորձառութեան հակառակ է։ — Ա. Պա ուրեմն՝ բաղադրեալ առարկային գաղափարն ալ՝ պարզ առարկային գաղափարին պէս հարկաւորապէս պարզ և միակ է. և հետևապէս անբաժանելի, և միայն միակ և պարզ սկզբան մի մէջ կը գտնուի։ Ա. Պա ուրեմն հոգին կամ սկիզբն խոհուն պարզ և անբաժանելի է։

Հոգւոյն պարզութիւնն կապացուցուի նաև անոր ուրիշ կարողութիւններէն, ինչպէս են դատողութիւնն, բանավարութիւնն, զգայութիւնք, յիշողութիւն և այլն։

Ա. Դատողութիւն. Ի՞նչպէս կրնամ դատել թէ երկու առարկայք հանգէտ են թէ չէ՝ իրարու՝ եթէ չգոյ յիս սկիզբն ինչ միակ և պարզ՝ որ երկու առարկայս ալ միատեղ ըմբռնէ և իրարու հետ բաղդատէ։

Բ. Բանավարութիւնն ալ երեք եզր կամ երեք գաղափար կենթադրէ, և երեք նախադասութիւնս ըմբռնելաս և բաղդատելաս 'ի նոյն սկիզբէն։

Գ. Զգայութիւնք. Ի՞նչպէս կրնանք այլ և այլ զգայութեանց կամ մի և նոյն գործարանի զանազան զգայութիւններն որոշել, օրինակի համար ձայներն ու գոյներն, ծանր ու քաղցր ձայներն, կարմիրն, կապոյտն, սեաւն, սպիտակն, եթէ այս ամէն տպաւորութիւնք չյանգին 'ի կեդրոն

ինչ և 'ի սկիզբն միակ և պարզ, որ զանոնք ամէնքն ալ ընդունելով և պահելով մերթ միանգամայն և մերթ յաջորդաբար, չկարենայ բաղդատել զնոսին և որոշել 'ի միմեանց։

Դ. Յիշողութիւն. Ի՞նչպէս կրնամ յիշատակել կամ վերակոչել՝ ինչ որ ատեն մի խորհեր, կամեցեր, տեսեր ու լսեր եմ, եթէ չգոյ յիս սկիզբն ինչ միակ՝ որ խորհի, կամի, տեսանէ և լսէ և այլն, և պահէ զգործողութիւնս և զտպաւորութիւնս զայսոսիկ յաջորդականս։

Հոգւոյն պարզութիւնն ցցուցինք, ապացուցանենք նաև անոր գործնականութիւնն։

Դանդաղն չկարէ ոչ խորհել և ոչ կամիլ։ — Իսկն դանդաղ՝ այսինքն նիւթեղէն՝ անխտիր է առ շարժումն և առ դադարումն. և ինքնիրեն չկրնար որոշողութիւն կամ կերպաւորութիւն մի ունենալ։ — Իսկ արդ ճանաչելն, խորհելն, անդրադառնալն և կամելն՝ ինքնիրեն որոշողութիւն մի ունենալ է։ — Վասն զի եթէ ինքնիրենս որոշողութիւն չունենամ՝ ապա ճանչցած և կամեցած ժամանակ՝ ծանուցեալ և կամեցեալ առարկային ներկայութիւնն և գործողութիւնն է զիս որոշողն և ինձի կամք և գաղափար տուողն։ — Սակայն շատ անգամ այնպիսի առարկայներ ճանաչեմ և կամիմ՝ որ բացակայք են, և իրօք չկան, և միայն կարելի են։ — Արդ

այն որ չկայ՝ չկրնար տպաւորութիւն մի ալ ընել։ — Սպա ուրեմն յիս եղած խոհուն և կամեցողակիզբն՝ չկրնար որոշողութիւն մի ունենալ 'ի ծանուցեալ և 'ի կամեցեալ առարկայէ, այլ ինքնիրեն կունենայ զորոշողութիւն. ուրեմն է գործնական։ — Եւ որովհետև ամէն նիւթ դանդաղ է, ապա հոգի ըսած սկիզբս նիւթեղէն չէ։

Զանազանութիւն հոգւոյ եւ մարմնոյ եւ յարաբերութիւնք նոցին. — Զանազանութիւնն առջի դրած ապացոյցերէս կերևի և կը հաստատուի. որով Հոգին է պարզ, գործնական, և կարող 'ի ճանաչել և 'ի կամել։ Իսկ Մարմինն է բաղադրեալ, դանդաղ, անկարող 'ի ճանաչել և 'ի կամել։

Իսկ յարաբերութիւնք ըսելով կիմացուի որ Հոգին առանց մարմնոյ չկարենար 'ի վար արկանել իր ունեցած ատորին կարողութիւններն, այսինքն զգալ, տեսանել, լսել, շարժել, հոգևորել և կենդանացընել։ — Մարմինն ալ առանց հոգւոյ անկարող է զգալ, տեսանել, լսել, վշտանալ, ուրախանալ և շարժիլ. այլ անհոգի և մեռած է։

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Թ. Յաղագս ճշմարտութեան և մոլորութեան, հաւանականութեան, բացայայտութեան, ստոյգութեան.

Ճշմարտութիւն. — Ճշմարիտն է՝ որ ինչ էն, կամ էակն նկատեալ որպէս առարկայ իմացողութեան. իսկ ճշմարտութիւնն է՝ յարմարութիւն գաղափարին ընդ իրին յառաջ բերելոյ 'ի նմանէ, և ճանաչողութեան ընդ առարկային ծանուցելոյ։ — Ճշմարտութիւնն զանազանի 'ի բնազանցական, բնական, բանախօսական և բարոյական։

Ա. Բնազանցական ճշմարտութիւնն է նոյն ինքն իսկութիւն և կարելութիւն իրիք, կամ յարմարութիւն յատկութեանց առարկայի։ — Այսպէս բնազանցական ճշմարտութիւն մարդոյ յայտ է՝ որ անանիւթական հոգի մի կարենայ միանալ ընդ գործարանաւոր մարմնոյ, և անոր հետ ամբողջութիւն մի ձևանալ։

Բ. Բնական ճշմարտութիւնն է գոյութիւն իրիք, կամ գործով կատարումն կարելի առարկայի, կամ թէ յարմարութիւն եղած բանի մի իր էութեանն հետ։ — Այսպէս բնական ճշմարտութիւն մարդոյ՝ է մարդ մի որ կայ, կամ գոյութիւն էակի մի՝ յորում իրօք ըլլայ կարելութիւն կամ էութիւն մարդկային, այսինքն յորում ըլլայ միաւորութիւն աննիւթական հոգւոյ ընդ գործարանաւոր մարմնոյ։

Գ. Բանախօսական ճշմարտութիւնն է նոյն իսկ ճանաչողութիւնն առարկային. որ է ճշմարտութիւն նկատեալ յիմացողութեան։ Բուն ճշմարտութիւն բառն ալ՝ բանախօսական ճշմարտութեան կը յարմարի։ Այս բանախօսական կամ ընդհանուր ճշմարտութիւնն ալ ուրիշ բան չէ՝ բայց եթէ յարմարութիւն ճանաչողութեան ընդ առարկային ծանուցելոյ։ — Այսպէս երբ մարդ ասելով կը հասկնամ էակ մի բաղադրեալ յաննիւթական հոգւոյ և 'ի գործարանաւոր մարմնոյ՝ իմ գաղափարս բանախօսապէս ճշմարիտ կըլլայ։

Դ. Բարոյական ճշմարտութիւնն է յարմարութիւն բարուց և վարուց իմացական էակի՝ ընդ օրինաց բնութեան իւրոյ. ինչպէս. «Մի առներ այլում զայն ինչ՝ զոր չկամիս թէ այլք արասցեն քեզ»։

Մոլորութիւն է դատողութիւն կամաւորապէս սուտ. որ և. զանազանի ա. 'ի ապիտութենէ՝ որ չճանչնար զկրն. բ. 'ի

տարակուսէ՝ որ երկմտի 'ի մէջ երկուց ներհական դատողութեանց՝ առանց մէկ կողմին հաւանելու. գ. 'ի կարծեաց՝ որ թէպէտ յերկուց հակառակաց մէկուն կը հակի՝ սակայն որոշ դատողութիւն մի չկըրնար ընել։ — Միտքն ինքնիրեն մնացած ատեն՝ երբ կանգիտանայ կամ տարակուսի՝ չկրնար դատողութիւն մի վճռել. վասըն զի իր առարկայն ճշմարիտն ըլլալով՝ մինակ 'ի ճշմարիտն և 'ի ճշմարիտն ծանուցեալ կրնայ հանգչիլ։ Ապա ուրեմն պէտք է որ կամեցողութիւնն մէջ մտնէ, ու արգելու որ հաւկացողութիւնն չգիջանի, և զանիկայ ստիպէ որ չըլլայ թէ թեթևութեամբ հաստատէ կամ մերժէ։ Ասոր համար է որ մոլորութիւնն սահմանեցին դատողութիւն կամաւորապէս սուտ։ (տես Բանախօսութեանս վերջին գլուխն Յաղագս մոլորութեանց)։

Հաւանականութիւն. — Առաջարկութիւն մի հաւանական է երբ հիմնեալ է 'ի վերայ այնպիսի ապացուցից՝ որ թէ և ճշմարտութիւնն չեն ցուցներ՝ սակայն առարկութիւն մալ չկայ որ կարենայ զանոնք եղծանել։

Բացայայտութիւն. — Իր մի ինքն իրեն բացայայտ է՝ երբ չկրնար ուրիշ կերպ ըլլալ. և բացայայտ է վասն մեր՝ երբ կը տեսնենք որ չկրնար չըլլալ։ — Երկու տեսակ բացայայտութիւն կայ. բացայայտութիւն անմիջնորդ և բացայայտութիւն միջնորդաւ։ — ա. Բացայայտութիւնն ան-

միջնորդ կամ ներհայեցական է՝ երբ նախադասութիւն մի ըսուելուն պէս՝ ոգին կը ստիպի զանիկայ հասկնալու և ընդունելու. օրինակի համար. Ամբողջն մեծ է քան զմասունս իւր։ — բ. Բացայայտութիւնն միջնորդաւ է կամ արտաբերական՝ երբ 'ի ցուցմանէ առաջ կուգայ և բանավարութիւն բանեցնելով կրնանք հասու ըլլալ. այսպէս են չափաբանական բացայայտութիւններն։

Ստուգութիւնն այն ատեն կըլլայ՝ երբ ոգին գիտէ՝ թէ ճանաչէ զճշմարտութիւն, առանց խաբուելու վախ մի ունենալու։ — Ստուգութիւնն ալ կըլլայ բանախօսական, բնազանցական, բնական ու բարոյական ըստ որում իր առարկայն ալ է ճշմարտութիւն բանախօսական, բնազանցական, բնական ու բարոյական։

Ստուգութիւնն պէտք չէ շփոթել բացայայտութեան հետ. այս վերջինս առաջնոյն նկատմամբ այնպէս է, որպէս ամսակն սեռի նկատմամբ։ Ամենայն բացայայտութիւն ստուգութիւն է, բայց ամենայն ստուգութիւն բացայայտութիւն չէ։ Կամ թէ ըսենք ամենայն ինչ որ ինձ բացայայտ է՝ ստոյգ է ինձի համար. բայց ամենայն ինչ որ ստոյգ է՝ ասով բացայայտ չըլլար։ Ես ստոյգ եմ ընդ գոյութիւն Ալեքսանդրի, սակայն չէ բացայայտ վասն իմ. այս միայն բացայայտ է որ անկարելի է թէ մարդկային վկայութիւնն՝

որ ինձի այս բանս կը վկայէ՝ խաբէական ըլլայ։

Սպա ուրեմն երկու տեսակ ստուգութիւն կայ. մէկն բացայայտութեան, ապացուցի և բանի վրայ հաստատեալ. իսկ միւսն որ ուրիշի վկայութեան հաւատալէն առաջ կուգայ։

Գոյուշիւն ստուգուշիւն. Բոլոր բանախօսական ուսմունքն այս խնդրոյս վրայ հաստատուած է՝ թէ արդեօք ստուգութիւն ըսածդ կայ թէ չէ, և թէ կրնայ մարդ անոր հասնիլ. կամ թէ ըսենք կըրնամ ճանաչել ինչ ստուգապէս, ինչպէս կրնամ ճանաչել, և որո՞նք են միջոցք ճանաչելոյ։

Ստուգուշիւն ընդհանրապէս. Առաջին հարցմունքն էական խնդիր մի չէ. որովհետև մարդ չկրնար այսպիսի հարցում մի ընել թէ արդեօք կրնամ ճանաչել։ Նոյն իսկ չգիտեմ և տարակուսիմ ըսելով երկու անտարակուսելի բան հաստատած կըլլաս. մէյմի՝ որ կաս. և երկրորդ՝ թէ բան մի չես գիտեր. որ է ըսել թէ ամէն բանի վրայ կը տարակուսիս։ Վասն զի եթէ չգիտես թէ դու կաս և անգիտանաս՝ ինչպէս կրնաս խորհիլ և ըսել թէ դուք ես անգէտ։ Եթէ քու գոյութեանդ և տգիտութեանդ վրայ կը տարակուսիս՝ ինչպէս կրնաս հաստատել թէ մէկն և թէ մէկալն ըսելով. Ոչ գիտեմ, տարակուսիմ. որովհետև այս ուրիշ բան ըսել չէ՝ բայց եթէ

Ես եմ անգէտ, ես եմ տարակուսող։ Ապա ուրեմն գիտես ինչ։

Բայց այս իրն որ գիտես՝ կամ է ինչ և կամ չէ. եթէ չէ ինչ՝ ապա ոչինչ է։ Ասկից կը հետևի թէ 'ի նմին ժամանակի յորում ճանաչես՝ ճանաչես ինչ ոչ. վասն զի ճանաչելն զայն որ չէ՝ չճանչնալու հետևոյն է։ Ապա անկարելի է որ ճանաչելու ատեն՝ չեղածն ճանաչես. ապա ուրեմն եղածն կը ճանաչես։ Իսկ արդ այս եղածս ուրիշ բան չէ՝ բայց եթէ ճշմարիտն. ապա ուրեմն ճանաչես զճշմարիտն։ — Այս ճեռնարկութեամբ առաջին խնդիրն կը լուծուի, և կը հաստատուի թէ ունի ուրեմն մարդ զզօրութիւն կամ զկարողութիւն ճանաչելոյ զճշմարիտն. այսինքն զայն որ է։ Այս զօրութիւնս կամ կարողութիւնս կը կոչուի միտք, իմացողութիւն, հասկացողութիւն, բան և այլն։

Ստուգութիւն հասկացողութեան. Ոգի կամ միտք ընդհանուր բառ մի է՝ որ շատ անգամ բովանդակ հոգւոյ տեղ կառնուի։ Իմացողութիւնն հասկացողութենէ չզանազանիր, այլ շատ անգամ գործող հասկացողութեան իմացողութիւն կըսենք. ինչպէս իրի մի իմացողութիւնն կըսենք՝ երբ հասկացողութիւնն նոյն իրն ըմբռնած է։ Իսկ հասկացողութեան և բանի մէջ աւելի զանազանութիւն մի կայ, թէ և այս երկու բառերս ալ նոյն կարողութիւնն կը նշանակեն։ Միտք երբոր մէկ

հայեցուածով ճանաչէ զիրա՝ կըսուի հաս-
կացողութիւն, իմացողութիւն. իսկ երբ
մէկիկ մէկիկ և յաջորդաբար՝ կըսուի բան.
ինչպէս որ Ս.գուինացին ալ կըսէ. «Իմա-
ցողութիւնն ճանաչէ պարզ ներհայեցու-
թեամբ, իսկ բանն՝ ընթանալով 'ի միոյ
յայլ[1]»։ Բայց երբոր ոգին 'ի ձեռն բանին
մէկ ճշմարտութենէ 'ի միւսն կանցնի, և
սկզբան մի մէջ բովանդակեալ հետևու-
թիւնն կը գտնէ՝ ալ կը դադրի ընթանա-
լէն և բանալարելէն, և գտած և ճանչցած
ճշմարտութեան պարզ տեսողութեան մէջ
կը հանգչի. որով կը տեսնէ, կը հասկնայ
և գիտէ։ Ա.յն ատեն հասկացողութիւնն
մինակ կը գործէ, և իր գործն է ճշմարտին
կամ ստուգութեան տեսողութեան մէջ
հանգչելն։ Ապա ուրեմն հասկացողու-
թիւնն է՝ իմացողութեան և իրաց ճանա-
չողութեան առաջին սկիզբն. և ճանաչե-
լոյ ուրիշ ամէն միջոցներն կերթան կա-
ւարտին 'ի հասկացողութիւնն։

Հասկացողութիւնն և բանն՝ իրերն ու-
րիշ բանով չհասկընար և ճանաչեր՝ բայց
եթէ 'ի ձեռն գաղափարի, այսինքն պար-
զապէս իմացողական յառաջածութեամբ՝
զոր ինքն իրեն կը ներկայացնէ։ Ա.յս գա-
ղափարս նոյն ինքն իրն չէ, այլ անոր ձևն
տիպն ու էութիւնն։ Օրինակի համար երբ

1 Ս. Թովմայի Բովանդ. Ա. խ. 59. ա. 1։

հասկացողութեամբ գրաւեղան մի կը ճանաչեմ, ոչ եթէ այս ինչ մասնաւոր գրաւեղանն է ճանչցածս, այլ ունիմ 'ի միտս իմ զգաղափար գրաւեղանի միոյ կամ ամենայն գրաւեղանոց առ հասարակ, գիտեմ ու կը հասկընամ թէ ինչ է գրաւեղանն, և ինչուվ է որ կահ մի գրաւեղան է և ոչ աթոռ կամ մահիճ։ Այս գաղափարս ուրիշ բան չէ բայց եթէ պարզապէս իմացողական յառաջածութիւն մի նոյն ինքն էութեան գրաւեղանոց առ հասարակ, յորում բովանդակին ամենայն գրաւեղանք կարելիք կամ գրաւեղանք առ հասարակ։ Եւ եթէ ամենայն գրաւեղաններն աշխարհքէս ջնջեա և ենթադրես թէ ամենևին գրաւեղան ըստուած կահդ եղած չըլլայ և չպիտի ալ ըլլայ, սակայն և այնպէս ճշմարիտ է թէ գրաւեղան մի կարելի է։ Այս ուրեմն ամենայն գրաւեղանոց և ամենայն իրաց կարելութիւնն էութիւնն և գաղափարն հարկաւոր է և յաւիտենական, անփոփոխ և անկախ 'ի ներկայ գոյութենէ այն իրաց, և անկախ դարձեալ 'ի մտաց՝ որ յղանայ զնոսին։ Եթէ աշխարհքէս ջընջեա վերցնես զամենայն ոգիս՝ բաւական է որ մի միայն ոգի մի ըլլայ ունող իմացողութեան և նոյն իրին գաղափարին, և ունող զզօրութիւն յարդիւնս ածելոյ զնոյն արտաքոյ իւրոյ հասկացողութեան՝ պարզ կարելութեան վիճակէն ներգործական գոյութեան վիճակն անցընելու, այն ատեն

նոյն իրին գաղափարն, էութիւնն և կարելութիւնն ալ կայ։

Նոյնն կիմացուի նաև ամենայն եղած և ըլլալի կարելի էակաց մէջ եղած յարմարութեան և անյարմարութեան յարաբերութեանց նկատմամբ. օրինակի համար եթէ ջնջես զայն ամենայն որ բաղմապատկելի կամ բաղկացու են, սակայն և այնպէս ճշմարիտ է որ 2 + 2 = 4, և թէ բոլորն մեծ է քան զմի 'ի մասանց իւրոյ։

Այս բացատրութեամբ կը հասկցուի թէ ինչ ըսել է իմաստասիրաց ըսածն թէ՝ հասկացողութեան և բանի առարկայն՝ է հանրականն, պարզ կարելութիւնն, իրաց էութիւնն կամ գաղափարն վերացուցեալ 'ի գոյութենէ նոցին։

Իսկ թէ իրաց գոյութիւնն ճանչնալու՝ ինչպէս հասու կըլլայ հոգին՝ աս բանս կը կախուի այն առարկայից բնութենէն որոնց գոյութիւնն կուզենք հաւաստել։ Այսր համար ալ դնենք նախ զայն որ ամենէն աւելի մեզ մօտ է։

Մտոզոշիւն զգացոշիւնց. — Զգացութիւնն առաջին միջոցն է որով եղած առարկայից գոյութեանն հասու կըլլանք։ Զգացութիւնն է այն զօրութիւնն որ յայտնէ մեզ զգոյութիւն և զարդի վիճակ ներկայ էակաց. և է կրկին՝ զգացութիւն ներքին և զգացութիւն արտաքին։

Զգացոշիւն ներքին. — Առաջին առարկայն որ հոգւոյն կը ներկայանայ՝ ինքն

իսկ հոգին է։ Սակէց առաջ կուգայ զգացութիւնն ներքին[1], որով հոգին ճանաչէ զիւր գոյութիւն և զարդի վիճակն։ Ես կըմբռնեմ որ խորհիմ և կամիմ. և այս խորհելոյս և կամելոյս միակ բաւական պատճառն է՝ նոյն իսկ այս խորհուրդս և կամքս. ապա զոյ յիս իրապէս այս խորհուրդս և կամքս։ Սակայն այն որ անգոյ է՝ չկրնար խորհիլ և կամիլ. ապա ուրեմն ես գոմ։ Այսպէս հոգին 'ի պատճառէ յաւրիթն ելլելով և 'ի մի միակ առիթն կարելի յարաբերութեանց ներքին զգացութեան, ստուգութեամբ ճանաչէ զարդի վիճակ իւր և զգոյութիւն։

Զգացողութիւն արտաքին. — Բայց թէպէտ յիս ներգործեալ փոփոխութեանց մէջ՝ այնպիսի իրս կը նկատեմ որոնց սկիզբն և գործողն ես եմ, որպիսի են խորհուրդք և կամք, սակայն նկատեմ ես յիս զայնպիսի իրս՝ որք ակամայ ներգործին յիս, և

1 Հոգին զգացութեանց տակ անկանող իր մի չէ, ինչպէս նաև իմացողութեան և պարզ կամեցողութեան գործողութիւններն. և սակայն երբ կըսեմք թէ հոգին ունի զներքին զգացութիւն անձին և իւր հոգեղէն և անղգալի գործողութեանց՝ կիմացուի որ հոգւոյ և մարմնոյ միաւորութեան արդի վիճակին մէջ՝ մարմնոյ գործարանաց զուգընթացութիւնն ալ հարկաւոր է. այսպէս երբ հոգին իմանայ յանձին զխորհուրդս իւր և զկամն՝ հոն կիմացուի նաև այն խառն կարողութեան միջամտութիւնն՝ որ զգայուն կը կոչուի։

որոնց գործողն ես չեմ. այսպիսի են երե-
ւոյթք տեսողութեան, լսողութեան և այլք
այսպիսիք։ Ոչ եթէ կամեցածս տեսանեմ,
լսեմ և շօշափեմ։ Օրինակ իմն՝ այս ճշմար-
տութիւնս մտաց ներկայացնելու համար
թէ բոլորն մեծ է քան զմի 'ի մասանց իւ-
րոց՝ բաւական է խորհելն. բայց արևն
տեսնելու, ներդաշնակութիւն մի լսելու և
կերակրոց համն առնելու համար բաւա-
կան չէ խորհել և եթ զարեգակն կամ զներ-
դաշնակութիւն և զխնջոյս։ Ապա ուրեմն
տեսողութեան և այլ սոյնպիսեաց երևու-
թից պատճառն՝ գոյացական ինչ է, որով-
հետև անոնցմէ առաջ եկած արգասիքն
գոն, և խորհող և կամեցող եսէն զատ գոյ
ինչ մի գոյացական։

Այս զանազան փոփոխութիւնքս կամ
զգայութիւններս յիս ներգործողին՝ մար-
մին անունը կուտամք. և արտաքին զգա-
ցութիւն կամ զգացողութիւն կը կոչեմք
այն կարողութիւնն զոր ունիմ ընդունե-
ալ յիս զտպաւորութիւնն պատճառեալ 'ի
մարմնեղէն կամ 'ի նիւթեղէն էակաց։ —
Այս կերպով զգացած առաջին առարկայն՝
ինձի հետ անմիջապէս կապուած է, և ա-
ռանց անոր չեմ կրնար ըլլալ, և սակայն
զանիկայ կորոշեմ անկէց՝ որ խորհի յիս
և կամի։ Ասոր ալ կըսեմ իմ մարմինս։

Այս մարմնոյս և իր զանազան գործա-
րանաց ձեռօքն կը ճանաչեմ զգոյութիւն
զներկայութիւն և զվիճակ այլոց նոյնպէս

ներթեղէն էակաց՝ որոնք իմ մարմնոյս այլ և այլ փոփոխութիւններ կը պատճառեն, զորս շուտով մի կը զգամ հոգւոյս մէջ ա-նոնց համեմատ ներգործած կերպաւորու-թեամբքն։

Սահա այս կերպով արդէն երկու կարգ առարկայից ծանօթութիւն կունենամ. յո-րոյ ոմանք պարզապէս կարելիք են, այս-ինքն ճշմարտութիւնք հանրական, հար-կաւորք, յաւիտենականք և անփոփոխք, զորս և ճանաչեմ՝ 'ի ձեռն հասկացողու-թեան և բանի. իսկ այլք անոնք են՝ որ ներ-կայապէս կան, ինչպէս էակք առանձինն և արդիք. զասոնք ալ զգացութեամբ կը բռնեմ։ Այս զգացութեան կարողութիւնն նախ կուտայ ինձի զգիտակցութիւն իմ գոյութեանս՝ որպէս էակ խորհող և կա-մեցող, և յետոյ զգիտակցութիւն կերպա-ւորութեանց որ յիս անցանեն, թէ անոնց զորս ես յառաջ ածեմ, ինչպէս են խոր-հուրդք և կամք, և թէ անոնց որ ինձմէ դուրս յայլ պատճառէ յիս կը ներգործին, ինչպիսի են զգայութիւնք։ Եւ այս զգայ-ութեանց ձեռօք կը բռնեմ և ճանաչեմ զգոյութիւն, զներկայութիւն և զվիճակ զգալի իրաց որ շուրջ են զինև։

Սառզոշրիշն վկայոշրևան. — Սակայն բաց 'ի հանրական և պարզ իմացողական ճըշ-մարտութիւններէ և սկզբունքներէ՝ որ հասկացողութեան առարկայ են, և բաց 'ի զգալի և առանձին իրերէ և էակներէ՝ որ

են առարկայ զգայարանաց, կան նաև այնպիսի իրեր որ հարկաւոր չեն, և հետևապէս չեմ կրնար զանոնք ճանաչել միայն 'ի ձեռն բանի, և դարձեալ զգայարանաց տակ ալ չեն անկանիր՝ որ անոնց օգնութեամբն զանոնք կարենամ բռնել. սա ըսածներս այնպիսի իրեր և անցքեր են՝ որոնցմէ հեռու կը գտնուիմ ժամանակաւ և տեղեաւ. օրինակի համար՝ Կեսարու և իրեն գործոց գոյութիւնն, զորս չեմ կարող ճանաչել անմիջապէս ոչ զգայարանօք՝ վասն զի անցեալ իրեր են, և ոչ բանիւ՝ որովհետև Կեսար ըսուածն կրնար եղած չըլլալ և կամ ուրիշ կերպով գործած ըլլալ. ապա ուրեմն իր գոյութիւնն և իր գործերն ոչ են այն հարկաւոր ճշմարտութիւններէն մէկն՝ զորս բանն կրնայ գըտնել և ճանաչել քիչ մի խորհելու վարժելով, ինչպէս է գոյութիւն նախկին էակի՝ որ հարկաւորապէս յանձնէ ունի զգոյութիւն, սկիզբն և պատճառ ամենայնի որ ինչ է և որ կարէ լինել՝ և կըսուի Աստուած։ Արդ ինչպէս ուրեմն կրնամ ճանաչել այն իրերն և անցքերն՝ զորս ոչ մինակ բանիւ և ոչ մինակ զգայարանօքս կարելի է գիտնալն։ Անոնք ալ կը ճանաչեմ վկայութեամբ անոնց՝ որ անմիջապէս կրցեր են զանոնք ճանչնալ, այսինքն մարդկային վկայութեամբ։

Ժ. Յաղագս վկայուշքեան մարդկան։

Մարդկային վկայութիւնն հաւատալի կըլլայ՝ երբ կրնամ ստուգել թէ վկայքն ոչ խաբուեր են և ոչ կուզեն խաբել. վասն զի բացայայտ է որ ոչ միայն կրնամ՝ այլ և պէտք է ստոյգ սեպեմ այն մարդուն վկայութիւնն՝ որ ճշմարիտն գիտէ և կը զրուցէ։ — Բայց ի՞նչպէս կրնամ ստուգել որ այն բանն հաստատող վկայներն ոչ խաբուած են և ոչ խաբողք։ Այս բանիս համար բաւական է իրաց բնութիւնն և վկայից պայմանքն քննել։

Երբ քննելի իրն այնպիսի անցք մի է՝ որուն ստուգութիւնն դիւրին է հաստատել, և անկէց առաջ եկած հետևանքն ալ ծանր, և շատ մարդիկ կը միանան առանց շահ մի ունենալու անոր ստուգութեանն վկայելու, մանաւանդ եթէ ուրանալու որ ըլլային՝ իրենց շահ մի պիտի ըլլար, և սակայն ոչ միայն չեն ուրանար այլ և կը հաստատեն, ապա այն ատեն կրնամ և պարտիմ իսկ հաւանիլ թէ այն բանն ճշմարիտ է. վասն զի այս պարագային մէջ մոլորութիւնն ու խարդախութիւնն անկարելի է։

Նախ անկարելի է մոլորութիւնն. վասն զի անկարելի է որ շատ մի մարդիկ մէկէն և 'ի միասին կորանցունեն բանի և զգայարանաց ազատ գործածութիւնն, և կամ

բոլորն մէկէն անհոգ ըլլան ծանօթութեանց միջոցներն գործածելու՝ առ 'ի հաստատել այնպիսի ինչ՝ որուն հետևանքն կրնայ իրենց մեծ բարիք մի և կամ մեծ չարիք մի բերել։ Եւ թէ որ իրաւացընէ բաղմութիւն մարդկան այսպէս կորանցուցած ըլլայ իր խելքի գործածութիւնն՝ անանկ կարդէ դուրս պարագայներէ առաջ եկած պիտի ըլլայ այս բանս՝ զոր ուրիշ վկայք անկարելի է որ չգիտնան ու չյիշեն։ — Օրինակի համար անկարելի է ենթադրել թէ Քրիստոսի տեառն մերոյ բոլոր առաքեալքն և աշակերտք իրենց մտաց և զգայարանաց գործածութիւնն այնպէս կորանցուցած ըլլան, և կամ՝ այնպէս անհոգանան զանոնք գործածելու՝ որ չկարենան ստուգել թէ անոր մեռնելէն ետև զանազան ժամանակ և այլ և այլ պարագայներով կենդանի երևնալն ստոյգ է թէ չէ։ Որովհետև այն իրն ստուգելն շատ դիւրին էր, և եղածն ալ շատ զարմանալի, և հետևանքն ալ ծանր, որով և խաբուիլն ալ անկարելի։ Ապա ուրեմն կան դիպուածք յորս կրնամ ինքզինքս ստուգապէս համոզել թէ մոլորութիւնն անկարելի է։ Կրնամ նաև հաստատել թէ խարդախութիւնն ալ անհնարին է։

Ստութիւնն գէշ գործ մի ըլլալով՝ մարդս ինչուան որ օգտակարութիւն մի չյուսայ իր ստութենէն՝ սուտ բան մի չհաստատեր, ու ևս առաւել չտեր՝ երբ այն

ատան իրեն վնասակար կրնայ ըլլալ։ Արդ վկայից պայմաններն քննելով՝ կրնամ իմանալ թէ ինչ օգուտ կրնար ըլլալ իրենց այն բանն հաստատելով։ Եթէ այս քննութեամբ չկարենամ իմանալ՝ հաւանութիւնն 'ի կախ կը թողում. իսկ եթէ տեսնեմ որ հաստատած բանէն իրենց օգուտ մի կրնար ըլլալ՝ անոնց վկայութեանն չեմ վստանիր. բայց երբ ապահով ըլլամ՝ որ այն ատութենէն իրենց օգուտ մի չկայ, այլ մանաւանդ թէ այն բանն հաստատելով վնաս ալ ունեցած են՝ այն ատեն վստահ կըլլամ՝ որ զիս խաբել չեն ուզած։ — Ապա ուրեմն կան դէպք՝ յորս կրնամ հաստատել թէ խարդախութիւնն ալ անկարելի է՝ ինչպէս մոլորութիւնն, և երբ մէյմի վստահ ըլլամ վկայողին վրայ՝ թէ ոչ խաբուեր է և ոչ խաբող, ապա անոր ըսածին վրայ չեմ կրնար տարակուսիլ։ Ապա ուրեմն կան դէպք՝ յորս մարդկային վկայութեամբ կրնամ ստուգապէս ճանաչել զիրա՝ զորս ինքնիրենս չէի կրնար ճանաչել։

Կարևոր չէ որ վկայք իրենք ճանչցած ըլլան հաստատածնին, կամ թէ ուրիշ վկայներէ առած ըլլան, բաւական է որ իրին ըլլալէն ետև ինչուան ինձի հասած վկայից յաջորդութիւնն ոչ խաբեալ ըլլայ՝ և ոչ խաբող։ Իսկ արդ ծանր հետևանք ունեցող խնդրոց մէջ հաւասարապէս անկարելի է մոլորութիւնն և խարդախու-

թիւնն երկրորդ երրորդ հարիւրորդ կարգ վկայից մէջ ինչպէս առաջին կարգին մէջ։ — Ապացուցութիւնն աւելի զգալի ընելու համար՝ պատմական անցք մի օրինակ առնունք, ինչպէս Կարմիր ծովուն անցքն. արդ կըսեմ որ այս հրաշալի անցքիս վկայ և գործադիր եղողաց զաւկընեռն՝ ոչ իրենք իրենց հայրերէն խաբուեցան, և ոչ ալ իրենց զաւկընեռն խաբեցին։ Նախ խաբուած չեն կրնար ըլլալ. ապա թէ ոչ այս երկու բաներէն մէկն ընդունելու է, այսինքն թէ կամ բոլոր Եգիպտոսէն ելած Եբրայեցիք յանկարծ բոլորն միացած ըլլան իրենց զաւկընեռն խաբելու, որ չկըրնար ըլլալ. որովհետև այս ստութեամբ հայրերն բան մի չէին վաստկեր. և կամ թէ յանկարծ և բոլորն մէկէն երևակայած ըլլան թէ տեսեր են այն հրաշքն՝ զոր չէին տեսած. այս ենթադրութիւնս ալ աւելի արտառոց է։

Բայց կրնայ մէկն ըսել թէ ոմանք քիչ քիչ այս պատմութիւնս հնարած ու ծաւալած ըլլան, ինչպէս որ իրաւունք եղած է շատ առասպելաց և հրաշից սկիզբն։ — Սակայն առասպել մի այս կերպով ծաւալելու համար՝ հարկ է որ մարդկային կրից համաձայն ըլլայ. վասն զի երբ անցք մի այնպիսի ծանր հետևանք և խղճի պարտաւորութիւններ և ազատութեան կապեր կը դնէ ազգի մի վրայ՝ ժողովուրդն դիւրաւ չընդունիր այն առասպելն։ — Արդ վերոյ-

գրեալ օրինակին դառնալով՝ եթէ Կարմիր ծովուն անցքն ճշմարիտ է՝ ապա ուրեմն Մովսէս Աստուծոյ կողմանէ առաքեալ է, և իր հրամարակած օրէնքն աստուածային ու պարտաւորիչ է։ Իսկ թէ սուտ է այն անցքն՝ Մովսէս ալ խաբեբային մէկն է, իր յայտնութիւններն առասպել, իր օրէնքն ոչ զոք պարտաւորէ, և իր ապառնալիքն ու խոստմունքն սուտ են։ Ալ անկէ ետև անկարելի էր Մովսիսի և այլոց այն հրաշալի անցքն պատմել որ եղած չէր՝ առանց բոլոր ազգն իրենց դէմ գրգռելու։ — Ուրիշ աւելի պարզենթադրութիւն մի ընենք. դնենք թէ ելլես հրամարակես թէ այս օրուան օրս բոլոր այս քաղքին ժողովրդեան առջին կարգէ դուրս մեծ դիպուած մի հանդիպեր է, և ըստ ծոգ սուտ ելլէ, ոչ զոք կրնաս համոզել, այլ բիւրաւոր ձայնք և գրիչք քեզի դէմ կելլեն։ — Վերջապէս կըսեմք թէ անկարելի է որ անցքի մի ականատես վկայներն բոլորն մէկէն յանկարծ կամ՝ ակաւ ակաւ խաբուին կամ խաբեն՝ այնպիսի իրի մի մէջ որուն ստուգութիւնն ծանր հետևանք ունենայ. արդնոյն անկարելութիւնն կըլլայ յաջորդ սերընդոց մէջալ ինչուան քու ժամանակդ։ — Չեմ տեսներ որ քու ժամանակակիցներէդ ոմանք ամէն ջանք կը բանեցնեն Աստուածաշնչի մէջ պատմուած իրաց աւանդութիւնն եղծանելու. և որչափ անօգուտ կըլլայ անոնց ջանքն. վասն զի հաղիւ թէ

գրութիւն մի կամ առարկութիւն մի կը հնարեն՝ ամէն կողմէն ձայներ կը բարձրանան զանոնք հերքելու։ Այսպէս եղած է նաև ամէն ժամանակ։

Այս ալ դիտելու է որ սերունդ ըսածդ՝ բոլորն մէկէն չկորսուիր, այլ գոնէ քանի մի հոգի յաջորդ սերնդեան մէջ կը գըտնուին. ուստի թէ և անկարելի է՝ սակայն ենթադրենք որ ամէն հայրեր ուզեն իրենց զաւակներն խաբել, և կամ թէ ամէնքն մէկէն մոռնան իրենց հօրմէն լսածնին, բայց և այնպէս այս վերջիններէս ոմանք դեռ ողջ ըլլալով՝ կրնան իրենց թոռներուն եղածն յիշեցընել և ճշմարտութիւնն հաստատել։

Վերջապէս աշխարհքիս մեծամեծ անցքերն՝ միշտ զգալի հետքեր կը թողուն իրենց գոյութեանն. ասանկ են գրքերն՝ որ զանոնք կը պատմեն, շէնքերն՝ որ զանոնք կը յիշեցնեն՝ թէ և աւերակ դարձած ըլլան։ Արդ անկարելի է որ մարդիկ ամէնքն ալ միաբանին ջնջելու եղծանելու այն մեծամեծ անցից յիշատակարաններն ու հետքերը. և թէ որ կամելու ալ միաբանին գործադրելն անկարելի է։ Այս բանիս վկայ կրնան ըլլալ այնչափ մարդկանց պատրաստ ջանքն որ շատ անգամ ձեռք զարկին մոլեխտական և քրիստոնէական յայտնութեան յիշատակարաններն ջնջելու, և ոչ երբեք յաջողեցան։

ԺԱ. · Յարգաց նշանաց և բարբառոյ · և յարաբերութեանց նոցա ընդ խորհրդոյ ·

Նշանն է զգալի ինչ յիշեցուցիչ այլոյ առարկայի ։ — Նշանք զանազանին՝ ի բնական և յարուեստական կամ դաշնադրեալս ։ — Բնական նշանք բնութեան վրայ հաստատեալ են · ինչպէս ծուխն ընշան է հրոյ , և ճիչ անասնոյ յայտնէ զուրախութիւն կամ զցաւ ։ — Իսկ արուեստական կամ դաշնադրեալ նշանք՝ նշանակեալ առարկային հետ յարաբերութիւն մի չունին՝ բայց եթէ մարդկանց իրարու հետ դրած դաշանց համեմատ · որպիսի են բառք թէ յօդաւորեալք և թէ գրեալք ։ Ուստի դաշանց զօրութեամբ է որ սա ձայնն սա գաղափարս կը բացատրէ , և այս ինչ գիրն այս ինչ ձայնն ։ Այս նշանաց բովանդակութեամբն կազմի բարբառն կամ լեզուն ։

Բարբառ ասելով կը հասկցուին խորհրդոյ արտաքին կամ զգալի նշաններն ։ — Բարբառն երկու տեսակ է , բնական՝ ինչպէս են շարժուածք ինչ և ձայնք , և դաշնադրեալ՝ որպիսի են որոշեալ շարժուածք ինչ , բառք յօդաւորեալք և գիր ։

Յարաբերութիւն բարբառոյ ընդ խորհրդոյ · — Հոգին կրնայ ճանաչել առանց զգալի նշանաց , առանց գրոյ և յօդաւորեալ բար-

բառոյ։ — Վասն զի ո՛վ կրնայ ժխտել թէ աննիւթ հոգիք որպիսի են հրեշտակք, և հոգիք անջատեալք 'ի մարմնոյ՝ անկարող ըլլան ճանչնալու. իսկ արդ երկուքն ալ զգալի նշաններ գործածել չեն կրնար։

Սակայն ա. ներկայ վիճակիս մէջ հոգին այնպէս միացեալ է ընդ մարմնոյ՝ որ չկըրնար խորհիլ, անդրադառնալ, քննել, դատել, բանավարել՝ առանց զգալի նշանաց գործածութեանն՝ որ կօգնեն իրեն զգացութեանց և պատկերողութեան անհաստատութիւնն հաստատելու և գաղափարներն ըմբռնելու։ — Այս նշաններս հարկ չկայ որ միայն բառ ըլլան, այլ կըրնան ըլլալ նաև պարզապէս պատկեր իրաց կամ նշանակ ինչ յիշեցուցիչ։

բ. Դարձեալ ներկայ վիճակիս մէջ առանց զգալի բարբառոյ ձեռնտուութեանն չենք կարող խորհուրդնիս իրարու իմացընել. արդ ո՛վ չգիտեր թէ ո՛րչափ ազդեցութիւն ունի գաղափարաց հաղորդակցութիւնն իմացողութեան զարգացմանն։ Այս ուրեմն բարբառն ոչ է սկիզբն՝ այլ միջոց և էական պայման կատարելագործութեան իմացողութեան՝ չէ թէ ճանաչողութեան։

Բարբառոյ օրէնքն տրվեցնող գիտութիւնն կըսուի քերականութիւն, որ է առուեստ ուղիղ խօսելոյ։ — Որ և իցէ ազգաց լեզուաց մէջ երկու՝ տարերք կան, բառ որ յայտնիչ է գաղափարի, և շարա-

գրութիւն՝ որ յայտնէ զյարաբերութիւնս զաղափարաց։ — Ուստի ամէն բերականութիւն երկուսման կը բաժնուի, որոնցմէ առջինն զատ զատ բառից վրայ կը խօսի, և երկրորդն բառից բաղկացութեան կամ իմաստից վրայ։ — Դարձեալ ամէն լեզուաց մէջ ինն կամ տասն տեսակ բառեր կան, որոնցմէ գլխաւորներն իրեք են. գոյական՝ որ է ենթակայ շարադրութեան, որ ըստ քերականաց կ'ըսուի տէր կամ անուն. ածական՝ որ է մակդիր շարադրութեան, որ ըստ քերականաց խնդիր կ'ըսուի. և բայ՝ որով ենթակային մակդիրին հետ յարմարութիւնն կը հաստատուի կամ կը մերժի։

ԺԲ. Յաղագս ոճոյ, վերլուծական և շարադասական.

Ոճն է կարգ՝ որուն կը հետևինք վախճանի մի հասնելու համար, օրինակ իմաստ ծանօթութիւն ճշմարտութեան։ Այս կարգաւ ծանուցեալ ճշմարտութիւններն այնպէս կը շարենք՝ որ գիտցածնիս աւելի աղէկ միտք պահենք, անկատար գիտցածնիս աւելի լաւ ըմբռնենք, և դեռ չգիտցածնիս յայտնի ընենք։ — Գլխաւոր երկու ոճ կան, վերլուծութիւն և շարադասութիւն։

Վերլուծութիւնն է ամբողջն իր մասանցն վերածել՝ զանոնք մի առ մի քննելու համար։ Օրինակ իմն, եթէ ժամացոյց մի առնում ձեռքս և անոր գործիքն իրարմէ զատեմ, և ամէն մէկ մասն առանձին քննեմ՝ վերլուծութիւն ըրած կ'ըլլամ։ — Նմանապէս եթէ սկզբան մի կամ հանրական ճըշմարտութեան կամ գիտութեան և կամ միացեալ ճշմարտութեանց մէջ եղած մասնական ճշմարտութիւններն զատ զատ քննեմ՝ վերլուծութիւն ըրած կըլլամ։

Շարադասութիւնն է ամբողջութիւն մի ձևացնել՝ անոր բովանդակութիւնն քննելու համար։ — Օրինակ, իմն եթէ ժամացուցին մասանցն ամբողջութեան հետ ունեցած յարաբերութիւններն նկատեմ, կամ թէ գիտութեան մի կամ հանրական սկզբան մի հետևութիւններն՝ նոյն իսկ սկզբան մէջ նկատեմ, կամ թէ գիտութեան մի զանազան ճիւղերն՝ այն գիտութեան բովանդակութեան մէջ՝ շարադասութիւն ըրած կըլլամ։

ԺԳ. Յաղագս սահմանի, բաժանման և դասաւորման.

Իր մի ոճով ապացուցանելու համար՝ նախ պէտք է ցուցընելոյ իրն սահմանել, յետոյ ճշմարտել զսահման առարկային՝ քննելով զմասունս որ բովանդակին 'ի

նմա, որով կըլլայ բաժանումն. և այն ա-
տեն առաջարկեալ ճշմարտութիւնն դիւ-
բաւ կը ցուցուի։ Սահմանին մէջ կենթա-
դրուի հանրական հայեցուած մի՝ որ սահ-
մանելու առարկայն բովանդակապէս կը
բռնէ. իսկ բաժանման մէջ քննութիւն
մի որ հետզհետէ մասերն կը զննէ։ Ապա
ուրեմն սահմանն շարադասական գործո-
ղութիւն մի է, իսկ բաժանումն վերլուծա-
կան. և այս երկու գործողութիւնս միշտ
պէտք է որ միատեղ ըլլան։ Այս գործո-
ղութեան կը յարմարի Սրբոյն Թովմայի
դատողութեան համար ըսածն, թէ մար-
դուս միտքն իմացողութեան կամ իրին
ապացուցութեանն կը հասնի՝ բաժանելով
զանիկայ և վերատին բաղադրելով, այս-
ինքն բաժանմամբ վերլուծելով և սահմա-
նով շարադասելով։

Սահմանն կրնայ ըլլալ անուշան՝ որ կը յայտ-
նէ զիմաստ բառի իրիք, և իրաց որ կը
յայտնէ առարկայի մի քնութիւնն։ Իր մի
ճանչցնելու համար՝ հարկ է անոր էական
հանգամանքն ցուցնել, և նախ զանոնք որ
հատարակ են նոյնատեռ առարկայից, և
յետոյ զանոնք որ որոշեն զնա այս առար-
կայներէն. այս է ըսածն ցուցանել զանոնք
մերձաւոր և զգաւորիչներ անուակարար։
Սեռն մերձաւոր՝ են հանգամանքն՝ հատա-
րակ ամէն նոյն դասու առարկայից. իսկ
զանազանութիւնն անուակարար՝ են հան-
գամանքն՝ որ կորոշեն 'ի միմեանց զայլ և

այլ տեսակ առարկայս բովանդակեալս 'ի նմին դասու ։

Այսպէս այս սահմանիս մէջ Մարդն է կենդանի բանական, կենդանին ցուցանէ զսեռն մերձաւոր կամ զդաս էակաց՝ որ բաժանին անմիջապէս յերկուս տեսակս, յորոց մէկն է մարդն և միւսն անասունն. իսկ բառն բանական ցուցանէ զզանազանութիւնն տեսակարար կամ զհանգամանս որ որոշէ զմարդ յայլոց կենդանեաց առ հասարակ ։ Իսկ սեռք հեռաւորք կրնան ըլլալ գոյացութիւն կամ էակ ։ Եթէ մարդս սահմանեմ գոյացութիւն կամ էակ հոգեղէն, զանազանած չեմ ըլլար զանիկայ 'ի հրեշտակէ՝ որ նոյնպէս գոյացութիւն կամ էակ մի է հոգեղէն ։

Սահմանի ամէն կանոններն այս միակ կանոնին կրնայ վերածուիլ՝ որ է թողուցիչ և միայն սահմանելոյն պատկանեցի. կամ թէ ըսենք սահմանն պիտի ըլլայ ա. հանրական, այսինքն բովանդակէ զամենայն առարկայս որոնց վրայ կը տարածուի իրն սահմանելի. բ. յատուկ, այսինքն ուրիշ բան չբովանդակէ ։ Սահմանն հանրական կըլլայ՝ երբ ցուցանէ զսեռն մերձաւոր սահմանեալ առարկային. և յատուկ՝ երբ ցուցանէ զզանութիւնն տեսակարար ։

Դարձեալ սահմանն պէտք է ըլլայ պայծառ՝ անոր համար պէտք է զգուշանալ տարտամ ու երկդիմի բառերէ, և սահմանին մէջ պիտի չյիշուի այն բառն զոր կու-

զեմք սահմանել կամ անոր նման բան մի։ Անոր համար այս սահմանս թէ Մարդն է խմացողութիւն իմն ապաստարկեալ 'ի գործարանաց՝ աւելի ճարտասանական և քերթողական սահման է քան թէ իմաստասիրական։ Որովհետև այս կերպով հրեշտակն ալ մարդ պիտի համարուի երբ մարմնաղէստ երևնայ և 'ի գործարանաց սպասաւորի։ Նմանապէս սահմանելն թէ մարդն է հոգի մարդկային անորոշ է. որովհետև չգիտցուիր թէ մարդկային ըսելով ինչ կը հասկցուի, և խնդիրն ճիշդ անոր վրայ է։

Բաժանումն ցուցանէ զմասունս բոլորին, ինչպէս զտեսակս սեռի իրիք և բանի մի էական յատկութիւններն։ — Ամենայն բաժանումն երկու հանգամանք պէտք է ունենայ, ամբողջութիւն և հակադարձութիւն։ Ամբողջութիւնն է որ ամենևին մաս մի դուրս չմնայ. իսկ հակադարձութիւնն՝ որով զիրար վանող մասունքն միանակ յիշուին։ Օրինակի համար՝ եթէ այսպիսի բաժանմամբ ըսես թէ Աշխարհքիս բնակեալ մասերն չորս են Եւրոպա, Ափրիկէ, Ամերիկա և Ովկիանիա, մոռնալով Ասիոյ մասն, բաժանումդ սխալ կըլլայ, որովհետև ամբողջ չէ. կամ թէ ըսես Աշխարհքիս բնակեալ մասերն վեց կը բաժնուին Եւրոպա, Ասիա, Ափրիկէ, Ամերիկա, Ովկիանիա և Հայաստան, դարձեալ սխալ կըլլայ բաժանումդ, վասն զի զատ մասի պէս կը դնես Հայաստանն՝ որ Ասիոյ մասն է,

և Ասիոյ և Հայաստանի մէջ հակադարձութիւն չկայ, այլ վերջինն առջինին մէջն է։

Դասաւորութիւն ըսելով կը հասկցուի կարգը որով զառարկայս, զգաղափարս և զիրս կը շարենք։ — Դասաւորութիւնք կամ բնականք են և կամ արուեստականք՝ ըստ որում իրաց բնութեանն կամ պարզ դաշնադրութեան մի վրայ հաստատուած են։ — Բնական դասաւորութեամբ միատեղ կը դնենք այն իրերն որ իրարու հետ յարաբերութիւն մի ունին. օրինակի համար եթէ մատենադարանի մի գրքերն ըստ կարգի նիւթոց շարես՝ դասաւորութիւնդ կըլլայ բնական։ — Արուեստական դասաւորութեամբ միատեղ կը դնենք այն առարկայներն՝ որ դաշնագրեալ եղանակաւ մի իրարու յարաբերութիւն ունին. օրինակի համար եթէ մատենադարանի մի գրքերն ցուցակի մի թուոց յարմար դրած ըլլայ՝ առանց անոնց մէջ եղած նիւթոց ուշ դնելու։

ԺԴ. Յաղագս ոճոյ յայլ և այլ կարգս գիտութեանց.

Ասինք որ ոճն է կարգ զոր կը դնենք մեր խորհրդոցն։ — Ապա ըստ ոճոյ՝ գիտութիւնք կրնան բաժնուիլ 'ի գիտութիւնս զննողութեան և 'ի գիտութիւնս բանաւորութեան։

Զննողական գիտութիւնք անոնք են որ գործոց վրայ հաստատեալ են։ — Բնու-

թիւնն կը հաստատէ զգործս, և ներածութիւնն հանրական օրէնքներ կը հանէ անոնցմէ՝ որ զանոնք ուղղելու և բացատրելու կը գործածուին։ — Այսպէս են բնաբանական և բնական գիտութիւնք և գիտութիւնք պատմականք։ — Բնաբանական գիտութիւնք զննողութեան վրայ կաւելցընեն փորձառութիւնն և ենթադրութիւնն։ — Փորձառութիւնն է զննեալ երևոյթներն նորէն յառաջ ածել՝ զննողութիւնն ճշմարտելու համար։ Օրինակ իմն, զններ եմ որ սաստիկ անգայտացած կամ զանազան կազերով լեցուած օդոյ մէջ՝ կենդանիք չեն ապրիր՝ այլ կը մեռնին. այս զննողութիւնս փորձառութեամբ ճշմարտելու համար, օդահան մեքենային ընդունարանին տակն կենդանի մի կը դնեմ ու օդն կը դատարկեմ, և կամ կենդանին մահաբեր կազերու անօթի մի մէջ կը փակեմ։ — Ենթադրութիւնն վարկած մի է որ երևոյթ մի բացատրելու համար կը գործածենք, և յետոյ զանիկայ ալ ճշմարտելու համար զննողութեան տակ կը ձգենք։ Օրինակ իմն, Կոպեռնիկոս վարկանի որ երկիրս արևուն բոլորտիքն կը դառնայ, յետոյ իր ենթադրութիւնն կը ճշմարտէ զննեալ գործոց յարմարութեամբն։ — Իսկ պատմական գիտութիւնք կաւանդեն զանցս՝ զննութեամբ ականատես վկայից հաւաքեալս. այս բանիս մէջ աղէկ աչալրջութիւն և զգուշութիւն պէտք է ճշմարտախօս վկա-

յութիւններն ստուերէն որոշելու համար։

Բանավարական գիտութիւնք անոնք են՝ որ անմիջապէս սկզբանց վրայ հաստատեալ են։ — Բանավարութիւնն ալ արտածութեամբ անոնցմէ առաջ եկած հետևութիւններն կը յայտնէ։ — Այսպէս է իմաստասիրական, չափաբերական և աստուածաբանական գիտութեանց մէջ եղած ոճն։ — Իմաստասիրական գիտութեանց մէջ բնազանցութիւնն սկզբունքն կը դնէ. յետոյ բանախօսութիւնն բանավարութեան ձեռօք այս սկզբունքներէն արտածութիւն ընելով կը հաստատէ թէ՛ նիւթեղէն աշխարհի գոյութիւնն ու յատկութիւններն, հոգւոյ և Աստուծոյ գոյութիւնն, և թէ՛ այն գործնական բովանդակութիւններն՝ որոնց միութենէն կը կազմին բարոյականն և իրաւունք։ — Չափաբերական գիտութեանց մէջ սահմանքն և առածք դրուելէն ետև՝ բանավարութիւնն զանոնք կը գործածէ հայեցուածներն ցուցընելու և առարկուածներն լուծելու համար։ — Աստուածաբանական գիտութեանց մէջ յայտնութիւնն վարդապետութիւնն սահմանելէն ետև՝ բանավարութիւնն անկէց կը սկսի հայեցողական կամ բարոյական հետևութիւններ հանել, որոնց բովանդակութեամբն կազմի աստուածաբանութիւնն։

ԺԷ. Յաղագս հանգիստոյ, ներածական և արտածական.

Հանգիստութիւնն այն իրաց մէջ կըլլայ՝ որ թէ և այլ և այլ կարգի կը վերաբերին՝ սակայն իրարու հետ նմանութեան յարաբերութիւններ ունին. օրինակի համար տարեւոյն եղանակներուն և կենաց հասակներու մէջ հանգիստութիւն մի կայ։

Ներածութիւն եւ արտածութիւն. — Ներածութիւնն մասնաւորէն ընդհանուրն կը հետեւցընէ. իսկ արտածութիւնն յընդհանուրէն մասնաւորն։ — Ներածութիւնն զննողութեամբ և փորձառութեամբ մասնաւոր իրերն կը հաւաքէ, և անկէց կը բարձրանայ առ հանրական օրէնս, առ պատճառն և առ սկիզբն զննեալ արդասեաց։ — Իսկ արտածութիւնն հանրական սկիզբէ մի կը սկսի՝ և անկէց հետեւութիւններ կը հանէ։ — Օրինակի համար կը տեսնեմ որ մէկ երկու երեսուն հարիւր մարդ կը մեռնին, պատմութենէ ալ գիտեմ որ ամէն մարդիկ մեռեր են, ապա ներածութեամբ կը հետեւցընեմ թէ ուրեմն մահկանացութիւնն հանրական օրէնք է մարդկութեան։ — Կամ թէ մարդն զննելով՝ ապականութեան սկիզբ մի կը գտնեմ 'ի նմա. և արտածութեամբ այս օրինակ կը բանավարեմ. մարդս իր բնութեան մէջ

ունի զպատճառ մահու, ապա ուրեմն մահկանացութիւնն հանրական օրէնք է մարդկութեան։

ԺԶ. Յաղագս բանավարութեան առաջարկութեան.

Խմաստասէրն իրաց գաղափարներն գըտնելէն, ստուգելէն և դասաւորելէն ետև, պէտք է քննէ անոնց ճշմարտութիւնն, այսինքն պէտք է տեսնէ անոնց մէկմէկու և արտաքին իրաց հետ ունեցած յարմարութիւնն կամ անյարմարութիւնն, և բաղդատել գաղափարաց մէկմէկու համաձայնութիւնն ու անհամաձայնութիւնն։ Մտաց այս գործողութիւնն բանավարութիւն կըսուի, որով իր մի կը հաստատէ կամ մերժէ. կը հաստատէ՝ երբ գաղափարներն իրարու համաձայն են, ու կը մերժէ՝ երբ անհամաձայն կըլլան։ — Այս բանավարութեան կարողութեամբ ծանուցեալ ճշմարտութեամբ մի կապացուցանենք կիսկատար ճանչցուած ճշմարտութիւն մի, որ ինչպէս ըսինք՝ երկու եղանակաւ կըլլայ. ներածութեամբ՝ այսինքն 'ի մասնաւորէ յընդհանուրն ելլելով, և արտածութեամբ՝ այսինքն յընդհանուրէն 'ի մասնաւորն իջնալով։

Առաջարկութիւնն՝ կամ ըստ ոմանց նախադասութիւնն՝ բանավարութեան մի խօսքով բացատրութիւնն է. զոր օրինակ եթէ

հոգին ձեան և սպիտակութեան գաղա-
փարաց մէջ համաձայնութիւն մի տեսանէ՝
բանաւորութիւն ըրած կըլլայ, իսկ եթէ
զգացածն բացատրէ ըսելով՝ ձիւնն է սպի-
տակ, այս բացատրութիւնն կըսուի առա-
ջարկութիւն։ — Երեք մասն կունենայ ա-
ռաջարկութիւնն. ենթակայ, մակդիր և զօդ.
զոր օրինակ այս առաջարկութեան մէջ՝
Հոգին է անմահ, հոգի է ենթակայ, անմահ
մակդիր, է զօդ։ Ենթակայն ու մակդիրն
մէկ անուամբ՝ եզերք կամ ծայրք առաջար-
կութեան կըսուին։ — Բայց շատ անգամ
առաջարկութեանց մէջ այս երեք մասերս
ալ ամբողջ չեն գտուիր կամ զանց կաս-
նուին ու զօրութեամբ կը հասկցուին. զոր
օրինակ՝ Ալեքսանդր աշխարհակալ կըսուի
փոխանակ ըսելու՝ Ալեքսանդր տիրապե-
տեաց աշխարհի. կամ աւելի համառօտ՝
կըսենք երկինք որոտան, փայլատակին,
և այլն. այս տեսակ առաջարկութիւններն
կրճատ կըսուին։

Առաջարկութիւնք երկու տեսակ յատ-
կութիւնք կունենան. բացարձակ և վերբե-
րական։ Բացարձակ կըսուին այն յատ-
կութիւններն՝ որ ինչ և իցէ առաջարկու-
թիւն զատ զատ առնելով ունի. իսկ վեր-
բերական յատկութիւնք անոնք են որ այլ
և այլ առաջարկութիւնք իրարու հետ հա-
մեմատուելով կրնան ունենալ։ — Առա-
ջարկութեանց բացարձակ յատկութիւն-
ներն են քանակ և որակ։

Առաջարկութեան քանակն անոր իմաստին տարածութիւնն է, որուն նկատմամբ երեք տեսակ առաջարկութիւն կըլլայ. հանրական, մասնական և անհատական։ — Հանրական կըսուի առաջարկութիւնն՝ երբ իր ենթակայն բոլոր ընդարձակութեամբն առնուած է. օրինակի համար՝ Ամենայն մարմին է բաժանելի։ Առաջարկութիւն մի կրնայ ըլլալ բնազանցօրէն հանրական՝ որ է առանց ամենևին մաս մի դուրս ձգելու, ինչպէս է դրած օրինակն, և բարոյապէս հանրական՝ որ է բացառութեամբ իւիք. ինչպէս ասիկայ՝ Ամենայն երիտասարդք փոփոխամիտք են։ — Մասնական կըսուի առաջարկութիւնն՝ երբ ենթակային տարածութիւնն սակաւ է. զոր օրինակ՝ Ոմանք 'ի մարդկանէ կեղծաւորք են։ — Անհատական կամ եզական կըսուի առաջարկութիւնն՝ երբ ենթակայն մէկ անձ մի կամ մէկ բան մի է միայն. զոր օրինակ՝ Լամբրոնացին մեծ ճարտասան է։ — Շատ անգամ խօսքին իմաստէն կը հասկցուի առաջարկութեան մի հանրական կամ մասնական ըլլալն։

Որպէս կըսուի առաջարկութեան մի հաստատական կամ մերժական, սուտ կամ ճշմարիտ ըլլալն։ — Առաջարկութեան մի հաստատական կամ մերժական ըլլալն ցուցընողն մակդիրն է, որ կը հաստատէ կամ կը մերժէ ենթակային ինչ կամ ինչպէս ըլլալն. զոր օրինակ՝ Ոսկին մետաղ ինչ է.

Ոսկին ոչ է քար ինչ։ — Հաստատական առաջարկութեան մակդիրն սովորաբար իր ընդարձակութեան մէկ մասին վրայ միայն կառնուի. զոր օրինակ այս առաջարկութեան մէջ Ոսկին մետաղ է, յայտնապէս կ'իմացուի թէ ոսկին տեսակ մի մետաղ է, և ոչ թէ ամէն տեսակ մետաղ Ոսկի է։ Միայն թէ երբոր ենթական ու մակդիրն բոլորովին նոյն զօրութիւնն և նշանակութիւնն ունին՝ հաստատական առաջարկութեան մակդիրն ալ իր բոլոր ընդարձակութեամբն կառնուի. այսպէս են ամէն իմաստասիրական սահմաններն։ Իսկ մերժական առաջարկութեան մակդիրն իր բոլոր ընդարձակութեամբն կառնուի. օրինակի համար՝ Ս.ծուխն չէ մետաղ ինչ, ասել է թէ մետաղայ մէկ տեսակէն ալ չէ։ — Ս.առաջարկութեան ճշմարիտ ըլլալն այն է որ մակդիրն ենթակային համեմատ ըլլայ, կամ թէ իրն ճշմարտապէս բացատրէ. զոր օրինակ՝ Բարի է Ս.ստուած, Ս.ստուած ոչ է անիրաւ։ Իսկ սուտ կըլլայ առաջարկութիւնն՝ երբ մակդիրն ենթակային չյարմարիր, և այնպիսի բան մի կը հաստատէ՝ որ իրօք այնպէս չէ. զոր օրինակ՝ Ս.ստուած է էակ անկատար։

Ս.առաջարկութեանց վերբերական յատկութիւններն են փոխադարձորիշն և հակադրորիշն։ — Փոխադարձ կըսուին առաջարկութիւնք՝ երբ ենթական մակդիր և մակդիրն ենթակայ կրնայ ըլլալ՝ առանց

նշանակութիւններին փոխուելու։ Եւ որպէս զի նշանակութիւններին չփոխուի՝ պէտք է իրենց որակն նոյն մնայ, բայց քանակն կրնայ փոխուիլ։ Երբ քանակն ալ անփոփոխ մնայ՝ փոխադարձութիւնն պարզ կըսուի. զոր օրինակ՝ Հոգին ոչ է մարդ. Մարդն ոչ է հոգի։ Իսկ երբ հարկ կըլլայ առաջարկութեան մի քանակն փոխել՝ որպէս զի առանց իմաստն փոխուելու փոխադարձի, փոխադարձութիւնն կըսուի պատահական. զոր օրինակ այս առաջարկութիւն՝ Ամենայն մարդիկ մահկանացուք են, չկրնար պարզ փոխադարձութեամբ հանրական առաջարկութիւն դառնալ և ըսուիլ՝ Ամենայն մահկանացու էակ մարդ է. ուստի հարկ է մասնական առաջարկութեան դարձնել և ըսել՝ Ոմանք յէակաց մահկանացուաց մարդիկ են։

Առաջարկութիւնք իրարու հակադիր կըսուին՝ երբ մէկուն ճշմարտութենէն կիմացուի միւսոյն ստութիւնն. զոր օրինակ՝ Ամենայն մարդիկ չար են. Ոչ ոք 'ի մարդկանէ չար է։ Երկու առաջարկութեանց մէջ հակադրութիւն ըլլալու համար՝ պէտք է որ թէ ենթակային և թէ մակդրին վրայ նոյն մտքով ըլլայ ստորաստութիւնն ու բացասութիւնն. զոր օրինակ հակադրութիւն չկայ այս առաջարկութեանց մէջ՝ Խորագէտ է Գրիգոր. Գրիգոր ոչ է խորագէտ, թէ որ մէկուն մէջ խորագէտ բառն իմաստուն նշանակէ, միւսոյն մէջ նենգա-

ւոր։ — Հակադրութիւնն երկու տեսակ է, հակառակաև և հակառակ։ Հակասական կըսուին առաջարկութիւնք՝ երբ մէկն ուղղակի ներհակն կըսէ միւսոյն. զոր օրինակ՝ Գեղեցիկ է օդն. Օդն չէ գեղեցիկ։ Իսկ հակառակ կըսուին իրարու՝ երբոր մէկն զմիւսն պէտք եղածէն աւելի կը հերքէ, զոր օրինակ՝ Գեղեցիկ է օդն. Կարի անհարթ է օդն։ — Երկու հակասական առաջարկութիւնք չեն կրնար երկուքն ալ ճշմարիտ կամ երկուքն ալ սուտ ըլլալ. զոր օրինակ՝ թէ որ բոլորակն կլոր է, չկրնար ճշմարիտ ըլլալ բոլորակն կլոր չէ ըսելն. և թէ որ սուտ է ըսելն թէ բոլորակն կլոր չէ, չկրնար սուտ ըլլալ ըսելն թէ բոլորակն կլոր է։ Ամեն հակասական առաջարկութեան մի ճշմարտութենէն՝ կրնայ հաստկցուիլ մէկալին ստութիւնն, ասոր ալ սըտութենէն մէկալին ճշմարտութիւնն։ — Հակառակ առաջարկութիւնք չեն կրնար երկուքն ալ ճշմարիտ ըլլալ. ուստի մէկուն ճշմարիտ ըլլալէն՝ կրնայ իմացուիլ միւսոյն ստութիւնն։ Բայց կրնան երկուքն ալ սուտ ըլլալ. վասն զի երկուքին մէջ տեղն կըրնայ ուրիշ առաջարկութիւն մի գտնուիլ՝ որ երկուքն ալ սուտ հանէ. օրինակ իմն այս առաջարկութիւններս ալ սուտ են. Ամենայն մարդ առաքինի է. և Զինք որ առաքինի. վասն զի ճշմարիտն այս է որ մարդկանցմէ ոմանք միայն են առաքինի։ Ուստի մէկ հակառակ ճշմարտութեան մի սը-

տութենէն չկրնար իմացուիլ մէկալին ճըշմարտութիւնն։

ԺԷ. Յաղագս շարաբանութեան.

Շարաբանութիւնն ըստ ոմանց հաւաքաբանութիւն՝ պատճառաբանութեան եւ բեք առաջարկութիւններէ բաղկացած է, որոնց վերջինը միւս երկուքին մէկէն կելէ՝ երրորդին միջնորդութեամբը։ — Երբ առաջարկութիւն մի ապացուցանել պէտք ըլլայ՝ շարաբանութեամբ, կըսուի խնդիր. իսկ ապացուցուելէն ետեւ կըսուի եզրակացութիւն կամ աշարտ, քովանդակութիւն կամ հետեւանք, զոր պէտք չէ շփոթել հետեւութեան հետ որ բովանդակութեան և նախընթաց առաջարկութեան կապակցութիւնն է. զոր օրինակ՝ մարմին մի տեսնելով կը հարցնեմ թէ ինչ տեսակ մարմին է՝ կենդանի, բոյս թէ մետաղ. ասիկայ խնդիր է. իսկ երբ շարաբանութեամբ այս լուծումը տանք խնդրոյն.

Կենդանի կըսուի այն էակն՝ որ կապրի ու ինքն իրմէ տեղէ տեղ կը շարժի.

Իսկ արդ այս մարմինն ալ էակ մի է՝ որ կապրի ու ինքն իրմէ տեղէ տեղ կը շարժի.

Ուրեմն այս մարմինն կենդանի է։

Ասանկով խնդրոյն լուծումն կըլլայ բովանդակութիւն կամ հետեւանք։

Շարաբանութեան հիմն այս է որ երբ

երկու գաղափար իրարու հետ բաղդատելով՝ յայտնի չենք ըմբռներ անոնց իրարու հետ ունեցած յարմարութիւնն կամ անյարմարութիւնն, ուրիշ երրորդ գաղափար մ՚ալ ձեռք կառնունք, ու անոր հետ բաղդատելով միւս երկուքն՝ երբ կը տեսնենք որ երկուքն ալ անոր հետ կը յարմարին՝ անկէց կը հետևցնենք թէ իրարու հետ ալ կը յարմարին. զոր օրինակ կուզեմ իմանալ թէ ինչ յարմարութիւն կայ այս երկու գաղափարաց մէջ՝ մարդկային հոգի և անմահութեան. երրորդ գաղափար մի կը գտնեմ որ է խոհուն էակ, և այս խորհրդածութիւնս կընեմ շարաբանութեան ձևով.

Ամենայն խոհուն էակ՝ անմահ է,
Մարդկային հոգին ալ խոհուն էակ է,
Ուրեմն մարդկային հոգին ալ անմահ է։

Այս հոգեկան դատողութեանս օրինաւոր ըլլալուն հիմունքն հետագայ առածս է թէ՝ Երկու գաղափար երբ նոյն են երրորդի մի հետ, իրարու հետ ալ նոյն են. այս առածիս ստուգութիւնն ալ բնազանցական և երկրաչափական այս սկզբանս վրայ հաստատուած է՝ Որ մի են ընդ այլսմ երրորդի՝ նոյն են ընդ միմեանս։

Շարաբանութիւնն եթէ լուծենք՝ երեք եզերք կը գտնենք մէջն, այսինքն մեծ և փոքր եզր՝ որ բաղդատելու գաղափարներն կը ցուցնեն, և միջին եզր որ այն գաղափարաց մէջ եղած նմանութիւնն կամ

անհամանութիւնն կը ցուցնէ. օրինակի համար՝ Ամենայն առաքինութիւն գովելի է,

Իսկ արդ ժուժկալութիւնն է առաքինութիւն,

Ուրեմն ժուժկալութիւնն գովելի է։

Հոս գովելին է մեծ եզրն, ժուժկալութիւնն՝ փոքր եզրն, իսկ առաքինութիւնն՝ միջին եզրն։

Ամեն համար շարաբանութեան մէջ երեք առաջարկութիւնք կը գտնուին՝ մեծագոյն, փոքրագոյն և հետևանք կամ բովանդակութիւն։ Մեծագունին մէջ կըլլայ մեծ և միջին եզրերն. փոքրագունին մէջ փոքր և միջին եզրերն. հետևանաց մէջ մեծ և փոքր եզրերն. ինչպէս վերի օրինակին մէջ կերևի։ — Մեծագոյն և փոքրագոյն առաջարկութիւնք միանգամայն առեալ կըսուին նախադրեալք։

Ուղիղ շարաբանութեան գլխաւոր կանոններն սոսնք են.

Ա. Երեք եզր միայն պիտի ունենայ շարաբանութիւնն, մեծ, փոքր և միջին. և ոչ բնաւ աւելի.

Բ. Ոչ երբէք եզր մի աւելի ընդարձակութիւն իմաստի պիտի ունենայ բովանդակութեան մէջ քան թէ նախադրելոց մէջ. ուստի սխալ է այս շարաբանութիւնս.

Ամէն քառակուսի չորս հաւասար կողմ ունի և չորս ուղիղ անկիւն,

Իսկ-արդ ամէն քառակուսի ձև է,

Ուրեմն ամէն ձև չորս հաւասար կողմ ունի, և չորս ուղիղ անկիւն։

Վասն զի ձև. բառն հետևանաց մէջ աւելի ընդարձակութիւն ունի, քան թէ քառակուսի բառն նախադրելոց մէջ։

գ. Մինչին եզրն դէթ մի անգամ ընդհանուր առմամբ պիտի առնուի. անոր համար հետևեալ շարաբանութիւնն սուտ է.

Մարդ մի արդար է.

Մարդ մի աւազակ է.

Ուրեմն աւազակ մի արդար է։

Վասն զի նախադրեալք ճշմարիտ ալ ըլլան՝ հետևանքն սուտ է. որովհետև մեծին և փոքրին մէջ մարդ բառն այլ և այլ գաղափարով դրուած ըլլալուն՝ անոնց այլ և այլ յատկութիւններն կը բացատրէ, որ մէկմէկու մէջ չեն պարունակիր. և արդարոյ գաղափարն աւազակի գաղափարն չբովանդակեր։

դ. Երկու բացասական առաջարկութիւններէ՝ ոչ երբէք հետևանք մի կելլէ. օրինակի համար.

Քառակուսին եռանկիւնի չէ, և ոչ բոլորակն եռանկիւնի է, հետևցնել չըլլար թէ ուրեմն քառակուսին բոլորակ է կամ չէ. վասն զի երբ երկու իր երրորդի մի չեն պատշաճիր՝ չըլլար հետևցնել թէ իրարու կը պատշաճին։

ե. Երկու ստորասական առաջարկութիւններէ՝ ոչ երբէք բացասական հետևանք կելլէ. ուստի չըսուիր՝ Պետրոսն առաքինի է, Պօղոսն ալ բարեպաշտ է, ուրեմն Անտոն մոլի է։

Զ և Է. Թէ որ նախադրելոց մէկն մասնաւոր է, հետևանքն ալ մասնաւոր կըլլայ. դարձեալ թէ բացասական է՝ հետևանքն ալ բացասական կըլլայ։ Երկուքին մէկէն օրինակ.

Ամէն խոհուն էակ մասունք չունի,
Մարդկային հոգին խոհուն էակ է,
Ուրեմն մարդկային հոգին մասունք չունի։

Յայտնի կերևի որ հետևանքն մասնաւոր է, և միանգամայն բացասական. վասն զի նախադրելոց փոքրագոյնն մասնաւոր է, և մեծագոյնն ալ բացասական։

Ը. Երկու մասնաւոր առաջարկութիւններէ ստորասական կամ բացասական հետևանք մի չելլեր, վասն զի շարաբանութեան Գ. կանոնին համեմատ՝ միջին եզրն գոնէ անգամ մի ընդհանուր առմամբ պիտի առնուի. զոր օրինակ՝ Որովհետև Պօղոս գիտուն է, Պետրոս գիտուն է, չըլլար հետևցնել թէ ուրեմն Անտոն ալ գիտուն կամ տգէտ է։

Վերը գրուած սովորական շարաբանութենէ զատ՝ եզած պատճառաբանութիւններն կըսուին՝ Եզառած, Փաստորդ, Երկայրաբանութիւն, Համաբարդութիւն և Մակածութիւն։

Եզառածն կամ Հնարքն շարաբանութիւն մի է՝ որուն մէջ մեծագոյնն կամ փոքրագոյնն չգրուիր ու լռելեայն կիմացուի, որով կըլլայ կրճատ շարաբանութիւն. օրինակի համար.

(Պարզն է անապական),
Հոգին է պարզ,
Այս հոգին է անապական։
Այժմեան անանիւթ գոյակ անմահ է,
(Հոգին է անանիւթ գոյակ),
Ուրեմն հոգին անմահ է։

Փաստորդ կըսուի երբ նախադրելոյ մէկին կամ երկուքին վրայ ալ իրենց փաստն ու ապացոյցն կաւելցուի՝ զանոնք պարզելու համար. և ասիկայ դատաստանական ճառերու մէջ շատ կը գործածուի. ինչպէս Կիկերոնի՝ Յաղագս Միլոնի ճառն. օրինակ.

Որ դարանի կենաց ուրուք՝ արժանապէս սպանանի 'ի նմանէ (հաստատի յիրաւանց և յօրինակաց).

Իսկ արդ Կլաւդիոս դարանեցաւ կենաց Միլոնի (հաստատի և այս 'ի դիպաց և 'ի պարագայից).

Այս ուրեմն որ դարանէրն յիրաւի սպաննաւ 'ի նմանէ։

Երկապրաբանութիւն կամ Եղջերաւոր շապրաբանութիւն կըսուի շարաբանութիւնն՝ երբ խօսքը երկու մասն բաժնուի իրարու ընդդիմակ, ու բոլորին վրայ հետևցնենք՝ ինչ որ մասանց վրայ հետևցուցած է։ Այս պատճառաբանութիւնս շատ զօրաւոր է եթէ լաւ օրինի ըլլայ. այսինքն ա. ամբողջն ճիշդ բաժնուի իր մասանց վրայ. բ. ամէն մէկ մասէն հանուած հետևանքն ճշմարիտ ըլլայ ու անխուսափելի. գ. չըլլայ թէ հակառակորդն նոյն երկապրաբա-

նութիւնն ընդդին դէմ կարենայ դարձնել. օրինակ՝ Տերտուղիանոսի երկրայրաբանութիւնն հեթանոսաց դէմ 'ի պաշտպանութիւն քրիստոնէից.

Քրիստոնեայք կամ չարագործ են և կամ անմեղ.

Եթէ չարագործ են՝ ընդէր ոչ եկակոչ առնէք զնոսա և 'ի հարց փորձ մատուցանէք.

Իսկ եթէ անմեղ՝ ընդէր սպանանէք։

Հանդարտութիւն է երբ նախադրելոց իրարու հետ ունեցած վերաբերութիւնն գտնելու համար՝ բաւական չըլլար մէկ միջնորդ եզր մի, հապա երկու, երեք, և այլն. միջնորդ եզրերն ալ շատ ըլլալով առաջարկութիւնք ալ շատ կըլլան. անանկ որ առջի առաջարկութիւնն զերկրորդն կը պարզէ, երկրորդն զերրորդն, և այլն. օրինակ.

Հոգին է պարզ,

Պարզն է առանց մասանց,

Որ առանց մասանցն է՝ անբաժանելի է,

Անբաժանելին անապական է,

Անապականն է անմահ,

Ապա հոգին է անմահ։

Սոր մէջ պիտի նայուի որ բառերն միշտ նոյն մտքով առնուին, և մէկ առաջարկութիւն զմիւսն բացատրէ, ապա թէ ոչ 'ի տոյգ սկզբանց սուտ հետևանքներ կելլեն. ինչպէս Թեմիստոկղեսի ըսածն. Որդին իմ՝ նորածին իշխէ մօր իւրում, Այր իւր ինձ, Ես աշխարհին յունաց, Յունաս-

տան Ասիոյ, Ասիա բովանդակ աշխարհի, Ասպա որդին իմ նորածին իշխէ բովանդակ աշխարհի։

Մակածութիւն կըսուի երբոր մասնաւոր ճշմարտութեանց ծանօթութենէ ընդհանուր ճշմարտութեան մի ծանօթութեանն կը հասնինք. կամ երբ բովանդակ տեսակաց յատկութիւններն համրելով՝ նոյն յատկութիւններն բոլոր սեռին վրայ ալ կը հաստատենք. բայց պէտք է տեսակաց թուումն ամբողջ ըլլայ. զոր օրինակ ցուցընելու համար թէ մարդ իր կենաց ոչ մէկ ժամանակին մէջ երջանիկ չէ, մակածութեամբ կըրնայ ըսուիլ.

Մարդ իր ազայութեան մէջ երջանիկ չէ, որովհետև շատ բնական հիւանդութեանց ենթակայ է, և իր ազատութիւնը չկրնար գործածել.

Պատանեկութեան մէջ երջանիկ չէ, որովհետև ախտերն ու կրքերը վրան կը տիրեն, զինքն գերի կընեն.

Այր կատարեալ եղած ատենն ալ երջանիկ չէ, որովհետև շատ հոգեր ու տըրտմութիւններ ունի, փառասիրութիւնն ու նախանձն ալ զինքն կը մաշէ.

Ծերութեան ատենն ալ երջանիկ չէ, որովհետև հիւանդութիւններն ու ցաւերն կը շատնան, և մահուան տխուր յիշատակն միշտ իր առջին է.

Ասպա մարդ կենաց ո՛ր և է ժամանակին մէջ երջանիկ չկրնար ըլլալ։

Շարաբանութիւնն կը գործածուի առաջարկութեան մի ճշմարտութիւնն ապացուցանելու և յայտնելու համար։ Իսկ ճշմարիտն խնդրելու և գտնելու համար ոչ թէ շարաբանութիւն՝ այլ մտադրութիւն, դիտողութիւն և քննութիւն պէտք է գործածել։

Շարաբանութեան ձևն գործածելու գլխաւոր երկու կերպ կայ.

Ա. Եթէ կուզես քու հակառակորդիդ որպէս սկզբունք դրած ենթադրութեան ստութիւնն ցուցնել՝ շարաբանութեամբ անոր առաջարկութեան հետևութիւններն հանէ. այս հետևութեանց ստութենէն կերևի այն կարծեցեալ սկզբանց ստութիւնն ալ։ Օրինակի համար եթէ խղճի և խօսից բացարձակ ազատութիւնն սկիզբն դնելով ուզէ հետևութիւններ հանել՝ դու շարաբանութեան օրինօք անոր ենթադրութիւնն շրջէ այսպէս. Խղճի և խօսից բացարձակ ազատութեան մէջ կը բովանդակի ազատութիւնն չունելոյ ինչ կրօնս ամենևին, սրբազան իրերն հայհոյելու, պատրելու և ուխտաղանց գտնուելու, և այլն. արդ այս ազատութիւններս՝ հասարակաց խաղաղութեան և միութեան հակառակ են, ապա ուրեմն բացարձակ ազատութիւնն ալ եղծիչ և աւերիչ է ընկերական կարգաց։

Բ. Եթէ կուզես քու հակառակորդիդ ընդունած երկրորդական կարգի ենթա-

գրութեան մի ստութիւնն ցուցնել, կամ ուզես ստիպել զինքն որ ընդունի այնպիսի հետևութիւն մի զոր կը մերժէ, զիր նախ այն սկիզբն զոր կընդունի, և շարաբանութեամբ ցցուր որ իր ենթադրութիւնն նոյն սկիզբն կեղծանէ. կամ թէ երբ զըսկիզբն կընդունի՝ ապէսք է հետևութիւններն ալ ընդունի։ Օրինակի համար, ինքն կը հաստատէ թէ հրաշք ըսածդ անկարելի է։ Հարցու իրեն թէ կընդունի՞ զգոյութիւն Աստուծոյ արարչի. եթէ կընդունի՝ շարաբանէ այսպէս « Աստուած արարիչ աշխարհի՝ կրնայ արարածական զօրութենէ վեր և անոր հակառակ արգասիք մի յառաջ բերել. հրաշք ըսածդ ալ ուրիշ բան չէ. Արդ դու կընդունիս թէ գոյ Աստուած արարիչ. Ապա հրաշք ըսածդ ալ հնարաւոր է։

Շարաբանութեան չարաչար գործածելն երկու կերպ կըլլայ.

Ա. Երբ գրուած սկիզբն սուտ, տարակուսական և հոմանձայն է. ասով հետևութիւնն ալ այնչափ աւելի սուտ կըլլայ՝ որչափ որ շարաբանական ձևն ճիշդ երևնայ։

Բ. Երբ շարաբանութեամբ ուզենք ապացուցանել այն բանն որ ապէսք չունի կամ չկրնար ցուցուիլ. ինչպէս են երկրաչափական առածք, բացայայտ սկզբունք, և այլն. կամ զգալի իրք և երևոյթք, և պատմական անցք, որոնց ճշմարտութիւնն դիտողութեամբ և մարդկային վկայութեամբ միայն կրնայ ապացուցուիլ։

ԺԸ. Յաղագս իմաստակոչութեանց և մոլորութեանց.

Անկանոն, ծուռ և խաբէական շարաբանութիւնն՝ է իմաստակոչիւն, որով ստութիւնն ճշմարտութեան կերպարանաց տակ կը ծածկուի. և որովհետև ճշմարտութիւնն մի է և ստութիւնն բազմապատիկ՝ անոր համար իմաստակութեան տեսակներն ալ անթիւ են. — Ընդհանրապէս որ և իցէ պատճառաբանութեան մէջ իմաստակութիւն կը մտնէ՝ երբ հետևանքն ըստ կանոնի չելլեր 'ի նախադրելոց. թէպէտ և շատ անգամ վեր 'ի վերոյ նայողին ըստ կանոնի կերևի շարաբանութիւնն, և չեմք կըրնար շուտով իմանալ թէ ուր է անոր խաբէական մասն:

Իմաստակութեան գլխաւոր տեսակներն են:

Ա. Անգիտոչիւն խնդրոյ. ասուլ շատ անգամ մարդիկ իրարու այնպիսի կարծիք ու դիտաւորութիւններ կուտան որ դիմացինը չունի, որուլ շատ կռիւներու պատճառ կելլայ. օրինակի համար՝ Ներսոնի հակառակորդներն տիեզերական ձգողութեան վարդապետութիւնն կը մերժէին՝ ըսելով թէ անիկայ գաղտնի պատճառաց վարդապետութիւն մի է, մինչդեռ Ներսոն կը հաստատէր թէ ձգողութիւնն տիեզերա-

կան օրէնք մի է Աստուծոյ գրուած, ուստի աւելի գործ է քան թէ պատճառ։

Բ. Զեղծուումն ակզբան, կամ խնդրոյ տակ եղածն ստոյգ սկիզբն համարիլ. ասել այն որ ցուցման կարօտ է ապացոյց կը բերուի առաջարկութեան. զոր օրինակ գիտենք թէ այս ինչ օրէնքով հաստատուած է, բայց կուզենք գիտնալ թէ արդարացի՞ է թէ չէ. — Իմաստակն այսպէս կընէ պատճառաբանութիւնն. Այն բանն որ համաձայն է օրինաց՝ արդարացի է. Իսկ արդ այս ինչ օրինաց համաձայն է. Ապա ուրեմն արդարացի է։

Գ. Յոռի շրջան կըսուի իմաստակութիւնն երբ երկու ինչ իրարմով ջանանք ապացուցանել. զոր օրինակ՝ Երկիրս կը պտըտի, վասն զի արեգակն անշարժ է. արեգակն անշարժ է, վասն զի երկիրս կը պտըտի։ Ամիսոն քուն կը բերէ, վասն զի թմրեցուցիչ զօրութիւն ունի. ինչու՞ թմրեցուցիչ զօրութիւն ունի, վասն զի քուն կը բերէ։ Զուգահեռական կըսուին այն գծերն որ իրարմէ հաւասար հեռաւորութիւն ունին, և այլն։

Դ. Ոչ պատՃառ փոխանակ պատՃառի. ասել է որ շատ անգամ ծուռ և անհիմն կարծիքներ կը տարածուին ու կը հաստատուին ոմանց՝ նաև երբեմն իմաստնոց մէջ, ինչպէս հին իմաստասէրք կըսէին թէ ջրհանին մէջ ջրոյ վեր ելլելուն պատճառն աս է որ բնութիւնն'ի դատարկութենէ կը

խորշի։ Սանկ են նաև նոյնչափ աւելորդապաշտ կարծիքներն որ ամէն ազգաց մէջ կը գտուին։

Ե. Անկատար թուոշմն մասանց. այս իմաստակութեան մէջ դիւրաւ անկանի մարդս՝ երբ նիւթոյ մի վերլուծութիւնն անկատար կերպով կընէ, որով հետևանքն ալ ծուռ կելնէ. աւելի պիտի զգուշանան այս իմաստակութենէ անոնք որ երկայրաբանութիւն կուզեն բանեցնել. զոր օրինակ կըրնայ մէկն ըսել՝ Դու կամ քրիստոնեայ ես կամ հեթանոս. թէ որ քրիստոնեայ ես՝ պէտք է խորհրդոց հաւատաս, թէ որ հեթանոս ես՝ Աստուծոյ ալ պէտք չէ հաւատաս՝ այլ կռոց։ Առարկութեանս ծռութիւնն այս է որ կրնայ ըլլալ մէկը նաև մահմէտական, աստուածեան, անաստուած, և այլն։

Զ. Խարէոբիւն պատահման. այս իմաստակութիւնն է մասնաւորէ ընդհանուր հետեւանք հանել. զոր օրինակ երեկ մէկը խարդախութիւն ըրաւ, ուրեմն այսօր ալ կընէ, և միշտ պիտի ընէ. իմաստուն մարդիկ եղած են՝ որ սխալեր են, ուրեմն իմաստունք միշտ կը սխալին։

Է. Բաժանեալ իմաստն միացնել, միացեալն բաժանել. սանկ է այս իմաստակութիւնն. աւետարանի մէջ հակասութիւն կայ, վասն զի ըսուած է թէ կոյրք տեսանեն, կաղք գնան. վասն զի իմաստը բաժանեալ է, և ըսել կուզէ թէ նոքա որ երբեմն կոյրք էին՝ այժմ տեսանեն, և այլն։

Պօղոս առաքեալ կըսէ « Ոչ ագահք ոչ կռապարիշտք զարքայութիւն Աստուծոյ ոչ ժառանգեն. իմաստակութիւն կըլլայ հետևցընելն թէ ուրեմն ագահներու վրկութիւն չկայ թէպէտև ապաշխարեն ։

Ը. Ըստ իմիք ձշմարտեմ՝ քուռև ճշմարիտև հետևցնել. ասով շատ անգամ վերբերականէն բացարձակ հետևանք կը հանեն մարդիկ. զոր օրինակ եպիկուրեանք կըսէին թէ աստուածներն պէտք է որ մարդու կերպարանք ունենան որովհետև մարդուս կերպարանքն ամէնէն գեղեցիկ է ։ Աստուծուութիւնն յայտնի է, վասն զի ոչ եթէ մարդուս կերպարանքն գերազանց գեղեցկութիւն է, այլ համեմատութեամբ եւեթ ուրիշ մարմնոց ։

Թ. Աչ վնծարանս կըսուի իմաստակութիւնն երբ առաջարկութիւն մի ապացուցանելու համար գիտութեամբ պատուով կամ ուրիշ բարեմասնութեամբ մեծարոյ և համբաւաւոր մարդու վկայութիւն մի յառաջ բերուի. և այնպիսի վկայութեան չհաւանողն յանդուգն ու ինքնահաւան սեպուի ։

Ժ. Աչ ոգիտոցիրն կըսուի իմաստակութիւնն երբ մեր կարծիքն պաշտպանելու համար ապացոյցներ չունենալով՝ ուրիշներն բանադատենք որ կամ մեր բերած ապացոյցներն ընդունին՝ կամ այլ լաւագոյններ մէջ բերեն, և եթէ չկարենան՝ հետևցնենք թէ իրաւունքն մերն է. վասն

զի հակառակորդին տգիտութիւնն մեր հաստատ ու իրական գիտութիւնն չցուցընէր ։

Մոլորութիւնն է դատողութիւն կամաւորապէս առնս . դատողութիւն ըլլալուն՝ կորոշուի ա . 'ի տգիտութենէ որ ոչ գիտէ զիրն առաջարկեալ . բ . յերկբայութենէ՝ որ ոչ ոճիս հաստանէ . և գ . 'ի կարծեաց որ թէ և հակի 'ի մի կողմն հակառակամարտից՝ այլ ոչ որոշակի դատողութիւն առնելով զայնցանէ ։

Մոլորութեանց պատճառներն կամ Ներքին են և կամ Արտաքին ։ — Ներքին պատճառք երբ կամաց և զգայութեան վրայ հաստատուած են՝ կըսուին Բարոյական պատճառք . իսկ երբ մտաց տկարութենէ առաջ կուգան՝ կըսուին Մտաւորական պատճառք ։

Բարոյական պատճառաց մէջ գլխաւորներն են Ա . Զանազան կիրք և յօժարութիւնք հոգւոյ . զոր օրինակ հպարտութիւն , անձնասիրութիւն , նախանձ , սէր և ատելութիւն , ծուլութիւն , և այլն ։ — Հպարտութիւնն թող չտար որ մարդ իր ծուռ կարծիքն մերժէ և ճշմարիտն ընդունի . դիւրահաւան կընէ զմարդ շողոքորդներու խօսքին անձնասիրութիւնը պարարելով . թող չտար որ ուրիշի աղէկութիւնն տեսնէ՝ նախանձը գրգռելով , և այլն ։ — Սէրն չթողուր որ մարդ իր սիրած անձին կամ իրեն պակասութիւնն տեսնէ . ատե-

լութիւնն ալ շատ անգամ արգելք կըլլայ՝ անկարելիութիւն մարդոյ գաղափարներուն արտայայտելու զանազանութիւնն։ — Ծանրութիւնն չիմացուր որ մարդ աշխատի առաքինութիւնն՝ և ճշմարտութիւնն արտայայտել. որով շատերն կը յամառին իրենց կարծեաց վրայ, և թերութիւնամոլութեամբ վճիռներ կուտան բաւական չգիտցած նիւթոց վրայ։ — Ռ. Ընդարձակութիւն թերութիւնք. զոր օրինակ գիւղական հանգամանութիւն, յամառութիւն, փոխադարձութիւն, յանդգնութիւն, երկիւղ, և այլն։ — Վերահասանն որ և է կարծիք առանց քննելու կընդունի. իսկ յամառն թէպէտ բացայայտաբանէ ճշմարտութիւնն՝ չընդունիր. փոխադարձն մէյ մէկ կերպ գաղափարն կընէ խնդրոյն վրայ, մէյ մէկ արիշ կերպ, ուստի հարկաւ մէկուն մէջ կը սխալի։ — Յանդգնին մարդը առանց ամենեին տարակուսելու կը վճռէ չգիտցած կամ՝ չքննուած իրը. փոխարէն ամէն բանի մէջ կամ կը թողու իր գաղափարն։ — Գիւղացին և յոյսն ալ շատ անկարելի բաներ կարելի կերևցնէ մեզ, և բան մը ինչպէս անհարկեր բան մը մի մեզի անմիջականն հարկաւոր ցուցնելով՝ շատ վտանգներու մէջ կը ձգէ ան բանը մեր ձեռք ձգելու։

Գաղափարին արտաքնապէս մէջ գրուածներն են՝ նոխապատշաճութիւնք կամ՝ բանիխաբեր ասելութիւնք, գաղտնիրաբութիւն կամ՝ ցնորք, ապիտութիւն և յիշողութեան

պատկառութիւն կամ մեծարութիւն։ — Ապա-
խառարարներն ծառա բանի վրայ որ ըլ-
լայ՝ ինքն իսկ մոլորութիւն է, և վնասակա-
ւոյն շատ մոլորութեանց ալ աղբիւր։ —
Պատկերազարդութեամբ մարդ շեղած բանն
եղածի տեղ կը դնէ, անհիմն վարկածներ
կը հնարէ, և ճշմարտութիւնն ստութեան
հետ կը շփոթէ։ — Տգիտութիւնն հպարտ-
ութիւնէ ու թերահաւատութիւնէ յառաջ
գալով՝ շատ մոլորութեանց պատճառ կը-
լայ։ — Ստութեամբ ալ շատ անգամ
մեր և ուրիշներու փորձառութիւնէն խելք
չենք ստանար ու կը սխալինք։

Արտաքին պատճառաց գլխաւորներն են
թեր գաղափարութիւն, կարծիք օտա-
րաց, շեղած պատկերներ, պատրանք
զգայարանաց, և այլն։ — Թեր գաղափա-
րութիւնն մանկանց և ազգաց անթեա
մոլորութեանց պատճառ է՝ կամ՝ անանց
պատկերազարդութիւնն խաբելով ու վարդ-
նելով, կամ՝ շարադանց զինջութիւն ընե-
լով ու պատկերներն շաղելով, կամ՝
շարադանց խառնութեամբ, և երբեմն շար
օրինակով։ — Օտարի կարծիքը ասելն կամ՝
գործ՝ շատ անգամ մոլորութեան պատ-
ճառ կըլլան մարդուս՝ երբ առանց քննելու
կոյր զկարծն հետևի անոնց։ — Լեզուի
պատկերներ կրնան այն տեսակ հանա-
ձայն զարդարանքներն որ ամէն մարդ ու-
զածին պէս կրնայ հանկնալ. ասոնք՝ լե-
զուն մոլորութեան պատճառ կըլլայ՝ երբ

բառով մի նշանակուած իրն կամ էական չէ ու էական բանի տեղ կառնուի. և կամ թէպէտ իրական բան մի ալ նշանակ են՝ գործածողն ուրիշ նշանակութիւն կուտայ անոնց. զոր օրինակ ազգասիրութիւն, պատիւ, ազատութիւն, բանութիւն, և այլն։ — Զգայարանք և իրաց երևոյթք ալ դիւրաւ կը մոլորցնեն զմարդ, երբ տկար և հիւանդ են, և մէկ հայեցուածով միայն զանոնք կը նկատենք։

Այս ամէն մոլորութեանց պատճառներուն դէմ գլխաւոր դարմաններն են անոնց ներհակ առաքինութիւններն, զգուշութիւններն ու մտածութիւններն. զոր օրինակ անձնասիրութեան դէմ պէտք է ուներալ իր դատման վրայ անվստահութիւն, ծուլութեան դէմ աշխատասիրութիւն, նախապաշարմանց դէմ՝ ուղիղ դատողութիւն, տգիտութեան դէմ ուսումնասիրութիւն, լեզուի պակսութեանց դէմ բառից ու խօսից նշանակութեան ճշգութիւն, զգայարանաց պատրանաց դէմ զանոնք ուղղելու ջանք, և ամէն խաբէութեանց դէմ սէր ճշմարտութեան՝ որ ճշմարիտ խմաստասիրութեանն ալ միակ վախճանն է։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՍՏՈՒԱԾԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ժ.թ. Յաղագս գոյութեանն Աստուծոյ. և ապացոյցք նորին.

Աստուածախօսութիւնն է այն մասն բնագանցութեան՝ որ խօսի զԱստուծոյ որչափ որ հասանելի է մտաց։ — Միտք մարդոյ երբ իր բնական զարգացումն ընդունած է՝ կրնայ և պարտի ճանաչել զգոյութիւն Աստուծոյ և զգլխաւոր ստորոգելիս նորա, թէ և անգէտ ըլլայ յայտնութեան և աւանդութեանց, որ զվարդապետութիւնս զայս յայտնեալ աւանդեն մեզ։

Աստուած ըսելով կիմացուի էակն նախակիզբն՝ որ ունի զգոյութիւն իւր յիւրմէ հարկաւորապէս, և որ տուեալ է զգոյութիւն ամենայն եղելոց։

Գոյութիւն նախկին էակիս երեք տեսակ ապացոյցերով կը ցուցուի՝ յորոց ոմանք 'ի բնազանցական կարգէ կան, ոմանք 'ի բնական կարգէ, և ուրիշներն 'ի բարոյական կարգէ։

Բնազանցական ապացոյց կամ կարևորություն ինքնագոյ էակի. Եթէ չկայ էակ մի որ հարկաւորապէս և ինքնագոյ ըլլայ՝ ապա մտաց հակառակ չէ զանոնք անգոյ համարելն, և սեպել թէ չկան իսկ։ Այլ եթէ եղած է ժամանակ որ էակ չգոյին՝ ապա և ամենայն էակք անկարելիք են։ Արդ ենթադրեալ յիրաւի թէ չկայ ինչ էակ՝ ուստի՞ ապա ընկալան էակք զգոյութիւն։

Յայլմէ՞ էակէ։ — Բայց այդ այլն ալ չկայ։

Յինքեանց։ — Ապա կային և չկային 'ի նմին ժամանակի։ — Կային, վասն զի որ չկայ՝ չկրնար գործել, և չկրնար տալ զգոյութիւն՝ զոր ոչն ունի։ — Չկային, որովհետև զգոյութիւն ընդունելու կարօտ եղեր են։

Ապա ուրեմն չենք կրնար ենթադրել թէ ժամանակ մի եղած ըլլայ՝ երբ բնաւ էակ մի եղած չըլլայ։

Ապա պէտք է ըլլայ էակ մի ինքնագոյ՝ որ տայ զգոյութիւն այնոյիկ որ յայլմէ գոյանան։

Այս հարկաւոր էակս կոչեմք Աստուած։ — Ապա գոյ Աստուած։

Բնական ապացոյց 'ի գոյոշրևնէ կարգի յաշխարհիս.—Ա. Աշխարհիս գոյութիւնն 'ի հարկաւորութենէ չէ. վասն զի էակ մի չկայ աշխարհիս վրայ զոր չկարենամ ենթադրել ոչ գոյացեալ։ — Ապա աշխարհս չունի յինքեան զպատճառ. բաւական իւրոյ

գոյութեանն։ Եթէ ունէր զայս պատճառ բաւական՝ 'ի հարկէ լինէր նորին գոյութիւն. քանզի 'ի հաստատել զբաւական պատճառ իրիք՝ հարկ է լինել և իրին։

Սպա հարկ է զբաւական պատճառ գոյութեան աշխարհի որոնել արտաքոյ նորին։ — Սպա արտաքոյ աշխարհի գոյ էակ ինն ուրոյն 'ի նմանէ։

Զայս էակ կոչեմք Աստուած։ — Սպա գոյ Աստուած։

Բ. Աշխարհս չկարաց տալ անձին զկարգս զայս՝ որ այնպէս դաշնակաւոր և միայարմար գործէ զնոյն. զի երեք իրք պակասեն նմա առ այս. ա. իմացողութիւն՝ կարևոր առ 'ի հաստատել զվախճանն յորդիմեն ամենայն նիւթեղէն էակք, որպէս և տեսանեմք. բ. կամեցողութիւն՝ կարևոր առ ուշ ունել 'ի կէտ նպատակին. գ. զօրութիւն շարժիչ՝ առ 'ի տալ զշարժումն ամենայն մարմնոց որ ըստ ինքեան անխտիրք են առ շարժումն և առ դադարումն։

Սպա հարկ է զի արտաքոյ և 'ի վեր քան զտարրեղէն և զդանդաղ էակս՝ որ այնչափ շատ ու զանազան են, իրարու ներհակ և միանգամայն միաբանք, այնչափ կարգաւորք և հպատակք կարգաց որ ուղղեն զշարժուածս նոցա և զգործս և զարգասիս, հարկ է կրսեմ որ ըլլայ գերագոյն ուղղիչ մի՝ ունող ա. անբաւ իմացողութեան՝ որով կարենայ բովանդակել

զամենայն կերպաւորութիւնս հնարաւորս այնչափ տարերաց ներքոյ անկելոց կերպաւորութեանց, և որք յայնքան եղանակս մարթին գալ 'ի բաղկացութիւն և 'ի լուծումն ընդ պարագայս անվախճան դարուց. և թ. ունող զերագոյն իմն կարողութեան քան զամենայն զօրութիւնս և զդիմակալութիւնս անչափս կամ միացեալս յառաջ եկեալս 'ի տարերաց որով կազմեալ է աշխարհս և տիեզերս բովանդակ։

Եւ ո՞ այլ որ իցէ էակս՝ բայց Աստուած։ — Ապա զոյ Աստուած։

Բարոյական ապացոյց 'ի միածայն հաշուեցուցեալ և 'ի բնական օրինաց. Ա. Միածայն հաւատացութիւն. Ամենայն մարդիկ միանգամայն չկարեն միաբանիլ 'ի ստութիւն ինչ։ Իսկ արդ ամենայն մարդիկ ծանուցեալք կամ գոնեայ ամենայն մարդիկ իմաստունք և յարգոյք յամենայն ժամանակի և յամենայն տեղիս միաբանեալ են 'ի ճանաչել զգոյութիւն իրիք աստուածութեան։ — Եւ թէ իցէ ինչ խորհ 'ի նոսա՝ սակս բնութեան և ստորոգելեաց աստուածական էութեանն է, և ոչ սակս գոյութեան զերագոյն իմն էակի 'ի վեր քան զաշխարհս և զմարդիկ բովանդակ, յորում միածայն է ամենեցուն հաւանութիւն։ Այս բանիս վկայք են պաշտօնն աստուածային, սեղանք և տաճարք և զոհք. և աղօթք և պաղատանք, և ազգի ազգի գրուածք, որ միշտ և յամենայն տեղիս զհաւատս աստուածութեանն յիշեցուցանեն։

Բ. Բնական օրէնք. Ամենայն մարդիկ միաբանին ճանաչել եթէ են գործք ինչ պարտաւորիչք, որպիսի են սէր ծնողաց և ընտանեաց, և այլք արգելեալք, օրինակ ինն գողութիւն, մարդասպանութիւն և այլն։ — Արդ պարտաւորութիւնս այս ցուցանէ գոլ էակ ինն գերագոյն 'ի վեր քան զմարդիկ։ Զի եթէ մարդ ինքն իր վրայ դրած ըլլար զպարտաւորութիւնս՝ կրնար նոյնպէս անկէց ազատիլ, բայց սակայն չկրնար. որպէս և վկայէ խայթ խղճին որ զհետ գայ օրինազանցութեան։

Ապա գոյ օրէնադիր ոք գերագոյն՝ ամենիշխան տէր մարդկան և վրէժխնդիր չարագործութեանց. և ամենեքին միաձայնին վերակոչել զնա Աստուած։

Ի. Յաղագս գլխաւոր առորոգելեացն Աստուծոյ.

Մեր մտաց տկարութեան պատճառաւ զԱստուած չկարելով ըմբռնել, և այս կենացս մէջ զինքն յարարածս ևեթ նկատած տեսնելնուս, որպէս զպատճառն յարգասիս իւր, անոր համար աստուածային էակին շատ մի կատարելութիւններ կընծայենք՝ երբ զանիկայ կը համեմատենք ստեղծական էակաց վրայ տեսած յատկութեանցն հետ։ Այպէս արարածոյ մի վրայ յատկութիւններ տեսնելով՝ օրինակի համար էութեան, միութեան, պարզութեան,

հաստատութեան, տևողութեան, տարածի, կենաց, իմացողութեան և զօրութեան աստիճան մի, և գիտնալով թէ ինչ որ արգասեաց վրայ կայ՝ պէտք է որ նոյնն գերագոյն աստիճանով գտնուի պատճառին վրայ, ապա կը հետևցնենք թէ այս իբրաքանչիւր կատարելութիւններս Հարկ է որ 'ի գերագոյն աստիճանի գտնուին Աստուծոյ վրայ անսահման և անթերի կերպով. ուստի կըսենք թէ Աստուած է էակն անսահման և անբաւ և ամենուրեք, միակ և պարզ, անփոփոխ և անայլայլակ յիւրում էութեանն, յաւիտենական ըստ տևողութեանն, և անբաւ ըստ տարածութեանն. և թէ ինքն իսկ է կեանք և իմացականութիւն և ամենակարողութիւն: — Այս կատարելութիւններս յԱստուած կըսուին ատրիպուտք. յորոց ոմանք բացարձակ են և ոմանք յարաբերական. ըստ որում կը վերաբերին կամ առ նոյն ինքն գոյութիւն աստուածային էակին և կամ առ գործս նորա:

Գլխաւոր բացարձակ ատրիպուտքն են անբաւութիւնն, միութիւն, պարզութիւն, անփոփոխութիւն, յաւիտենականութիւն, անչափութիւն:

Իսկ յարաբերական ատրիպուտք կամ աստուածային գործք ունին զվախճան իւրեանց կամ յԱստուած և կամ արտաքս քան զԱստուած. առջիններն կըսուին գործք առ 'ի ներքս, իսկ երկրորդներն գործք առ արտաքս:

Աստ 'ի ներքս յարաբերական ստորոգելիքն են իմացականութիւնն և կամեցողութիւն, որովք Աստուած յինքեան ճանաչէ և կամի զամենայն որ ինչ են թէ եղեալ և թէ կարելի։ — Իսկ առ արտաքս յարաբերական ստորոգելիք մէկի միայն կրնան վերածուիլ, այսինքն յամենակարողութիւնն՝ որով Աստուած ստեղծանէ, պահէ և ղեկավարէ զամենայն եղեալ էակս. և կամ երկուքի՝ որ են ստեղծագործութիւն և նախախնամութիւն։

Բացարձակ ստորոգելիք. — Անսահմանութիւն. Անսահման ասելով ամենէն մեծագոյնն կը հասկցուի. արդ Աստուծմէ մեծ բան չենք կրնար ըմբռնել. վասն զի Աստուծմէ զուրս էակ մի կամ կարելի կատարելութիւն մի չկայ՝ որ 'ի նմա գերազանցապէս չգտնուի։ Եւ յիրաւի եթէ այնպիսի էակ և կատարելութիւն մի ըլլայ՝ որուն իսկութիւնն Աստուած չունենայ՝ այս էակիս և կատարելութեանս ստեղծիչն Աստուած եղած չկրնար ըլլալ. վասն զի Աստուած չկրնար տալ զայն ինչ զոր չունի։ Ապա այս էակս ինքն իրեն եղած պիտի ըլլայ. ուրեմն յինքեան պիտի ունենայ զպատճառ բաւական իւրոյ գոյութեանն. որով 'ի հարկէ պիտի ըլլայ իր գոյութիւնն, և ինքն էակ հարկաւոր։

Իսկ արդ հարկաւոր էակն մի է, քանզի մին ևեթ բաւական է. և մին ևեթ բաւական է՝ վասն զի մին երբ կայ՝ կը-

նամ միւս ամեն էակներն ոչ եղեալ համարել. և արդարև մի միայն գոյութիւն մի բաւական է տալու զգոյութիւն այլոց։ — Ապա ուրեմն մի միայն էակ գոյ հարկաւոր և ինքնագոյ. և այլ ամենայն էակք 'ի նմանէ ընդունեցան ինչ որ են և ինչ որ ունին իրականապէս։

Ապա էակն ինքնագոյ և հարկաւոր և նախասկիզբն՝ ունի յինքեան զամենայն կատարելութիւնս եղեալ և կարելի էակաց. և այն որ չկայ 'ի նմա գերազանցապէս՝ բացարձակապէս անկարելի է որ գտնուի արտաքոյ նորա։ Ապա էակն հարկաւոր, ինքնագոյ և նախասկիզբն՝ անսահման է, բովանդակապէս ունի զգոյութիւն և զամենայն կատարելութիւն, և է անսահման, Մեծ է և մեծոչքեան նորա չիք սահման։

Այլ ապացոյց. Ես յինքեան ունիմ զգաղափար անսահմանի այսինքն անբաւ մեծութեան, որովհետև անոր վրայ կը խօսիմ և ուրիշներու ըսածն կը հասկընամ։ Արդ ուստի առած եմ այս գաղափարս. յանձնէս. ոչ երբէք. վասն զի ես սահմանաւոր եմ, մեծն 'ի փոքրն չբովանդակիր. ինծի նման սահմանաւոր էակներէ. և ոչ բնաւ՝ վերը ըսած պատճառիս համար։ — Եւ սակայն գաղափար մի անկարելի է որ ելլայ՝ առանց իր բաւական պատճառին, և գաղափարի մի միակ բաւական պատճառն է՝ (բաց 'ի ենթակայէն որ կա-

բող է ճանաչել և գաղափարել զնոյն) առարկայն՝ որուն գաղափարն ուրիշ բան չէ՝ բայց եթէ անոր ցոլացումն և մտաւորական յանդիմակացութիւնն։ Ապա հարկ է որ ըլլայ առարկայ մի և էակ մի անբաւ և անսահման։

Արդ այս անսահման էակս է Աստուած. զոր և ապացուցանեմ այսպէս. Անսահմանն գոյ 'ի հարկէ. վասն զի թէ կարելի էր չըլլալը՝ չէր կրնար եղածներուն մէջ ամենէն մեծն ըլլալ, որովհետև կրնար սահման և վախճան մի ունենալ, ամենէն մեծ սահմանն և ամենէն ամբողջ վախճանն զոր կրնամք ըմբռնել՝ որ է գաղաբումն 'ի գոյութենէ կամ՝ անգոյութիւն։ Ապա անսահման էակն գոյ 'ի հարկէ. ապա էակն անսահման՝ է էակ հարկաւոր. իսկ արդ մի միայն հարկաւոր էակ գոյ, ինչպէս որ վերը տեսանք. ապա ուրեմն անսահման էակն նոյն է հարկաւոր էակին հետ՝ զոր կոչեմք Աստուած. ապա անսահմանն է Աստուած ինքնին. ապա Աստուած է անսահման։

Մոնոթիին. Աստուած մի է, այս մտքով որ Ա միակ է, և Բ պարզ։ — Միակ այսինքն թէ՝ չէ և չկրնար ըլլալ բայց եթէ մի Աստուած, և ինքն իր նմանն չունի։ — Պարզ այսինքն առանց մասանց։

Ա. Մի միայն է Աստուած. ա. Աստուած է էակն հարկաւոր. իսկ արդ հարկաւոր էակն մի է. վասն զի մին միայն բաւական

է, և այն ըլլալէն ետև կրնանք ըմբռնել զանգոյութիւն այլոց ամենեցուն (տես 'ի վերս անգր)։ բ. Աստուած է էակն անսահման. իսկ արդ մէկ անսահման միայն կըրնայ ըլլալ։ Նախ զի անսահմանն է հարկաւոր, և զի մի միայն է էակն որ գոյ 'ի հարկէ. և երկրորդ զի երկու անսահման էակք ենթադրելով՝ ոչ մին անսահման կըլլայ և ոչ միւսն, որովհետև իւրաքանչիւրն 'ի նոցանէ աւելի մեծ կրնայ ըլլալ. օրինակի աղագաւ եթէ ա ըլլայ անսահմաններէն մէկն, և բ միւս անսահմանն՝ կրնանք ասել որ ա աւելի մեծ կըլլար՝ եթէ բ միւս անսահմանին գոյութիւնն ալ 'ի միասին ունենար. նմանապէս բ աւելի մեծ կըլլար եթէ ա անսահմանին գոյութիւնն ունենար։ Ապա ուրեմն ոչ ա և ոչ բ անսահման չեն։

գ. Չեն մասունք յԱստուած. որ երկու պատճառաբանութեամբք կրնայ ցուցուիլ՝ մէկն 'ի հարկաւորութենէ աստուածային էակին, և միւսն յանսահմանութենէ նորին։ ա. Ի հարկաւորութենէ. Եթէ երկու մասունք ենթադրես յէակն աստուածային, կըսեմ՝ մին յերկուց ոչ է հարկաւոր. վասն զի եթէ այն մասն չըլլար՝ ասոր համար էակն աստուածային ոչ դադարէր 'ի գոլոյ, որովհետև միւս մասն կը մնար։ Ապա էակն հարկաւոր միատարր է և մասունք չունի։ Իսկ արդ Աստուած է էակն հարկաւոր՝ ապա չեն մասունք յԱստուած։ — բ. Յանսահմանութենէ

ինեն. Ենթադրեալ բազում մասունս յէական աստուածային. կամ ամենայն մասունքն անսահմանք են՝ որ է հակառակ մտաց, որովհետև անսահմանն միակ է. և կամ ամենայն մասունքն սահմանաւորք են. այն ատեն ալ սահմանաւորն ընդունած կըլլաս որ է թերութիւն անսահմանին. և կամ վերջապէս մի մասն անսահման է և միւսն սահմանաւոր, ասով ալ դարձեալ սահման մի դրած կըլլաս անսահմանին։ Ապա ուրեմն էական անսահման պարզ է և առանց մասանց։

Անփոփոխելութիւն. Աստուած անփոփոխելի է. վասն զի փոխուելու ալ պատճառ չկայ. 'ի լաւն փոխուիլ չկրնար՝ վասն զի ինքն իսկ է կատարեալ բարութիւն. 'ի յառին չկրնար՝ վասն զի յայնժամ դադարէր 'ի լինելոյ բարեգոյն և անսահման, և ալ չէր ըլլար Աստուած. 'ի հաւասարն փոխուիլ չկրնար, վասն զի չկայ ինչ հաւասար Աստուծոյ։ Արդ որ ինչ էն է բարեգոյնն։

Յաւիտենականութիւն. Յաւիտենական կըսուի էական որ լինելով անսկիզբն և անվախճան՝ է որ ինչ կարելի է լինել առանց իրիք յաջորդութեան։ — Արդ Աստուած սկիզբն ունեցած չէ, այլ միշտ եղեալ է՝ որովհետև է հարկաւոր և անսահման. և նոյն պատճառաւ չկրնար ալ դադարիլ 'ի գոյից։ Զիր 'ի նմա ինչ մի պատահական և սահմանաւոր. ապա չկարէ ոչ աճել և ոչ

նուազել յիմիք. ապա միանգամայն և միշտ է որ ինչ էն և որ կարէ լինել։

Ամբաւութիւն. Անբաւ ասի որ ամենայն ուրեք է բովանդակապէս։ Ամենուրեք է Աստուած որովհետև անսահման է. բովանդակապէս է ուր էն՝ որովհետև պարզ է։

Յարաբերական առորոգելիք. Աստ'ի հերքիս. — Իմացականութիւն. Աստուած գերագոյն իմացական էակ ըլլալով՝ ճանաչէ զամենայն միով ևեթ ներգործութեամբ, ապա թէ ոչ ամենակատար էակ չէր ըլլար։ — Եւ նախ եթէ զանձն չճանչնար, վասն զի ամենէն գերազանց կատարելութիւնն կը պակէր իրմէ։ — Երկրորդ եթէ զամենայն ինչ չըգիտնար, վասն զի ծանօթութիւն մի կը պակէր իրմէ։ — Վերջապէս եթէ զամենայն ինչ չճանչնար միով ևեթ ներգործութեամբ. վասն զի ներգործութիւնն որ զամենայն ինչ միանգամայն չըմբռնէ՝ ամենակատար ներգործութիւն չըլլար, այլ սահմանաւոր, որով և յԱստուած սահմանաւոր իմն կը գտնուէր, և կրնար ծանօթութիւն ստանալ, ուսանիլ, որով և փոփոխիլ. կրնար շատ ներգործութիւններ ունենալ, և հետևապէս յաջորդութիւն մի ըլլալ 'ի նմա։

Կամեցողութիւն. Աստուած կամի և ինքն իրեն որոշում՝ մի կընէ. վասն զի ա նախ այլ լաւագոյն է ինքն իրմէ որոշողութիւն մի ընել, քան ընդունել զայն յայլմէ։ Եւ բ երկրորդ ուվ կրնար որոշողութիւն մի ը-

ընել տալ Աստուծոյ, զի չկամք որ հզօր և կարող քան զնա։ Եւ զ երրորդ յորժամ միայն էր Աստուած իրմէ զատ ոչ իրեն որոշողութիւն մի ընել տուաւ։

Աստուած կամի զինքն 'ի հարկէ. ինքն ըլլալով գերագոյն և անսահման բարին՝ այնպէս ալ զինքն կը ճանչնայ։ Եթէ զինքն չկամէր՝ գերագոյն բարին չկամեցող կըլլար, և այն ատեն լաւագոյն ինչ կամեցող կրնալով ըլլալ՝ ամենակար չէինք կրնար ըմբռնել զինքն, որով և անսահման ալ չէր ըլլար։

Աստուած կամի ազատութեամբ զանձնայն որ ինչ արտաքոյ է քան զինքն. այս ինքն զամենայն էակս կարելիս որ իրմէ դուրս են, զամենայն էակս ստեղծեալս։ Կամի զնոսա ազատութեամբ. վասն զի նախ կարէ ոչ կամել զնոսա։ Երկրորդ կարէ կամել զնոսա։ — Ա. Կարէ ոչ կամել զնոսա. վասն զի ինքն վայելելով անհուն բարի և երջանկութիւն մի, չունի պէտս այլ բարւոյ, և այլ էակի։ — Բ. Կարէ կամիլ զնոսա. մի զի բարութեամբն կարէ պարզապէս 'ի սիրոյ հաղորդել նոցա զբարին և զգոյութիւն՝ որոց ինքն է սկիզբն. և երկրորդ. ապացոյցն թէ կարէ՝ այն իսկ է զի արար զնոսա. Ի գործոյ առ կարողութիւն զօրեն հետևանք։

Ազատութիւնն աստուածային ոչ հակառակ եղանէ նորա անփոփոխելիութեանն։ Եթէ Աստուած որոշողութիւն մի ընէ կամ

չընէ կամելոյ գեղեալ արարածս՝ ինքն նոյն ինքեան ոչ միայն յէութեան իւրում և յիս-կութեան, այլ նաև՝ի ներգործութեան իւրում։ Եւ կը ցուցուի այսպէս. Աստուածային ներգործութիւն է ճանաչել և կամիլ։ — Աստուած եթէ կամի և եթէ չկամի ստեղծուլ՝ իր ճանաչումն աւելի կամ նուազ չըլլար. վասն զի յիւրում էութեան և իր վրայ ունեցած հաստատուն ճանաչողութեամբն՝ կատարելապէս ճանաչէ զամենայն կարելի էակս զեղեալս և զչեղեալս։ — Եթէ կամեցի ստեղծուլ և թէ ոչ՝ կամելն չնուազիր ու չաւելուր. վասն զի կամելով զինքն՝ արդէն կամի զանհուն բարին, և կամեցողութիւնն հնաւոր բարեաց բան մի չաւելցներ այն գործոյն վրայ որուն վախճանն ու առարկայն անհունն է։

Աստանք են զլխաւոր յարաբերական ստորոգելիք Աստուծոյ՝ նկատմամբ յինքն և՝ի գործողութիւնն առ՝ի նեարդս։

Յարաբերական ստորոգելիք. բ առ արտաքս. — Աստուծոյ առ արտաքս յարաբերական ստորոգելեաց հիմն ու պատճառն իր ամենակարողութիւնն է, իսկ այս ստորոգելիքս են արարչագործութիւնն և տեսչութիւնն աշխարհի։

Աստուած ամենակարող է կամ թէ ընդունք կրնայ ընել ինչ որ կուզէ, կրնայ ինչ որ կարելի է։ — Այս թէ ոչ անսահման չէր ըլլար, կրնայինք յզանալ աւելի մեծ էակ մի, այս ինքն այնպիսի էակ մի որ կա-

ընար ընել ինչ որ ուզեր։ — Կը հետևի թէ այն որ Աստուած չկրնար ընել՝ անոր իսկ անկարելի է. վասն զի այնպիսի իր մի ուսկից կրնար իր գոյութիւնն առնուլ. ապա ուրեմն ինչ որ Աստուած կրնայ ընել՝ այն միայն է կարելի. ապա Աստուած կըրնայ ընել զամենայն ինչ որ կարելի է։

Աստուած է ստեղծող աշխարհի. ստեղծուլ է՝ յոչնչէ իր մի առաջ բերել, և տալ զգոյութիւն այնմ՝ որ չունէր ամենևին, գոյացնել՝ ինչ որ չգոյր ամենևին։ — Իսկ արդ աշխարհս միշտ եղած չէ, քանզի ամենայն էակք որ՝ի նմա հնաւորք են, և էակ մի չկայ՝ որ աւելի կատարեալ ըլլալ չկարենար։ — Արդ ամենայն ինչ որ հնաւոր է՝ պատահական է՝ կամ՝ կրնայ եղած չըլլալ. վասն զի հնաւոր էակի մի չգոյութիւնն մտաց հակառակ չէ, և անկէ չհետևիր ուրիշ ամենայն էակի անկարելութիւնն, որովհետև հնաւոր էակ մի ամենայն կարելի էակաց բովանդակութիւնն չէ։

Իսկ արդ եթէ աշխարհս պատահական է՝ ապա ուրեմն չունի յինքեան զբաւական պատճառ իւրոյ գոյութեանն։ Վասն զի էակն որ ունի յինքեան զբաւական պատճառ իւրոյ գոյութեանն՝ չկրնար գոյութիւն չունենալ, այլ գոյ՝ի հարկէ։ — Եթէ աշխարհս չունի յինքեան զպատճառ իւրոյ գոյութեանն՝ հարկ է որ գոյութիւնն ուրիշմէ առած ըլլայ։ — Այս ուրիշն ոչ այլ

որ է՝ եթէ ոչ Աստուած։ — Վասն զի Աստուած միայն ունի զանսահման կարողութիւն. և այսպիսի անսահման կարողութիւն մի պէտք է՝ աւ 'ի տալ զգոյութիւն այնմ՝ որ չունի։ — Յիրաւի ըլլալու և չըլլալու մէջ, ոչնչի և էակի մէջ՝ անհուն հեռաւորութիւն կայ զոր չենք կարող ըմբռնել։ — Արդ այս անհուն հեռաւորութիւնն անցնելու համար՝ անհուն կարողութիւն մի հարկաւոր է։ — Ապա Աստուած և Աստուած միայն է ստեղծող աշխարհի։

Համայնաստուածութիւն. արարչութեան դէմ եղած գլխաւոր մոլորութիւնն համայնաստուածութիւնն է՝ որ զԱստուած և զաշխարհս մի և նոյն էակ կը համարի և մի և նոյն գոյացութիւն։ Այս անհեղեղ դրութեամբս Աստուած լինէր այն ամենայն որ կայ, և այն ամենայն որ կայ՝ լինէր Աստուած։ — Այս ամբարշտութիւնս հերքելու համար բաւական է աստուածայինաստրոգելիքն ստեղծականէակաց աստրոգելեաց հետ բաղդատել։ — Ստեղծական մարմինք և հոգիք հնաւորք են, պատահականք, զանազանք յիրերաց որով և բաղմօրինակք, փոփոխելիք, և միշտ և հանապազ 'ի փոփոխութեան։ — Իսկ մեք ցցուցինք որ Աստուած անհուն է, հարկաւոր, մի և պարզ, անփոփոխ և յաւիտենական։

Արդ եթէ Աստուած լինէր այն ամենայն որ կայ, և եթէ այն ամենայն որ կայ լինէր

Աստուած՝ մի և նոյն էակին վրայ մի և նոյն զոյացութեան վրայ տեսանէինք հակասական և բնաբին հակառակ ստորոգելիս։ — Մէկ կողմանէ Աստուած պիտի ըլլար միանգամայն անհուն և հնաւոր, հարկաւոր և ոչ հարկաւոր, մի և բազմօրինակ, պարզ և բաղադրեալ, անփոփոխ և փոփոխելի։ — Միւս կողմէն ալ իւրաքանչիւր օր՝ ի ստեղծական հոգւոց և մարմնոց պիտի ըլլար՝ ի նմին ժամանակի հնաւոր և ոչ հնաւոր, պատահական և ոչ պատահական, և այլն։ — Այս ուրեմն համայնաստուածութիւնն անմիջապէս իր սկիզբէն անհեղեղ ու ցնորական է։

ԻԱ. Յաղագս տեսչական կամ նախախնամական։ — Հերքուելն առաջարկութեանց՝ ի բնական և՝ ի բարոյական չարէ։

Տեսչութիւնն կամ նախախնամութիւնն որ ստեղծագործութեան հանապազորդութիւնն է՝ այն գործն է որով Աստուած պահէ զզոյութիւն ստեղծեալ էակաց և զսեպհական յատկութիւնս բնութեան նոցա, և որով ուղղէ զնոսա՝ ի վախճանն հաստատեալ յոր դիմեն նոքա միանգամայն և առանձինն։

Արդ ա. Նախ Աստուած պահէ զզոյութիւն էակաց և զսեպհականութիւնս զոր ետ նոցա։ — Իսկն ստեղծեալ չունի զզոյութիւն յինքենէ, և ինչպէս յառաջնում

վայրկեանի՝ այսպէս և 'ի հետագայս չունի նա յինքեան զբաւական պատճառ իւրոյ գոյութեանն. վասն զի եթէ այսպէս ըլլար՝ ինքնագոյ եղած պիտի ըլլար, որով և հարկաւոր և անկախ յարարչէն։ Աստ չկրնար տեւել և հանապազորդել յիւրում՝ գոյութեան՝ բայց այնչափ ատեն՝ որչափ որ Աստուած շարունակէ տալ նմա զգոյութիւն։

Բ. Երկրորդ. Աստուած ոչիչ զատեղծեալ էակս 'ի վախճանն որ հատարակ է նոցա և 'ի վախճանն որ սեպհական է իւրաքանչիւրումն։

Ապացոյց 'ի յառնագոյնն. Կարգ նիւթական աշխարհի։ Իւրաքանչիւր էակ՝ իւրաքանչիւր դաս էակաց դիմէ 'ի վախճան իւր մասնաւոր. և ամենայն մասնաւոր վախճանք՝ այնպէս իրարու ենթարկեալ են՝ որ անոնցմէ հանրական հաստատուն և կանոնաւոր կարգ մի կելլէ։ Այս յիմացողութենէ և 'ի կամաց զուրկ էակաց մէջ տեսնուած՝ մասնաւոր և հանրական կարգն՝ հարկաւորապէս կը ցուցընէ բոլոր աշխարհէս դուրս գերագոյն էակի մի հանապազորդեան ներգործութիւնն՝ որ կը հակէ իր հաստատած կարգին պահպանութեանն վրայ։

Ապացոյց 'ի յառաջագոյնն. Աստուած ընտրեցէն և զոգեցէն էակս վախճանի մի համար ստեղծած է՝ արժանաւոր իր մեծ վայելչութեանը. իսկ արդ Աստուծոյ արժանաւոր վախճան մի՝ ինքն իսկ Աստուած

է. քանզի այլ ամենայն պատճառ հնաւոր ինչ ըլլալով՝ հետևապէս չկրնար արարչին գործոյն վախճան սեպուիլ։ Եւ յիրաւի գործոյն առարկայն որոշուած ըլլալով՝ արարչին գործն հնաւոր կըլլար՝ եթէ հնաւոր ըլլար իր առարկայն։ Ապա Աստուած ինքն իր համար ստեղծած է զաշխարհս. ուրեմն կուզէ որ ամենայն էակք իրեն մօտենան ըստ իւրեանց աստիճանի։ Իսկ Աստուած առնէ զոր կամի, ապա ուզէ զէակս այնու եղանակաւ՝ որ ամենքն և իւրաքանչիւրն ըստ բնութեան իւրեանց ընթացակցին անոր գոյութիւնն, բարութիւնն, կարողութիւնն և միով բանիւ անոր փառքն արտայայտելու համար։

Ապա աշխարհս անթերի է համեմատութեամբ վախճանին զոր դիտեր է Աստուած զանիկայ ստեղծելու ժամանակ. բայց քաղաքաձակապէս խօսելով ոչ է անթերի կամ կատարեալ որչափ հնար էր ըլլալ. և անհունն չստեղծուիր, և այնու իսկ որ ստեղծուած է՝ հնաւոր է. հնաւոր է գոյութեանը կոչմանէ՝ որովհետև իրեն համար սկիզբ մի ունեցած է՝ որով և սահմանաւոր կըլլայ իր ծագման մէջ. հնաւոր էութեան կոչմանէ՝ որուն լիութիւնն չունի, որովհետև յառաջ քան զնա, և իրմէ դուրս և իրմէ վեր գոյ էակ մի յորմէ առած է իր էութիւնն։

Եթէ դուսարես զամենայն էակս ստեղծեալս՝ ես այլ աւելի կատարեալ էակներ

կրնամ յղանալ մտացս մէջ, այսինքն այլ աւելի բազմաթիւ էակներու խումբ մի, և այն խմբին ամեն մէկ անհատից վրայ այլ աւելի դերազանց կատարելութիւններ։ Արդ աշխարհս կամ թէ ըսենք ամենայն ստեղծեալ էակաց բովանդակութիւնն թէ հոգեղէնք և թէ նիւթեղէնք՝ ոչ է և չկըրնար ելլալ անթերի կատարեալ և անհուն։

Զարիք բնական և չարիք բարոյական. Ս. Բնական չարով կը հասկցուի կամ ստեղծեալ էակին սահմանաւորութիւնն, և կամ այն զրկանքն և վշտակրութիւնքն որոնք կը հանդիպին մարդուս իր կենաց մէջ։

Առաջին իմաստով՝ բնական չարն նախախնամութեան դէմ բան մի չապացուցաներ. որովհետև Աստուած ոչ կամեցաւ և ոչ ալ կրնար անսահման էակներ ստեղծուլ։

Երկրորդ իմաստով չարն բնական, զըրկանք և վիշտք այն ատեն նախախնամութեան դէմ առարկութիւնք կըլլային՝ թէ որ մարդուս վախճանն ներկայ կենաց անձուկ սահմանաց մէջ բովանդակէր. որ այսպէս չէ. ներկայ կեանքս փորձ մի է. իսկ փոխարինութիւնն հանդերձեալ կենաց պահուած է։

Բ. Բարոյական չարով կը հասկցուի Աստուծոյ դէմ եղած նախատինքն, զանցառութիւնն աստուածային օրինաց և միով բանիւ մեղքն։ Աչի բերան այնպէս կե-

ռևի թէ մեղքն բոլորովին խանգարումն ըլ-
լայ տեսչութեանն Աստուծոյ. վասն զի
Աստուած կուզէ մարդուս վախճանն ըլլալ,
ուր ընդ հակառակն մարդս մեղօք իրեն
վախճան կը դնէ զարարածս։ — Եւ սակայն
Աստուած իր սահմանած կարգն պիտի կա-
տարէ։ Մարդս մեղօք չճանչնար և չուզեր
զԱստուած որպէս գերագոյն բարի, և կամի
ստեղծուած բարի մի որպէս բարի անհուն
և անվախճան։ Եւ որովհետև չկամեցաւ
զԱստուած՝ պիտի չունենայ։ Բայց Աս-
տուած մնայ նոյնպէս գերագոյն բարի.
արդ զԱստուած կորուսանելով՝ անզեղջ
մեղաւորն կորուսանէ զգերագոյն բարին.
և անով ահաւասիկ վերջի աստիճան թը-
շուառութեան կը հասնի, և վերջապէս կը
ստիպուի ճանչնալու թէ Աստուած միայն
է գերագոյն բարին. այսպէս մարդս կա-
մայ և ակամայ կընծայէ Աստուծոյ անար
ընկած պատիւն։

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԻԲ. Յաղագս զանազան պատճառաց գործոց մերոց։

Բարոյախօսութիւնն կամ բարոյականն է գիտութիւն բարոյից։ — Բարոյք են եզանակք կենաց եւ գործելոյ։ — Այսպէս բարոյախօսութիւնն է մասն այն իմաստասիրութեան որ ուսուցանէ բարւոք կեալ եւ գործել։

Պատճառ կըսուի այն իրն որ որոշողութիւն մի ընել կուտայ գործելու։ — Մեր գործոց մերոց կրնան երեք գլխոյ վերածուիլ հաճոյն, օգտակարն եւ համեստն։ — Հաճոյն այն է զոր կախորժինք. օգտակարն՝ որ շահաւոր է. եւ համեստն՝ որ պատշաճ է։

Բարեկարգ մարդ մի ուրիշ բան չփնտռեր՝ բայց զայն որ պատշաճ է, եւ օգտակար զայն միայն կը համարի՝ որով կրնայ պատշաճն ունենալ, եւ հաճոյ զայն բանն

մինակ կը սեպէ՝ որ պատշաճին համաձայն է։ Այդ բարին միայն է պատշաճն. և բարին այն միայն է՝ որ կը վերաբերի առ բարին գերագոյն, առ բարին բացարձակ և անհուն՝ որ է Աստուած։

Դժբաղդաբար շատ մարդիկ զայնս միայն կը խնդրեն՝ որ զգայութեանց հաճոյ են, և որոնք որ հարստութիւնն ու նիւթական բարիքն կը շատցնեն. և ռամիկն ցնորամիտ և երազայոյս կը համարի զանոնք որոնք պատշաճն միայն կը փնտռեն և ինչ որ ուղղամտութեան համաձայն է։

Այս ուրեմն երեք պատճառք կամ շարժառիթք կան գործոց մերոց. զուարճութիւնն զգայական կամ հաճոյն, շահն նիւթական կամ օգտակարն, և բարին գերագոյն կամ համեստն։ Համեստն, պատիւն, պատուաւորն նոյնանիշ բառեր են՝ որ կը ցուցնեն զայն ինչ որով մարդս կը պատուի բարձրանալով. և այն որ զմարդ ինքն իրմէ վեր կը բարձրացնէ՝ զանիկայ կը պատուէ։ Բայց մարդէս վեր Աստուած միայն է. ապա մարդս ուրիշ կերպով չկրնար բարձրանալ՝ բայց եթէ առ Աստուած վերանալով. և այսպէս մարդուս համար հաճեան ու պատիւն ուրիշ բան չէ՝ բայց եթէ առ Աստուած վերածել իր անձն, իր գործերն, և իր բովանդակ կեանքն։

ԻԳ. Յաղագս բարոյական գիտակցութեան կամ խղճի։ — Խոհր բարոյ և չարի։ — Յաղագս պարտուց և առաքինութեան։

Ա. Գիտակցութիւն բարոյական. Ինչպէս որ ասինք՝ գիտակցութիւնն ներքին զգայութեան վրայ հաստատեալ է, և ընդարձակ մտքով առնելով՝ կը ցուցնէ զայն գիտութիւնն որ ունինք 'ի ներքս 'ի մեզ անցածներուն վրայ։

Իսկ բարոյական գիտակցութիւնն է զգայումն այն ներքին՝ որով մարդ անձամբ անձին վկայէ ըրած գործոյն բարի կամ չար ըլլալուն. կամ գատաստան մի է որով ճանաչեմք թէ այս ինչ գործ բարի է կամ չար։ Այս կարողութիւնս բարոյականի մէջ մասնաւոր անուամբ խիղճ կանուանեմք։

Ապա խիղճն ա. հրամայէ, արգելու կամ ներէ. բ. վկայէ. գ. ամբաստանէ կամ գովէ։ — Հրամայէ, արգելու կամ ներէ գործել՝ յորժամ յառաջ քան զգործն՝ ցուցանէ զնոյն բարի, չար կամ անզանազան ըստ ինքեան։ — Վկայէ՝ յորժամ յետ գործոյն ճանաչէ պարզապէս եթէ այս ինչ գործ գործեցաւ՝ առանց անոր բարոյական բնութիւնն հաստատելու։ — Ամբաստանէ կամ գովէ՝ յորժամ գործն հաստատեալ գոլով՝ վճիռ հատանէ թէ արդեօք բարի՞ էր թէ չար։

Բարոյական գիտակցութեան կը վերաբերի բարոյական զգացումն, որ ուրիշ բան չէ՝ բայց եթէ գոհութիւնն կամ վիշտն զոր կրէ հոգին յետ բարի կամ չար գործ մի ընելուն։ Այս զգացումս յառաջ կու գայ 'ի գիտակցութենէ, մանաւանդ թէ 'ի բարոյական դատաստանէ, զոր գիտակցութիւնն կտրէ գործոյ մի բարութեան կամ չարութեան վրայ։

Իսկ խայթ կըսուի այն վշտալից զգացումն զոր զգամք զկնի չար գործոյ։

Բ. Խտիր բարւոյ եւ չարի. Բարին այն է՝ որ պատշաճ է. իսկ չարն այն՝ որ անպատշաճ է։ — Միայն գերագոյն ու անհուն բարին է՝ որ ամենուն բացարձակապէս կը պատշաճի. և կերպով մի չկրնար չպատշաճիլ։ Իսկ արդ այս բարիս պարզապէս վերացում մի չէ, և չկրնար ըլլալ. այլ իրական ինչ է և գոյացական՝ որ է անհուն էակն, այսինքն Աստուած։ Այս այսպէս հաստատեալ՝ ամենայն ինչ որ դիմէ առ Աստուած՝ այնու իսկ դիմէ առ բարին. և պատշաճ ըլլալուն՝ ինքն իսկ բարին է. իսկ այն որ անջատէ յԱստուծոյ՝ անջատէ և 'ի բարւոյ, և այս իսկ է չարն։

Այսպէս է ուրեմն խտիրն բարւոյ և չարի. ամենայն ինչ որ յանգի յԱստուած մի և միակ բարին գերագոյն՝ է նոյն իսկ բարին. և ամենայն ինչ որ անջատէ յԱստուծոյ մի և միակ բարին գերագոյն՝ է նոյն ինքն չարն։ — Բարւոյ և չարի խտիրն ցու-

ցանի նաև 'ի ներքին և 'ի հասարակաց ըզ-
գացութենէ։

Ա. Ի ներքին զգացուցանեն. Ամեն մարդ
գիտէ թէ զոն գործք բարիք և գործք չարք.
և զի են գործք՝ զորս բանն կը հրամայէ,
և այլք զորս կարգելու։ Բաւական է խղճի
ձկայութիւնն հարցնել՝ որ չդադրիր երբէք
գործէ մի առաջ կամ՝ եան անոր բարոյա-
կան բարութեանն կամ չարութեանն ազդ-
արար ըլլալու։ Իսկ ոչ որ խղճի ձայնն
կարհամարհէ՝ խայթից աղաղակին չկրնար
խուլ ըլլալ։

Բ. Ի հասարակաց զգացուցանեն. Ամ-
ենայն ազգինա և յամենայն ժամանակս ո-
մանք 'ի գործոց պարտաւորիչ համարուած
են, և այլք արգելեալք. առջիններուն
մէջ են իբրև գործք բարիք՝ պաշտօն տա-
նել Աստուծոյ, պատուել զծնողս, յան-
ձանձել զթշուառացեալս և այլն. և իբրև
չար գործք դատապարտեալ են հայհոյու-
թիւնն, մարդասպանութիւնն, անառա-
կութիւն, գողութիւն, ստութիւն և այլն։
— Արդ միակ բաւական պատճառ մարդ-
կանց մէջ եղած տիեզերական միաձայնու-
թեան՝ է բացայայտութիւնն ճշմարտու-
թեան։ Ապա խտիրն 'ի մէջ բարւոյ և չա-
րի իրական ինչ է։

Գ. Պարտ եւ առաքինութիւն. Պարտն այն
է որում 'ի բանէ ստիպեալ եմք. որ է բըռ-
նադատութիւն ընդունելոյ զգործս ինչ, և
մերժելոյ զայլս. բռնադատութիւն գործե-

լոյ այսպէս կամ այնպէս, բռնադատութիւն գործելոյ զբարին, կամ վերջապէս վերաբերելոյ զամենայն զգործս մեր առ բարին գերագոյն որ է Աստուած, և չառնել ինչ բնաւ որ հեռայնէ զմեզ անտի։

Իսկ առաքինութիւնն է սովորութիւնն կատարելոյ զպարտս. բնական կամ սահմանեալ յարմարութիւն մի՝ որ տայ մեզ գործել ըստ թելադրութեան բանին. կամ թէ ասենք հոգւոյ հաստատ և անշարժ պատրաստականութիւնն՝ որ մղէ զմեզ գործել զբարին և խորշիլ 'ի չարէ։

ԻԴ. Յաղագս արդեանց և ապարդեանց, պատժոց և վարձուց, վաշխրացման բարոյականի, վախճանի մարդոյ և անմահութեան հոգւոյ։

Արդիւնքն են իրաւունք զոր իւրաքանչիւր ոք ունի ընդունելոյ զբարին փոխան բարեաց գործեցելոց. իսկ ընդհակառակն ապարդիւնք են իրաւունք պետին՝ հատուցանել չարիս փոխանակ չարեաց գործելոյ։ — Շատ անգամ արդիւնք ասելով երկու իմաստն ալ մէկտեղ կիմացուի, և շատ անգամ գործն և իրաւունքն 'ի միասին կը ցուցնէ, այսինքն որ արժանի է վարձուց կամ պատժոց։

Վարձն է բարին սահմանեալ վասն արդեանց այսինքն բարի գործոց. իսկ պատիժն է չարն սահմանեալ վասն ապարդեանց՝ այսինքն չար գործոց։

Վաւերացումն այն է՝ որ օրինաց պահպանութիւնն կապահովցնէ, և ուրիշ բան չէ՝ բայց եթէ վարձքն կամ պատիժն որում կարժանաւորի մարդ օրէնքն պահելով կամ բռնաբարելով։

Բարոյական օրէնք պէտք է որ այս վաւերացումն ունենան։ — Ուստի պէտք է որ այս օրէնքս պատժական ըլլայ. վասն զի ով յանձն կառնու պահել զանիկայ՝ եթէ ապահով չըլլայ բարիք մի ընդունելու՝ որով գոնէ իր օրինաց պահպանութեան համար ըրած նուիրումն փոխարէն մի ունենայ։ Եւ ով կը վախէ բռնաբարելու զօրէնս՝ եթէ վատահ չըլլայ թէ պատիժ մի կայ այն զանցառութեան ծայրն գոնեա հաւասար այն նեղութեան՝ որ օրինաց պահպանութիւնն մեզմէ կը պահանջէ, և օրէնքն կը սպառնան։

Բայց ո՞րն է այս վաւերացումս. ասիկայ ուրիշ բան չկրնար ըլլալ՝ բայց եթէ այս կեանքէս դուրս հանդերձեալ կենաց մի մէջ՝ յաւիտենական երջանկութիւն մի կամ թշուառութիւն։

Վախճան մարդոյ ըսելով կը հասկցուի այն վիճակն որ յապագայս պիտի ունենայ, այն վերջն որուն համար կապրի, և այն ծրագիրն զոր Աստուած ունեցած է՝ զանիկայ ստեղծած ժամանակ։

Անտարակոյս մարդս վախճան մի ունի. Աստուած գերագոյն իմաստութիւն ըլլալով՝ առանց նպատակի գործ մի չկրնար ը-

նել. ապա մարդս ոչնչի համար ստեղծած չկրնար ըլլալ՝ այլ վերջ մի դիտած է՝ անոր շնորհած կարողութեանց համեմատ՝ որով զինքն ճոխացուցած է։

Այս վախճանս կրնանք իմանալ նոյն իսկ մարդուս բնութենէն և անոր սեպհական կարողութիւններէն։ — Մարդս երեւելի աշխարհիս միւս էակներէն կը զանազանի և զանոնք գերազանցէ երկու կարողութեամբ, որ են իմացողութիւն և կամեցողութիւն։ — Իմացողութիւնն կարող է ճանաչել զանհուն և զյաւիտենական ճշմարիտն։ — Եւ կամեցողութիւնն կարող է կամել զանհուն և զյաւիտենական բարին։ — Ապա առանց ճանաչելոյ և վայելելոյ զանհունն և զյաւիտենականն՝ մարդս չկրնար ըլլալ կատարեալ և երջանիկ՝ որչափ որ իր բնութիւնն կը պահանջէ։ — Եւ սակայն Աստուած միայն է անհուն և յաւիտենական ճշմարիտն ու բարին։ — Ապա ուրեմն մարդս ստեղծուեցաւ և կեայ առ 'ի ճանաչել և սիրել զԱստուած։ Այս է իր վախճանն։ — Ասկէ կը հետևի անմահութիւնն հոգւոյ։

Հոգին է որ ճանաչէ և կամի 'ի մեզ։ — Անմահութիւնն է որով հոգին չկրնար դադարել 'ի գոլոյ և 'ի կելոյ։ — Եւ ասոր ապացոյցներն են Ա. Նոյն իսկ հոգւոյն բնութիւնն. Բ. Անոր վերջն կամ վախճանն։

Ա. Նոյն իսկ հոգւոյն բնութիւնն. Հոգին է աննիւթ այսինքն պարզ և զարծող.

արդ որ ինչ պարզ է՝ չկրնար դադարել 'ի գոլոյ. և որ ինչ գործող է՝ չկրնար դադարել 'ի կելոյ։

Ա. Պարզ ըլլալով չկրնար կորնչիլ. և ինչպէս կրնայ կորնչիլ

ա. ապականութեամբ և մասանց քայքայմամբ։ Սակայն մասունք չունի։

բ. ոչնչանալով։ Սակայն ո՞վ պիտի ոչընչացնէ զինքն. արարածն թէ արարիչն։ — Արարածն չկրնար։ Վասն զի արարածոց ամեն գործունէութիւնն ուրիշ բան չէ բայց եթէ նիւթեղէն էակացն՝ շարժումն, իսկ հոգեղէն էակացն՝ շարժումէ զատ ճանաչողութիւն և կամք։ — Իսկ արդ շարժումն տեղւոջէ 'ի տեղի՝ միայն կը փոխէ մղումն ընդունող էակն՝ չէ թէ զանի կը փճացնէ։ — Իսկ ճանաչողութիւնն և կամքն՝ ճանաչողէն և կամեցողէն դուրս արդասիք մի յառաջ չբերեր, վասն զի յարակայ այսինքն գործողին մէջ մնացող գործեր են։ — Սոեղծեալ հոգիք զիս ճանչնան թէ անգիտանան, իմ վրաս խորհին թէ մոռանան, զիս սիրեն թէ ատեն՝ իմ գոյութեանս վրայ առաւելութիւն կամ նուազութիւն մի չըլլար։

Անտարակոյս Արարիչն կրնայ ոչնչացընել պարզ էակ մի. բայց մենք քիչ ատենէն պիտի ցուցնենք թէ Աստուած չկրնար ոչնչացնել զմարդկային հոգին։ Ա. ապ այժմ ցուցուցցաւ թէ ստեղծեալ զօրութիւն մի չկրնար մերկացնել զհոգին իր գոյութե-

նէն։ — Հիմա տեսանենք թէ արդեօք հոգին կրնայ զիւր կեանս կորանցնել։

Բ. Հոգւոյն կեանքն կամ գործունէութիւնն զլխաւորապէս ճանաչելոյ և կամելոյ վրայ հաստատուած է։ Սրդ հոգւոյն կեանքն կտրելու համար՝ պէտք է կամ վերցընել անկէց նոյն ինքն զկարողութիւն ճանաչելոյ և կամելոյ. և կամ անջատել հոգին յամենայն իմացական առարկայից։

Սակայն ա. կարողութիւնքն ճանաչելոյ և կամելոյ, իմացողութիւնն և կամեցողութիւնն՝ հոգւոյն մասունքն չեն՝ որ կարենանք անկէց անջատել, այլ իրէութեանն բացարձակապէս անբաժանելի սեպհականութիւններն են։ Եւ երբ չենք կրնար ոչընչացնել հոգին՝ նոքին իսկ չենք կարող ա՛նոր ճանաչելոյ և կամելոյ զօրութիւնն վերցնել։

բ. Եթէ զոնեա կարելի ըլլար այնպէս ընել որ հոգին առարկայ մի չունենար ճանչնալու և կամելու, այն ատեն իր իմացողութիւնն և կամեցողութիւնն չկրնալով բանեցնել՝ մեռելութեան վիճակի մի կը հասնէր։ Բայց եկ տես որ թէպէտ հոգին ամեն ստեղծեալ առարկայէ ալ անջատուի, միշտ և ամեն տեղ կրկին առարկայք կը մնան իրեն ճանաչելոյ և կամելոյ՝ որ են ինքն իսկ և Աստուած։ — Ինքն իսկ. հոգին որոմհետև պարզ է՝ չկրնար ինքն յինքենէ բաժնուիլ. այլ միշտ ինքն ինքեան ներկայ է. ապա չկայ ստեղծական զօրու-

թիւն մի որ կարենայ արգելուլ զնա՝ի ճանաչելոյ և՝ի կամելոյ զինքն։ — Աստուած. Աստուած անսահման ըլլալով՝ ամեն տեղ ներկայ է. և արարիչ և պահպանիչ ըլլալով՝ յամենայն ստեղծեալ էակս ներկայ է. ապա հոգին միշտ և յամենայն տեղիս կըրնայ ճանաչել և կամել զԱստուած։

Ապա այնպէս ինն կազմեալ է հոգին՝ զի չկրնար դադարել՝ի գոլոյ և՝ի կելոյ։ Ապա ուրեմն իր բնութիւնքն անմահ է։

Բ. Հոգւոյն վերջն կամ վախճանն. Հիմա կը մնայ քննել եթէ գոնէ Աստուած չինկրնար զանիկայ ոչնչացնել։ Որուն պատասխան կուտանք թէ՝ի պատճառս վախճանին որ վասն ստեղծեալ է զնա Աստուած չկրնար մարդկային հոգին ոչնչացընել։ Վասն զի

Հոգին ունի զգաղափար և զտենչ առանձնուն և յաւիտենական բարին։ Արդ եթէ հոգին դադարեր՝ի գոլոյ՝ այս գաղափարս և այս տենչս անօգուտ տեղն տրուած կըլլար անոր. և ուրիշ բանի չէր գար՝ բայց եթէ զանիկայ պատրելու և չարչարելու։ — Ապա ուրեմն եթէ Աստուած ոչնչացներ զհոգին՝ թերի պիտի գտանէր յիւրում իմաստութեան՝ որ անօգուտ բան մի ընելն անոր կարգելու, յիւրում ճշմարտութեան՝ որ չներեր անոր խաբելու, յիւրում բարութեան՝ որ արգելու զնա՝ի տանջելոյ անմեղ արարած մի ցնորական տենչանօք, վերջապէս յիւրում արդարութեան՝ որ

չկրնար մի և նոյն ոչնչութեան մէջ ընկըղմել չարն ու բարին, զայն որ բոլոր արտիւ զինքն վնասեր է՝ և զայն որ զինքն արհամարհեր ու մերժեր է։

Այս վերջի ապացուցէս յառաջ կուգայ ուրիշ մալ որ կառնուի 'ի բարեաց և 'ի չարեաց որք այս կենացս մէջ հաւասարապէս անկանին բարի և չար մարդկանց վրայ։ Վասն զի Աստուծոյ իմաստութիւնն, ճշմարտութիւնն, արդարութիւնն և բարութիւնն յայտնապէս կը պահանջեն որ և փոխարինութիւն մի ըլլայ։ Իսկ արդ այս փոխարինութիւնս այս կենացս մէջ չկատարուիր՝ ապա հարկ է որ ուրիշ կենաց մէջ կատարուի։

Վերջապէս մարդիկ ինչպէս որ համաձայն են Աստուծոյ գոյութեանն վրայ՝ այսպէս նաև միաձայն կը խոստովանին հոգւոյ անմահութիւնն և հանդերձեալ կեանքն։

Մարդուս հոգւոյն անմահութեան դէմ զլխաւոր առարկութիւն կը բերեն՝ անզեղջ մեզաւորին մահն. որովհետև իր վախճանին չհասաւ, կըսեն, և ուզեց որ Աստուած զինքն ոչնչացնէ, ապա պէտք է որ ոչնչանայ։ — Այլ չէ՝ կըսէ միւսն, պէտք է որ կեայ, և կեայ յաւիտեան զրկեալ յԱստուծոյ, որպէս զի այսպէսով ստիպուի ճանչնալու թէ Աստուած և Աստուած միայն է զերբնական լոյսն։

ԻԵ. Յաղագս բաժանման պարտուց։ Պարտք մարդոյ առ Աստուած, առ անձն, և առ նմանսն։

Պարտք մարդոյ երեք դաս կը բաժնուին. Պարտք առ Աստուած, Պարտք առ անձն, Պարտք առ ընկերս կամ առ նմանսն։

Պարտք առ Աստուած մէկի կրնան վերադրուիլ՝ որ է պաշտօնն։ — Պաշտօնն է պատիւն՝ զոր պարտի մարդ ընծայել Աստուծոյ, և չորս գործ կը բովանդակէ, և պէտք է ներքին, արտաքին և ընկերական ըլլայ։

Ա. Պաշտաման չորս գլխաւոր գործերն են Ա. Երկրպագութիւն՝ որով կը ճանչնամք զգերագանցութիւն և զՍեծվայելչութիւնն Աստուծոյ և իր գերագոյն իշխանութիւնն մեր վրայ։ — Բ. Շնորհակալութիւն՝ որով երախտագէտ կըլլամք Աստուծոյ բարերարութեանցն։ — Գ. Հայցուած թողութեան յանցանացն զորս գործեցաք։ — Դ. Եւ աղօթք որով խնդրեմք յԱստուծոյ զօգնութիւնս որոց պէտս ունիմք։

Առաջին երից գործոց պարտաւորութիւնն ցուցնելու պէտք չկայ, քանզի յայտնիւն։ Իսկ աղօթից կարևորութիւնն յայտնի է յայն հանապազորդ պիտոյից զորս ունիմք. և օրինաւորութիւն նորին հաստատեալ է Աստուծոյ բարութեան և ամենակարողութեան վրայ. որով կրնայ և կամի լսել մեզ։

Այս բանիս առարկութիւն չկրնար ըլլալ՝ նախախնամութեան և կամ բնութեան օրինաց անիրաւութիւն։ — Վասն զի իմ աղօթքս 'ի յաւիտենից ծանօթ է Աստուծոյ, և իմ միւս ազատ գործոցս պէս՝ աղօթքս ալ աստուածային ծրագրին մէջ նշանակուած է։ Ապա աղօթէ անելիւղ. վասն զի քու աղօթքդ աստուածային նախախնամութեան սահմանածներն չկրնար եղծանել, ինչպէս նաև քու ազատութեամբ ըրած գործերդ։ — Իսկ բնութեան օրինաց գալով՝ Աստուած կարող է լսել քու աղօթիցդ՝ առանց այն օրէնքն գադրեցնելու. ինչպէս որ դու ալ առանց աշխարհիս օրէնքն խանգարելու՝ մանաւանդ թէ անոր հետևելով՝ հնարք կը գտնես քեզմէ գթութիւն խնդրողին օգնութիւն ընելու. ապա Աստուած ալիտի չկարենայ նոյն բանն ընել։ Բայց թէ որ պէտք ալ ըլլայ առ սակաւ մի ժամանակ նիւթեղէն զօրութեան մի արգասիքն գադրեցնել, ինչպէս կրակի և ջրոյ, և կամ առանց այս զօրութեան ձեռնտուութեանն այնպիսի արգասիք մէջ բերել՝ որ սովորաբար անկէ յառաջ կուգան, սակայն և յայնժամ մուածելու է որ արարիչն հզօր է քան զարարածն, և սա առանց անոր բանի մի կարող չէ, այլ Աստուծոյ ձեռնտուութեանը կարօտ։ — Պաշտաման գերագանց գործն զոհ կամ պատարագն է, որ է նուիրումն Աստուծոյ

զգալի ինչ իրի առ՝ի ճանաչել զպերագոյն իշխանութիւն նորա։

Բ. Պաշտօնն երեք տեսակ կը բաժնուի. ներքին, արտաքին, հրապարակական կամ ընկերական։

Պաշտօնն պիտի ըլլայ ա. ներքին կամ հոգևոր՝ այսինքն հոգիէն բղխած՝ ապա թէ ոչ անկեղծ չըլլար։ Մանաւանդ որ մենք պէտք է նուիրենք Աստուծոյ զյարգանս հոգւոյս մերոյ և ամենայն կարողութեանց նորա։

բ. Պէտք է ըլլայ արտաքին կամ զգալի. վասն զի պէտք է որ յարգանք ընծայենք Աստուծոյ ոչ միայն վասն հոգւոյս մերոյ, այլ և վասն մարմնոյս և զգացութեանց զոր իրմէ ընդունած ենք։ Մանաւանդ որ արդէն մեր բնութեան մէջ ալ կայ՝ որ հոգւոյ գործողութեանց մէջ առանց զգայարանաց գործակցութեանը չենք կարող երկար դիմանալ, և չենք կրնար երկայն ատեն պահել՝ի մեզ այն խորհուրդներն և տենչքն որ արծարծին՝ի մեզ ատակապէս։ — Ապա ուրեմն արտաքին կամ զգալի պաշտօնն միջոց և միանգամայն նշան մի է ներքինին։

գ. Վերջապէս պաշտօնն պէտք է ըլլայ ընկերական կամ հրապարակական, այսինքն ընծայեալ Աստուծոյ յանուն ընկերութեան։ Վասն զի Աստուած ինքն ստեղծած է զմեզ ընկերական յարմարութեամբք և կարօտութեամբք. ապա սկզբնապատ-

ճառ է այն միութեան որ մարդկանց մէջ հաստատուած է ընկերութիւն անուամբ. և այս ընկերութեամբ շատ աւելի կարողութիւն ունիմք՝ քան թէ առանձինն ապրելով։ Բայց պէտք է որ առ Աստուած վերածեմք ինչ որ եմք, ինչ որ ունիմք և ինչ որ կարեմք. ապա պէտք է որ պատուեմք զԱստուած ընկերական պաշտամամբ։ Բայց ասկէ ընկերական պաշտօնն՝ արտաքին կամ զգալի պաշտաման պէս՝ նշան և հետևանք մի է ներքին կամ հոգևոր պաշտաման, և միջոց մի զանիկայ պահպանելու։

Պարտք առ անձն. Մարդս ուրիշ բանի համար եղած չէ՝ բայց եթէ զԱստուած փառաբանելու և անոր ծառայելու համար. ապա պարտի ա. պահել զանձն, և բ. կատարելագործել զինքն. և միայնակ ըլլալով՝ ի հոգւոյ և՝ ի մարմնոյ՝ պիտի պահէ և կատարելագործէ իր հոգին և անոր կարողութիւններն՝ զիմացողութիւնն և զկամեցողութիւնն։

Իմացողութիւնն պահպանի և կատարելագործի գիտութեամբ։ Գիտութեանց մէջ մէկը կայ որ ամենուն կարևոր է՝ հեռուապէս և պարտաւորիչ, այն գիտութիւնն որ կը պատուիրէ զծառայութիւնն Աստուծոյ. իսկ միւս գիտութիւնք կարևորն են մանաւոր պարագայից համեմատ։ — Կամեցողութիւնն պահպանի և կատարելագործի առաքինութեամբ՝ որ զմարդ բուսականաց Աստուծոյ կընծայէ։

Մարմնոյ առողջութիւնն ու կատարելութիւնն ալ յայտմ է՝ որ հոգւոյն հպատակ ըլլայ՝ որուն յարմար գործի և հաւատարիմ ընկեր պէտք է ըլլայ։ — Սակէց կը հետևի որ մարդ իրաւունք չունի ա. ինքզինքն զրկելու բանի և ազատութեան գործածութենէն. վասն զի ասով ինքզինքն անկարող կընէ զՍատուած փառաբանելու և անոր ծառայելու. բ. նոյն պատճառաւ չկրնար ինքն իր կեանքը վերցնել։ — Սպասուելեն գինուորութիւնն, անձնասպանութիւնն, ինչպէս նաև մենամարտութիւնն՝ որով մարդ առանց արդար ու բանաւոր պատճառի իր կեանքն վտանգի կը դնէ՝ այնպիսի ոճիրներ են զորս բարոյական օրէնք կարգելուն։

Պարտք առ նմանիս կրնան երկուքի վերածուիլ՝ որ են արդարութիւն և սէր։ Արդարութիւն՝ որուն հանրական կանոնն է Մի ըներ ուրիշի այն բանն՝ զոր ինչ չես ուզեր որ քեզ ընեն։ Սմենունիրեն եղածը տուր։ — Գլխաւորապէս չորս իրաւունք կան՝ զորս մեծարել կը պատուիրէ արդարութիւնն ա. կեանք, (Ի հինգերորդ պատուիրանի) բ. պատիւ մարմնոյ, (Ի վեցերորդ և յիններորդ) գ. ստացուածք, (յեօթներորդ և Ի տասներորդ) և դ. բարի անուն (յութերորդ)։ — Իսկ Սիրոյ կանոնն է Ըրէ ուրիշի այն բանն՝ զոր կուզես որ քեզ ընեն։ — Սիրոյ պարտուց կը վերաբերին ներումն անիրաւութեանց, ողորմութիւն, եղբայրական ուղղութիւն։

Մեր նմանեաց մէջ ոմանք մեզ հաւասար են՝ որոնց ունեցած պարտքերնիս ցուցինք. ոմանք ալ մեզմէ վեր են կամ վար, մեծաւորք կամ հպատակք։ Այս մեծաւորաց և հպատակաց իրարու յարաբերութիւնն երկու տեսակ ընկերութենէ առաջ կու գայ՝ որ են գերդաստան և պետութիւն, որք և երկուց կողմանց վրայ ալ մասնաւոր պարտքեր կը դնեն։

Պարտք առ գերդաստան. Գերդաստանք կամ ընտանիք կը բաղկանան 'ի ծնողաց և յորդւոց։ — Ծնողք պարտական են տալ որդւոց զբնական և զբարոյական դաստիարակութիւն, և զանուանդ կենաց մարմնոյ և հոգւոյ։ Վասն զի յիրաւի ա. Տիրոջը անկանի իր գործն կատարելագործել։ Եւ բ. Ծնողք 'ի վեր քան զամենայն մարդս պիտի դնեն՝ այնպիսի անձինք տալ աշխարհի՝ որ կարող ըլլան զԱստուած փառաբանել և անոր ծառայել. և այս խնամքէս այն ատեն պիտի դադարին՝ երբ ողջոյն կատարեալ մարդ ըլլալով՝ կարող ըլլայ ինքզինքն միայնակ ուղղել 'ի ծառայութիւն Աստուծոյ։

Իսկ որդին պարտական է իր ծնողաց՝ յարգութիւն, սէր, հնազանդութիւն և օգնութիւն ընելու։ — Յարգութիւն՝ որպէս առ սկիզբն իւր և որպէս առ ներկայացուցիչս աստուածային մեծավայելչութեան։ Սէր՝ վասն բարւոյն զոր ընդունելոյ է անոնցմէ, որոնք վասն կենացն, որուն մէջն են ա-

ամենայն բարիք զոր առանց կենաց չէին կրնար ունենալ։ Հնազանդութիւն՝ որպէս առ բնական գործիս նախախնամութեանն Աստուծոյ. բայց նախ այս հնազանդութիւնս ենթարկեալ պիտի ըլլայ այն հնազանդութեան՝ զոր պարտիմք Աստուծոյ. ուստի եթէ իրարու հակառակ ելլեն՝ հնազանդիլ պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան. երկրորդ այս հնազանդութիւնս սահման պիտի ունենայ. երբ մարդս չափահաս կըլլայ՝ յաստուածային իրաւանց ինքն իր խորհրդոց տէրէ, և իրեն անկանի ազատութեամբ ինքզինքն ուղղելու աստուածային և մարդկային օրինաց համեմատ։ Վերջապէս կուգայ օգնութիւն. վասն զի արդար է որ կենաց հետ ամենայն ինչ 'ի ծնողաց ընդունած ըլլալով՝ իրենց կարօտութեան ժամանակ անոնց օգնենք։

Պարտք առ պետութիւն. Պետութիւնն բաղկանայ յիշխողաց և յիշխեցելոց կամ յիշխանէ և 'ի հպատակաց։ Պետութեան միակ սկզբնապատճառն է պաշտպանութիւն իրաւանց իւրաքանչիւր գերդաստանի և իւրաքանչիւր անհատի։ Իսկ անմիջական և ուղիղ վախճանն է պարզապէս իր ամենայն անդամոց արտաքին և ժամանակաւոր հատարակաց բարին։ — Այս հատարակաց բարին առանց միութեան չըլլար, միութիւնն ալ առանց վերագոյն իշխանութեան մի՝ որ անկախ և հզօր պիտի ըլլայ և տէրէ հատարակութեան մէջ ձևա-

ցած կողմնակցութեանց շահերուն վրայ։ Վասն զի առանց այսպիսի իշխանութեան իւրաքանչիւր ոք միայն իր անձնական բարին կը տեսանէ, կամի և կը փնտռէ։

Սակայն կը հետևի որ իշխանն կամ իշխեցողք պարտին ա. խնդրել զբարին որ հասարակ է ամենուն, և ոչ որ իրենց յատուկ է կամ ոմանց ևեթ՝ ինչպես հասարակաց կամ այլոց առանձնաւորաց. բ. զսպել զամենայն ձեռներիցութիւն հակառակ հանրական կամ մասնաւոր շահու այնոցիկ՝ որոնց ղեկավարութիւնն յանձնուած է իրենց՝ի տեսչութենէն Աստուծոյ։

Իսկ հպատակք կամ իշխեցեալք պարտին ա. պատուել զիշխանն և զտեղակալս նորա որպէս երևեցուցիչս աստուածային մեծվայելչութեանն և պաշտօնեայս տեսչութեան նորա. բ. հնազանդել իշխանին և ղեկավարաց՝ յամենայնի որ արտաքին և ժամանակաւոր հասարակաց բարոյն կը վերաբերի. գ. ձեռնտու լինել իշխանին՝ի ձեռնարկս կարևորս վասն օգտի հասարակաց։ Այս ձեռնտուութիւնս կրնայ ըլլալ անձնական գործակցութեամբ կամ նիւթական օժանդակութեամբ, ինչպէս տուրքերն վճարելով։ Անձնական գործակցութիւնն՝ զոր հին ատեն կը խընդրէին իշխանք՝ի հպատակաց, տարակոյս չկայ որ անհամեմատ առաւել ազնուական, վսեմ և զօրաւոր էր, քան թէ պարզ նիւթական ձեռնտուութիւնն որ սակով կը

վճարուի։ — Ասոյ անոնք որ անձնական ծառայութեան պարտաւորեալ էին՝ որոնց մէջ ամենէն արդիւնաւորն զինուորական ծառայութիւնն է, իրաւամբ ազատ էին՝ ի տրոց, և հասարակաց բարւոյն առակոյ ձեռնտու ըլլալու պարտաւորութենէն. վասն զի կեանքն նուիրելն շատ աւելի կարժէ՝ քան թէ ստացուածքն։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ

Իմաստասիրութեան պատմութիւնն է անուանի իմաստասիրաց վարդապետութեանց բացատրութիւնն. զոր կրնանք երկու գլխաւոր դարերու բաժնել՝ այսինքն յառաջ և յետ Քրիստոսի։

ՆԱԽ ՔԱՆ ԶՔՐԻՍՏՈՍ պէտք է որոնել Հեբրայեցւոց, Քալդէացւոց, Հայոց և Պարսից, Եգիպտացւոց, Հնդկաց, Սինէացւոց, Յունաց և Հռովմայեցւոց իմաստասիրութիւնն. խոստովանելով որ այս վերջի երկու ազգերէս զատ՝ առջիններուն վրայ յոյժ սակաւ տեղեկութիւն ունինք։

Ա. Հեբրայեցիք. բոլոր իրենց իմաստասիրական վարդապետութիւնն ձուլուած է կրօնական վարդապետութեան հետ՝ զոր յայտնած է իրենց Մովսէս։ Ճանաչէին զմի Աստուած՝ արարիչ աշխարհի, վարձատրող բարեաց և վրէժխնդիր չարաց,

և կընդունէին զանձնութիւն և զանմահութիւն հոգւոյ։

Բ. Քաղդէացւոց առաջին իմաստունն եղաւ Զրադաշտ ժամանակակից Ներոութայ. վեհագոյն Աստուած մի կընդունէին, աշխարհս ալ իբրև անոր ծագումն, ինչպէս նաև հրեղէն տարրն. ծածկագիտութիւնն, մոգութիւնն ու աստղաբաշխութիւնն շատ ծաղկեցուցին ու հռչակաւոր շրջաններ հաստատեցին։

Գ. Հայք և Պարսիկք. առջիններն կընդունէին միոյ Աստուծոյ գոյութիւնն, հոգւոյ անմահութիւնն և հանդերձեալ կեանք, և վարձուց և պատժոց հաստատումն։ Իսկ Պարսիկք երկու ներհական սկիզբն կընդունէին բարւոյ և չարի Որմիզդ և Արհմն անունով և անոնց միջնորդ Միհր կամ Սէր։

Դ. Եգիպտացւոց իմաստասիրութիւնն ալ իրենց կրօնքէն չզատուիր. ասոնք ևս կընդունէին մէկ սկիզբն՝ ուսկից յառաջ կուգան այլ երկու սկզբունք, որոնց մէկն հայր է և միւսն մայր բոլանդակ աստեղծուածոց։

Ե. Հնդկաց իմաստասիրական վարդապետութիւնն ալ խառն է կրօնից հետ. այս կրօնքս ալ թանձր այլայլութիւն մի է նախկին յայտնութեան. իրենց դրութիւնքն լեցուն են հակասութեամբ և չափազանցութեամբ. և անոնց մէջ 'ի միասին կերևին դաղափարականութիւնն

և նիւթականութիւնն, անաստուածութիւնն և համաստուածութիւնն. այս վերջի արտաքոց կարծիքս կը տիրէ Հնդկաց իմաստասիրութեան մէջ. Պրահմա միայն ունի զգոյութիւն, և ինչ որ Պրահմա չէ՝ պարզապէս պատրանք են։

Զ. Սինեազոց իմաստասիրութեան մէջ երեք հռչակաւոր անուանք կը յիշուին Ֆոհի որ իրենց առաջին օրէնսդիրն եղած է. Լաոցէօ և Կոնֆուկիոս. սոնցմէ առջինն աւելի բնազանց է և կը սորվեցնէ զգոյութիւն Աստուծոյ և զհոգէփոխութիւն. իսկ երկրորդն աւելի բարոյախօս է և ուսուցանէ զմիութիւն Աստուծոյ, զնախախնամութիւն, զանմեղութիւն հոգւոյ և զազատութիւն. մարդուս պարտուց վրայ ալ երկայն կը խօսի՝ որոնց գլխաւորն է յարգութիւն առ ծնողս և մանաւանդ առ իշխանս։

Է. Յոյնք առաջին ազգն են՝ որոնց մէջ իմաստասիրութիւնն'ի կրօնից կը զատուի։ Յունաստանի ամենէն մեծ իմաստասէրն է Սոկրատ, որով յունական իմաստասիրութեան պատմութիւնն երկու շրջան կը բաժնուի՝ Նախ քան զՍոկրատ և Յետ Սոկրատայ։

Նախ քան զՍոկրատ եղած իմաստասիրութիւնն երեք դպրոց կը բաժնուի՝ Յոնական, Իտալական և Ելէական։

Յոնական դպրոցին հիմնադիրն է Թալէս. այս դպրոցս գլխաւորապէս կը պա-

բաւական աշխարհիս սկիզբն և բնութիւնն քննելու, և վերջապէս ճանաչէ Աստուած մի զատ 'ի տիեզերայս։

Իտալական դպրոցին գլուխն է Պիւթագորաս՝ որոնց վարդապետութեան հիմնական կէտն հոգեփոխութենէ զատ այս է թէ ամենայն ինչ ելանէ 'ի միութենէ և պարտի միւսանգամ 'ի նոյն վերադառնալ։

Եղէական դպրոցն հաստատեց Քսենոփանէս՝ որ արարչութիւնն անկարելի կը համարէր. այս դպրոցս բոլորովին տարեստական ըլլալով՝ կուսուցանէ համաստուածութիւն ամենեին նիւթական։

Այս երեք դպրոցաց հակաճառութիւններէն կը ծագի սկեպտականութիւնն. որով իմաստասիրութիւնն իմաստակաց ձեռքն խաղալիք մի կըլլայ՝ ճշմարտի և արդարոյ ամեն ծանօթութիւններն և սկզբունքն եղծանելու. և այն ատեն երևի Սոկրատ որ կը ջանայ յաղթահարելու զանոնք նոր ոճով մի, այսինքն պահանջելով որ ամեն մէկ բաներուն սահմանումն, և անանկով իրենց հակախօսութիւններն երևան կը հանէ. և մոլորութիւնն հերքելն բաւական չսեպելով՝ ճշմարտութիւնն ալ կը հաստատէ, և իրմէ առաջ եղած իմաստնոց վարդապետութեանց մէջ եղած ճըշմարտութիւններն կը տրվեցնէ Աստուծոյ, մարդու և նիւթական աշխարհիս վերայ։ Սոկրատայ վարդապետութիւնքն մէկ մի Քսենոփանէն գիտեմք՝ որ իրրև պարզ

պատմիչ զանոնք կաւանդէ, մէկ մալ Պլատոնէն՝ որ զանոնք կը զարդարէ՝ իր գաղափարներն ալ անոնց հետ խառնելով։

Յետ Սոկրատայ շատ զանազան դպրոցներ եկան՝ որոնց ամենուն աղբիւրն ալ ինքն կը սեպուի. աս դպրոցներս են ակադեմիայն, լիկէոնն, կիւնիկեանն՝ ուսկից ելաւ ստոյիկեանն, կիւրենեանն՝ յորմէ ծագեց եպիկուրեանն, մեգարեանն՝ ուսկից նորէն յառաջ եկաւ սկեպտականն։

Ա. Ակադեմիայի նախահայրն եղաւ Պլատոն՝ Սոկրատայ աշակերտաց մէջ ամենէն անուանին և հռչակաւորն. այս դպրոցս վերջապէս աղաւաղելով՝ տեսակ մի սկեպտականութիւն դարձաւ՝ որ կը համարէր թէ իմաստունն բան մի չկրնար հաստատել, կամ գոնէ իր մի չկայ ստոյգ՝ այլ ամենայն ինչ հաւանական կարծիք են։

Բ. Լիկէոնի կամ ճեմականաց հիմնադիրն եղաւ Արիստոտէլ Պլատոնի աշակերտն՝ սակայն բոլորովին անոր վարդապետութեանցն չհետևեցաւ, այլ նոր վարդապետութիւն մի ուզեց հաստատել աւելի ընդարձակութիւն և ստուգութիւն տալով բնազանցական և բարոյական ուսմանց։

Գ. Կիւնիկեան կամ շնական աղանդն հաստատեց Անտիսթենէս, որուն մէջ ամենէն անուանի իմաստասէրն Դիոգինէսն է. այս իմաստասիրաց շատերն բարոյախօս են. իրենց գլխաւոր վարդապետու-

թիւնն է արհամարհութիւն ամենայնի հաճոյից, փառաց և նոյն իսկ գիտութեանց։

Դ. Ստոյիկեանց կամ սրահականաց աղանդապետն եղաւ Զենոն՝ որ առաջ կիւնիկեան էր. ասոնց վարդապետութիւն է թէ երջանկութիւնն առաքինութեան մէջ է միայն, և չարն ախտից մէջ։

Ե. Կիւրենեան դպրոցին գլուխն է Արիստիպպոս՝ որ զերջանկութիւնն հաստատէ 'ի զգայական հեշտութիւնս։

Զ. Եպիկուրեան ըստեցաւ Եպիկուրոսի անուամբն՝ որ զսկիզբն աշխարհիս անթիւ և յաւիտենական հիւլէից պատահական հանդիպման կուտար. վերինին պէս երջանկութիւն համարեցաւ հեշտութիւնն։

Է. Մեգարեան կամ վիճաբան դպրոցն հաստատեց Եւկլիդէս՝ ոչ երկրաչափն անուանի. ասոր հետևողք կը պարծէին իբր թէ կրնան հաստատապէս պաշտպանել ուսան և իրաւն։

Է. Վերջապէս Սկեպտական աղանդն նորոգեց Պիւռոն՝ որ և շատ անուններ ունեցաւ. այս աղանդս կը համարէր թէ մարդս պարտական է ճշմարտութիւնն որոնել՝ բայց ոչ երբէք գիտէ. ուստի պէտք է ամեն բանի վրայ տարակուսիլ։

Ահաւասիկ ասոնք են յունաց իմաստասիրական դպրոցաց կամ աղանդոց գլխաւորներն, զորս այսպէս կրնանք համառօտել

Նախ քան Սոկրատ 1 Յոնիական, Թալէս

ծն. 'ի 620 Ն. Ք. - 2 Իտալական, Պիւթագորաս ծն. 580. - 3 Եղէական, Քսենոփանէս ծն. 536։

Յետ Սոկրատայ (ծն. 470). 1 Ակադեմիայ, Պլատոն ծն. 430. 2 Լիկէոն, Արիստոտէլ 384. 3 Կիւնիկեան, Անտիսթենէս 360. 4 Ստոյիկեան, Զենոն ծն. 360. 5 Կիւրենեան, Արիստիպպոս ծն. 380. 6 Եպիկուրեան, Եպիկուրոս ծն. 342. — 7 Մեգարեան, Եւկլիդէս ծն. 440. — 8 Սկեպտական, Պիւռոն ծն. 340։

Թ. Հռովմայեցիք իրենց սեպհական իմաստասիրութիւն չունին. Կիկերոն ինչ որոյնաց իմաստասիրաց մէջ լաւ բան մի կայ կը քաղէ։ — Յետ Քրիստոսի իբրև ստոյիկեան բարոյախօսք անուանի եղան Սենեկա, Եպիկտետոս և Մարկոս Աւրելիոս։

Յետ Քրիստոսի եղած իմաստասիրութեան պատմութիւնն կրնայ երեք գլխաւոր շրջաններու բաժնուիլ։ — Առաջինն 'ի ծագմանէ քրիստոնէութեան մինչև ցյարձակումն բարբարոսաց՝ զոր կրնանք կոչել Յունական-արևելեան։ Երկրորդ 'ի յարձակմանէ բարբարոսաց ցառումն Կոստանդնուպօլսոյ 'ի Տաճկաց՝ զոր կրնամք Դպրոցական անուանել։ Երրորդն յառմանէ Կոստանդնուպօլսոյ մինչև 'ի մեր ժամանակս՝ որ Աւրպի իմաստասիրութիւն կրնայ ըսուիլ։

Յունական-արևելեան իմաստասիրութեան գլխաւոր կեդրոնն եղած է Աղեքսանդրիա

եղիպտոսի, ուր կը ծաղկէր Հեթանոսական դպրոց մի՝ որուն գլխաւոր վարժապետներն էին Պլոտինոս, Պորփիւր և Պրոկլոս. և քրիստոնէական դպրոց մի՝ որուն երևելի վարդապետքն էին Կղեմէս ալէքսանդրացի և Որոգինէս։

Ալէքսանդրիոյ Հեթանոս խմաստասիրաց վախճանն էր Հասանել 'ի տեսութիւնն Աստուծոյ՝ միայն բանին զօրութեամբն և կամ 'ի ձեռն մոգութեան կամ հմայութեան։ — Իրենց ոճն էր ընտրեալն՝ որ է ինչուան այն ատեն եղած խմաստասիրութեան վարդապետութիւններն ընտրանաւ հաւաքել։

Իսկ քրիստոնեայ խմաստասիրաց վախճանն էր՝ յայտնեալ վարդապետութեան այն նիւթերն որ մարդուս մտքէն վեր չեն՝ բանիւ բացատրել. և յայտնութեամբ մեկնել այն ճշմարտութիւններն՝ զորս բանն ինքն իրմէ չէ կարող նկատել կամ նշմարել։ — Ասոնց ալ ոճն ընտրեալն է, բայց իրենց հակառակորդներէն աւելի անկեղծութեամբ և ընդարձակ դարձուած. անոր համար կընդունին բնական լոյսն և չեն մերժեր 'ի բանէ ծանուցեալ ճշմարտութիւններն. ուր որ իրենց հակառակորդ հեթանոսք աստուածաշունչ գիրքն կը մերժեն, և կամ՝ Պորփիւրի պէս միմակ հերքելու համար զանիկայ կը յիշատակեն։

Ալէքսանդրիոյ հեթանոս ընտրեալներուց հետ կը յարին կնոստիկեանք կամ գէտք՝

որ ճշմարիտ դիտութիւնն միմեակ իրենց սեպհական կը համարին։ Պղատոնի գաղափարներն կանձնաւորեն յաւիտենական կոչելով զանոնք, և երկատարր սկզբունք կը տրվեցնեն բարոյ և չարի. ասոնց մէջ անուանիներն են Բարդաձան, Մարկիոն, և Մանի։

Ազ՝ելքանդրիոյ քրիստոնեայ ընտրակա-նաց կարգն դնելու ենք Յուստինոս, Որոգինէս, Սթանաս, Գրիգոր Նազիանզացի, Ոսկեբերան, և այլք։ Իսկ արևմտեան եկեղեցւոյ մէջ Ս. Աւգոստինոս՝ որ քրիստոնէութեան ամենէն գեղեցիկ հանճարն կը համարուի, և իր գրուածոց մէջ ամբողջ իմաստասիրութիւնն կը բովանդակի, Լակտանտիոս, Ամբրոսիոս, Հերոնիմոս, և այլն։ Նոյն դպրոցէն կը սեպուին մեր թարգմանչաց շատերն ալ, և գլխաւորապէս Եզնիկ, Դաւիթ և Խորենացի։ Նոյն դպրոցի վերջի իմաստասիրական գրուածոց մէջ յիշատակութեան արժանի է Բոյեթիոսի Յաղագս միութեան գիրքն որ իմաստասիրութեան համառօտութիւն մի է. և Յովհաննու Դամասկացւոյն Ամառուծաբանութիւնն իմաստասիրական ոճով գրուած։ Ամէն վերջինս հայր կրնայ ըսուիլ Դպրոցական իմաստասիրութեան, և անոնք մի համարուիլ 'ի մէջ ընտրական յունական-արևելեան դպրոցին և վարդապետական դպրոցին միջին դարու։

Դպրոցական իմաստասիրութիւնն ուրիշ

բան չէ՝ բայց եթէ ոճով ուսումն ատ-
տուածաբանութեան և իմաստասիրու-
թեան։ Այս ոճս գլխաւորապէս կայանայ՝
որչափ կարելի է ճշդիւ բաժանել վարդա-
պետութեան նիւթերն, կարգել և շաղկա-
պել բովանդակութեան մասերն, և իւրա-
քանչիւր մասանց առաջարկութիւններն,
միացնել ինչ որ նոյն գլխոյ կը պատկա-
նի, և նիւթերն բանախօսական կարգի վեր-
ածել, պէտք եղած բառից և իրաց սահ-
մանն ճշդել, և բացայայտ և ապացուցի
անկարօտ առածներով և ստոյգ նախա-
դասութիւններով ապացուցանել զնախա-
դասութիւնս տարակուսականս։ — Եւ ո-
րովհետև շարաբանութիւնն ամենէն կա-
տարեալ և ապահով միջոցն է ապացու-
ցանելոյ՝ անոր համար դպրոցական ոճոյ
մէջ ալ շատ կը գործածուի։ Բայց այս ալ
ըսենք որ բաւական է անոնց գրքերն բա-
նանք՝ սուտ հանելու այն խօսքն իբրու թէ
դպրոցականք պարծեցած ըլլան՝ ամենայն
ինչ շարաբանութեամբ ապացուցանելու։

Դպրոցականք իր մի չեն հնարեր՝ այլ
ուսուցանեն 'ի կարգի դնելով և ցուցա-
նելով զայն՝ զոր իրենց նախորդներն հա-
ւաքեցին, և ոչ թէ հնարեցին. վասն զի
իմաստասիրութեան մէջ հնարելու բան մի
չկայ։ Ամենայն մարդ՝ այնու զի բանաւոր
է՝ բնականապէս գիտէ ինչ որ իմաստասի-
րութիւնն ուսուցանէ. քանզի իմաստասի-
րութիւնն ալ զարգացումն է բնական բա-

նի, այս ինքն բանն մարդկային գիտցածին պատճառն ինքն իրեն կու տայ, և արդէն ծանուցեալ կամ նշմարեալ ճշմարտութիւն մի իր անձին կապացուցանէ։ — Բանաւորական ճշմարտութիւնք ցըրուեալ էին 'ի գիրս Պլատոնի և անկէ առաջ եղած իմաստասիրաց մէջ։ — Արիստոտէլ զանոնք բանախօսական ճիշդ կարգի մի դրաւ։ Բայց քիչ առենէն ամեն բան խառնակեցաւ. և ալէքսանդրեան դպրոցն ալ ոչ միայն զանոնք կարգի մի չկրցաւ վերածել, այլ ևս առաւել խառնակեց։ — Նոյն ինքն Ս. Աւգոստինոս վարդապետական ոճով սորվեցնելու միտք չունենալով՝ բոլոր իմաստասիրական վարդապետութիւնք թէ և կը գտուին իր գրուածոց մէջ՝ բայց ցրուեալք և ուրիշ գաղափարով և կարգով մի սահմանեալք։ Արդ ինչպէս որ ըսինք՝ նախ և առաջ Ս. Յովհան դամասկացի և յետ այնորիկ միջին դարու դպրոցներն որ Մեծին Կարոլոսի ժամանակ բացուեցան՝ ուսման աւելի յարմար ոճով և ծրագրով մի՝ իմաստասիրութիւնն և աստուածաբանութիւնն կարգի դրին։

Միջին դարու իմաստասիրութեան ամենէն հռչակաւոր վարդապետներն եղան Ս. Անսելմոս, Ս. Թովմաս ագուինացի, Ս. Բոնաւենդուրա և Տունս Սկոտուս Ս. Թովմաս որ հրեշտակ դպրոցի և վարդապետ հրեշտակային ըսուեցաւ՝ դպրոցականին

իշխանն է. և իր Աստուածաբանութեան բովանդակութիւնն միանգամայն իմաստասիրութեան բովանդակութիւն է։

Հոս տեղս յիշելու ենք նաև անուանականաց և իրականաց մեծ վէճն, որովհետև դպրոցական շրջանին ամենէն մեծ ու երևելի դէպքն է։ — Անուանականք Ռոսկելինոսի Քոմպիէնեի կանոնիկոսին (1080) հետևութեամբ՝ կը պնդեն թէ տիեզերականք կամ հանրական գաղափարք՝ ինչպէս բոլորշիութիւնն, մարդկութիւնն, և այլն, առարկական իրականութիւն մի չունին, այլ միայն անուանք ու բառք են։ — Իսկ իրականք Ռոսկելինոսի աշակերտ Գուլիելմոս Շամբոցիի (1121) հետևելով՝ կը հաստատեն թէ տիեզերականք նոյն իսկ էութիւն են իրաց, և թէ այս էութիւնս՝ օրինակի համար բոլորշիութիւնն, մարդկութիւնն, և այլն, ամբողջապէս կը գտուի յամենայն անհատս սեռին. որով և անհատք՝ ի դիպաց զանազանին յիրեարց. օրինակ ինն մարդկութիւնն իրապէս գոյ ամբողջապէս յիւրաքանչիւր մարդում, և մարդ մի ուրիշ մարդէ դիպովք միայն զանազանի։ — Անուանականութիւնն՝ ի պարզ գաղափարականութիւն կը տանի և անկէց՝ ի համայնատուածութիւն ենթակայական. իսկ իրականութիւնն՝ ի համայնատուածութիւն առարկական։

Արդի խմաստասիրութիւն. — Խաչակրաց պատճառաւ և Կոստանդնուպօլսոյ առ-

մամբն՝ յունաց և լատինաց մէջ յարաբերութիւններ ծագեցան՝ որ իմաստասիրական նկատմամբ՝ ալեքսանդրեան դպրոցին վարդապետութեանց նորոգուելուն պատճառ եղան։ Սակայն դպրոցականութեան կարգաւորեալ յառաջադիմական շարժումն ընդհատեցաւ, որովհետև աստանդական հանճարներ՝ հեթանոս ալեքսանդրեան ընտրականութեան ցնորիք մոլորած՝ ուրիշ ճամբաներ բռնեցին և համաստուածութեան կամ սկեպտականութեան մէջ ընկան։ Այս իմաստասիրական բաղդախնդրաց մէջ երևելի եղան Պարակելսոս, Վանինի, Յորդանոս Պրունո և սկեպտական Մոնթէնը։ — Սակայն դպրոցականութիւնն իր ընթացքն կը շարունակէ։ Վերանորոգութեան ԺԵ և ԺԶ դարուց բոլոր իմաստասիրաց մէջ միայն մէկ անձ մի կայ՝ որուն գրուածքն ինչուան այս օրս մեծ յարգ ունին՝ հաւասար Ս. Թոմայի. այս անձն է դպրոցականն Սուարէզ որ միանգամայն իմաստասէր է և աստուածաբան. իր բնազանցութիւնն և. ճառն յաղագս մարդկային գործոց և. օրինաց կատարեալ և լուսաւոր ընթացք մի է բնազանցական և բարոյական իմաստասիրութեան։ Ինքն զարմանալի ողջմտութեամբ կը միացընէ նաև իրականաց և անուանականաց դէմընդդէմ կարծիքն. ինչպէս որ ըրած էր իր վարժապետն Ս. Թոմաս։

Վեչտասաներորդ դարէն սկսեալ ամե-

նէն հռչակաւոր իմաստասէրքն այս հետևեալներս են.

Ֆրանկիսկոս Պաքոն Վերուլամի (1561–1626) անգղիացի որ գրեց Նոր գործի գիտութեանց և Յաղագս պատուական գիտութեան և. զարգացման գիտութեանց գրքերն։ Իրեն վարդապետութեան նայելով Ս. Հաստատողութիւնն չկարէ գործել՝ բայց 'ի վերայ ենթակային զոր մատուցանեն նմա զգացութիւնք, և Բ. Միակ ոճ ուսումնական է գիտողութիւնն և ներածութիւն։

Կարդեսիոս (1596–1650) ֆրանկ, որուն բոլոր իմաստասիրութիւնն բովանդակի 'ի ճառն յաղագս ոձոյ, և որ կրնայ համառօտիլ այսպէս Ս. Զէ պարտ ընդունել ինչ՝ բայց որ բացայայտն իցէ։ — Բ. Կարեմ զամենայնէ երկմտել՝ բայց յայտնէ զի խորհիմ։ — Գ. Խորհիմ՝ ապա գոմ։ — Դ. Խորհիմ զանհնոյ՝ ապա անհունն գոյ։ — Ե. Եւ անհունն կամ Ստուած՝ գոլովգերագոյն ճշմարտութիւն՝ չկարէ ներել զի զգացութիւնք յանվախճանս պատրեցեն։ Ապա գոյ զգալի աշխարհս։

Բասքալ. (1623–1662) իր Խորհուրդք գրոց մէջ իմաստասիրական հատուածներ կան՝ բայց զանիկայ եղծանելու համար յառաջ կը բերէ. ըստ իրեն մարդ անկարող է ճանաչել զինքն, և չկարէ գիտել ինչ զանձնէ՝ բայց զոր Ստուած ուսուցանէ նմա։

Սփինոզա (1632–1677) հրէայ հոլանտացի, գոյացութեան կամ ենթակայութեան

նոր սահման մի տալով՝ որով զանիկայ ինքնագոյ և անստեղծ կը համարի՝ կը հետևցնէ գոյացութիւն իմն միակ և անհուն՝ որ է Աստուած. իսկ մարմինք կերպք են այս տարածեալ գոյացութեանս, և հոգիք կերպք նոյն խորհող գոյացութեան, որով կը հասնի 'ի համաստուածութիւն։

Պասքալ (1627-1704) իր Ծանօթութիւն Աստուծոյ և անձին իմաստասիրական ճառին մէջ իր հանճարոյն ուղղամտութեամբն կը միացնէ Ս. Աւգոստինոսի, Ս. Թովմայի և Կարդեսիոսի մէջ եղած ճշմարտութիւններն։

Լոք անգլիացի (1632-1704) զամենայն գաղափարս'ի զգացութեանց յառաջ եկած կը սեպէ. որով բնականապէս մեք մինակ մարմիններն կը ճանչնամք. իսկ զԱստուած և զհոգիս գերբնական յայտնութեամբ մինակ կը ճանչնամք։

Մալպրանշ (1658-1704) կուսուցանէ թէ մեք տեսանեմք զամենայն ինչ յԱստուած, և չընդունիր իմացողութեան, կամեցողութեան և մարմնոյ գործակցութիւնն այս բանիս մէջ, և յԱստուծոյ միայն յառաջ գան արգասիքն. իսկ հոգիք և մարմինք պատահական պատճառք են միայն։ Աշխարհս ալ անթերի է ըստ կարելւոյն։

Ֆեննելոն (1650-1715) գրեթէ ամբողջ և շատ նրբին իմաստասիրական ընթացք մի կաւանդէ իր ճառ յաղագս գոյութեանն Ա-

ուռծոյ և բնագրական կամակրաւի գրուա-
ծոյ մէջ։

Լայպնից գերմանացի (1646–1716) հան-
ճարեան հանճարուն գրած է Աստուածախօ-
սութիւն մի արդարացուն Աստուծոյ ընդ-
դէմ Պայլի, և Լոքի ճշակ ըստուածին դէմ
ճշակ յաղագս մարդկային հասկացողու-
թեան։ Գլխաւոր երեք ծանր մոլորութիւն-
ուն մի Ա. Անթերակարծութիւն աշխարհի,
Բ. Նիւթեղէն հիւլէից գործունէութիւն և
հոգեղինութիւն տալը, և Գ. Նախակար-
գեալ դաշնաւորութիւն՝ որով մարդուս ա-
զատութիւնն կոչնչացնէ և նախախնա-
մութիւնն պարզապէս պահպանողութեան
կը վերածէ։

Ռուսսոյ (1712–1776) և Վոլթեռ (1694-
1778) ինքզինքնին իմաստասէր կանուա-
նեն, բայց ուրիշ բան չեն բայց եթէ իմաս-
տակ.ք յայտնի թշնամիք կրօնից և ընկե-
րութեան։

Գոնտիյաք (1715–1780) գաղափարներն
այլափոխեալ զգայութիւն կը համարի։

Ռետ սկոտացի (1710–1796) ճշմար-
տութեան ուղղադատութիւնն հասարակ
զգացութեան վրայ կը հաստատէ։

Գանթ գերմանացի (1724–1804) գաղա-
փարաց առարկական իրականութիւնն
կուրանայ, և իրաքանչիւրոց կամքն տիե-
զերական օրէնք կը համարի. սակայն առ-
ջի ըստծին անհամաձայն կարծեօք կընդ-
ունի զգայութեանց առարկական իրակա-
նութիւնն։

Ֆիխթէ գերմանացի և աշակերտ Քանթի (1672–1814) իր վարժապետին սկզբունքն ինչուան ցյետին հետևութիւնն կը հասցնէ, և կը ցուցնէ թէ եսէն դուրս իրական բան մի չկայ։

Շէլինկ գերմանացի (1775–1854) ամենայն էակի և ամենայն ճանաչողութեան առաջին սկիզբն կը դնէ յէական բացարձակ որ է նոյնութիւն եսի և ոչ եսի. այս ինքն համատուածութիւն։

Հէկէլ գերմանացի աշակերտ վերնոյն (1770–1831) նոյնպէս ուսուցանէ զհամատուածութիւն. ըստ նորա 'ի բանէ ծագի գաղափարն, գաղափարն արտադրէ զնիւթեղէն աշխարհս՝ որ յինքեան և արտաքոյ մերոյ մտացս ոչինչ է, և 'ի գաղափարի մերում միայն ունի զգոյութիւն. յետոյ գաղափարն յինքն անդրադառնայ և ճանաչէ զինքն էակ միակ. որով բովանդակ իմաստասիրութիւնն Հէկելի կըլլայ հոգին զանձն Ս.ատուած համարող։

Տը Պոնալ (1753–1840) համարի թէ մարդս գաղափար չկրնար ունենալ՝ առանց բարբառոյ, և ինչ որ բարբառով մեզ հասած է՝ զայն միայն գիտեմք. որ է աստանդականութիւն։

Լամընէ (1780–1835) կը պնդէ թէ մէկ հատիկ միջոց միայն կայ ստուգութեամբ ճանչնալու՝ որ է միաձայն հաւանութիւն մարդկան։

Ս.յսօրուան օրս ողջամիտ իմաստասի-

բութենէն զատ՝ չորս իրարու ներհակ դրութիւնք կան՝ որ ամենուն միտքն կուզեն գրաւել, բայց ոչ երբէք պիտի յաջողին. այս դրութիւններս են աւանդականութիւնն և բանաւորականութիւնն, դրականութիւնն և էակականութիւնն։

Աւանդականութիւնն որ Ռոնալէ և Լամբնէէ առաջ եկաւ՝ կը համարի թէ մեք ուրիշ բան չենք կրնար գիտնալ՝ բայց ինչ որ ուսմամբ մեզ փոխանցած է։

Բանաւորականութիւնն ծագեալ ԺԸ դարու աստուածեան աղանդէն՝ զայն միայն կընդունի զոր հնար է ապացուցանել բանիւ. Ասոնցմէ ոմանք կը պնդեն թէ մարդկային բանն առանձինն կրնայ ամեն իրաց հասու ըլլալ և զանոնք մեկնել, նոյն իսկ յայտնեալ խորհուրդներն, և ա և երրորդութեան խորհուրդն։

Ասանկ ըլլալով աւանդականութիւնն և բանաւորականութիւնն երկու հակառակ ծայրերն կըլլան. որով մէկն կըսէ թէ Մարդ մինակ իր բնական բանիւն չկրնար իր մի ճանչնալ. և միւսն կըսէ թէ Մարդ մինակ իր բնական բանիւն ամենայն ինչ կրնայ ճանչնալ։

Դրականութիւնն պարզ նիւթականութիւն է՝ որ է իրական սեպել միայն այն իրն որ զգացութեանց տակ անկանի։

Էակականութեան հեղինակն Մալպրանշ է. որ ուսուցանէ թէ մեք չկարենք ինչ ճանաչել առանց գաղափարի անհուն էա-

կին որ է Աստուած՝ յոր միայն ճանաչեմք զոր ինչ ճանաչեմք։ Սանկով ըստ նոցա՝ իմացողութիւնս մեր տեսանէ զնոյն ինքն զէակն Աստուծոյ, և յաստուածային էակս յայս, և յաստուածային էութեանս անմիջնորդաբար ընդունելս՝ տեսանեմք զոր ինչ տեսանեմք։

Մէկ նկատմամբ էակականութիւնն և դրականութիւնն երկու ընդդիմակաց բեւեռք են. առաջինն միայն զԱստուած տեսանելով և զամենայն ինչ յԱստուած. և երկրորդն ոչ այլ ինչ տեսանելով բայց զհնաւորն և զզգալին։ Առջինին համար արտաքոյ Աստուծոյ իմացական իր մի չըկայ, որով և հետևապէս իրական ինչ ալ չկայ. իսկ երկրորդին համար չկայ ինչ իրական, և հետևապէս և ոչ իմացական ինչ բաց 'ի նիւթոյ։

Կան նաև ասունցմէ դուրս երկու դրութիւնք ընտրականութիւն և ոգեկանութիւն։ Ոգեկանութիւնն հաստատեալ է 'ի ճանաչել զգոյութիւն և զանանութականութիւն հոգւոյ. որ է դրականութեան հերքումն։ Իսկ ընտրականութիւնն այնչափ հին է որչափ և իմաստասիրութիւնն. և առանձինն ոչ դրութիւն է և ոչ դպրոց կամ աղանդ։ Սմեն ծանրագլուխ իմաստասէր ընտրական է. վասն զի ինչ անտեղի յանդգնութիւն կըլլար՝ եթէ առանձինն մարդ մի՝ որչափ ալ հանճարաւոր ըլլայ՝ համարէր թէ ինքն միանակ և առանց

իրմէ առջիններէն օգտուելու՝ նորէն պի-
տի կանգնէ իմաստասիրական գիտութեան
բուլանդակ շէնքն։

Եթէ ոգեկանութիւն ըսելով ուրիշ բան
չհասկցուիր բայց եթէ վարդապետութիւն
այնոցիկ՝ որ ճանաչեն զգոյութիւն միոյն
Աստուծոյ որ է հոգի աննիւթ, և զգոյու-
թիւն հոգւոյ 'ի մարդիկ, այն ատեն այս ալ
զատ դրութիւն մի կամ իմաստասիրական
առանձին դպրոց մի չձևացներ. քանզի
ամենայն ճշմարիտ իմաստասէր այս մըտ-
քով ոգեկան է և պէտք է ըլլայ։

Պլատոնի, Արիստոտելի, Ս. Աւգոստի-
նոսի և Ս. Թովմայի վարդապետութիւնքն
նոյն ըլլալով այն ողջամիտ վարդապետու-
թեանց հետ՝ զորս բուլանդակ համառօ-
տութեանս մէջ բացատրեցինք՝ հարկաւոր
չսեպեցինք անոնց վրայ կրկին տեսութիւն
մի ընելու։

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ

ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՌՕՏ ԴԱՍԱՌԱԿԱՆ

Ա. Յաղագս առարկայի իմաստասիրութեան, և այլոց գիտութեանց հետ ունեցած յարաբերութեանցն, և իր բաժանմանն. 5

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՀՈԳԵԽՕՍՈՒԹԻՒՆ

Բ. Յաղագս հոգեխօսական իրաց, և գիտակցութեան 9
Գ. Յաղագս կարողութեանց հոգւոյ. զգացողութեան, իմացողական կարողութեան և գործնականութեան . . . . . »
Դ. Յաղագս զգացողութեան, զգայարանաց, զգայութեանց և զգացմանց . . . 12
Ե. Յաղագս իմացողական կարողութեանց. Ընդունողութեան, Գիտակցութեան, Յիշողութեան, Պատկերողութեան, Դատողութեան և Բանի 16

Զ. Յաղագս գալաւիարաց ընդհանրապէս. Ծագումն և կենաց նոցին. Նախկին ծանօթութիւնք և ճշմարտութիւնք . . 18
Է. Յաղագս գործնականութեան և զանազան կենցաղնորա. Գործնականութիւն կամաւոր և ազատ. Ապացոյցք ազատութեան 30
Ը. Յաղագս Անձնաւորութեան, Անհիւթականութեան հոգւոյ. Զանազանութեան հոգւոյ և մարմնոյ և յարաբերութեանց նոցին 35

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Թ. Յաղագս Ճշմարտութեան և մոլորութեան, հաւանականութեան, բացայայտութեան, ստուգութեան . . 43
Ժ. Յաղագս վկայութեան մարդկան . . . 56
ԺԱ. Յաղագս նշանաց և բարբառոյ. և յարաբերութեանց նոցա ընդ խորհրդոյ. 62
ԺԲ. Յաղագս ոճոյ, վերլուծութեան և շարադասութեան 64
ԺԳ. Յաղագս սահմանի, բաժանման և դասաւորութեան. 65
ԺԴ. Յաղագս ոճոյ յայլ և այլ կարգս գիտութեանց 69
ԺԵ. Յաղագս հանգիտութեան, ներածութեան և արտածութեան 72
ԺԶ. Յաղագս բանավարութեան առաջարկութեան 73

ԺԷ. Յաղագս շարութեան 79
ԺԸ. Յաղագս խմաստակութեանց և մոլորութեանց 89

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՍՏՈՒԱԾԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԺԹ. Յաղագս գոյութեանն Աստուծոյ. և ապացոյցք նորին 97
Ի. Յաղագս գլխաւոր ատրոգելեացն Աստուծոյ 101
ԻԱ. Յաղագս տեսչութեան կամ նախախնամութեան։ — Հերքումն առարկութեանց 'ի բնական և 'ի բարոյական չարէ 113

ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԲԱՐՈՅԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԻԲ. Յաղագս զանազան պատճառաց գործոց մերոց 118
ԻԳ. Յաղագս բարոյական գիտակցութեան կամ խղճի։ — Խոնարհ բարւոյ և չարի։ — Յաղագս պարտուց և առաքինութեան. 120
ԻԴ. Յաղագս արդեանց և ապարդեանց, պատժոց և վարձուց, վաւերացման բարոյականի, վախճանի մարդոյ և անմահութեան հոգւոյ 123

ԻԵ. Յաղագս բաժանման պարտուց, Պարտք մարդոյ առ Աստուած, առ անձն, և առ նմանս 130

Պատմութիւն խոստաստիրութեան . . . 139